

ՅՈՁԵՖ ՄԱՐԹՎԱՐԹ

**ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԱԳՈՒՄԸ**

Հայկական ավանդությունների քննական
ուսումնասիրություն

Գերմաներենից թարգմանեց՝
Էվելինա Մակարյան

ՄԱՐՔՎԱՐԹ Յ.-Հայոց եպիսկոպոսությունների ծագումը.

Հայկական ավանդությունների քննական ուսումնասիրություն:- Աշխատությունը նվիրված է քրիստոնեության առաջին դարերի Հայաստանի եպիսկոպոսությունների ծագմանը եւ Հայ եկեղեցու ավանդությունների քննությանը: Յ. Մարքվարթը դիտարկում է պատմաաշխարհագրական ու բանասիրական բավական ծավալուն նյութ, որի իմաստավորումը, ինչպես նկատել է հրատարակիչ Ջ. Մեսինան, կարելու է ոչ միայն Հայ եկեղեցու, այլև արևելյան շատ եկեղեցիների պատմության համար:

Ենթադրվում է, որ աշխատությունը գրվել է մոտավորապես 1920 թ., երբ Հայոց պատմության ու բանասիրության խնդիրները հեղինակի ուշադրության կենտրոնում էին: Ուսումնասիրությունը, լինելով նշանավոր հայագետի վերջին գործերից մեկը, հրատարակվել է հետմահու (1932) եւ աշխույժ հետաքրքրություն է առաջացրել գիտական շրջանակներում:

Հայ եկեղեցու պատմության շատ խնդիրներ նշանավոր հայագետը քննում է պատմաաշխարհագրական ու բանասիրական հարուստ նյութի օգտագործմամբ, անելով մի շարք ուշագրավ դիտողություններ:

ԽՄԲԱ ԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Օտար գիտնականի ցանկացած անկողմնակալ աշխատություն մեր պատմութեան, գիտութեան, մշակոյթի վերաբերեալ միշտ ողջունելի է: Ողջունելի, որովհետև չկայ որևէ դէպք, փաստ, իրողութիւն, որի յիշատակումը ամօթալի կամ անցանկալի լինի մեզ համար:

Նմանատիպ մի աշխատութիւն է Եօզէֆ Մարքուարթի «Հայոց եպիսկոպոսութիւնների ծագումը» գիրքը: Ինչպէս նշում է գրքի հրատարակիչ Զուգեպէ Մեսինան. «Ձեռագիրը կազմում է 117 էջ և սկզբից մինչև վերջ ընթանում է առանց գլուխների բաժանման: Չկան գլխացանկեր: Այս հանգամանքը, ինչպէս նաև, ամբողջ նիւթի կառուցուածքի ու նոյնատիպ բառերի նկարագրութեան և թարգմանութեան տարբերութիւնները այն տպագրութիւնն են թողնում, որ աշխատանքը տպագրութեան պատրաստ չի եղել»: Սակայն իր ընդգրկումով և գիտականութեամբ հեղինակի այս աշխատությունը շատ ու շատ իբրև աւարտուն հրամցվողներից աւելին է և արժէքաւոր: Նոյնը կկամենայինք ասել նաև ծաւալի մասին, յիշելով Ա. Ֆէտի խօսքերը.

Вот эта книжка небольшая
томов премногих тяжелей.

Եւ իսկապէս բազմաթիւ հատուածներ խորին մտորումների տեղիք են տալիս: Ահա «Հայոց եպիսկոպոսութիւնների ծագումը» գրքի գերմանացի ընթերցողին, ի թիւս այլոց, ներկայացւում է Փաստտոսից քաղուած մի միջադէպ, որ փաստօրէն կարող է բնութագրական լինել մեր և մեր հարևանների դարաւոր հարաբերութիւնների կապակցութեամբ:

Վրաց և Աղուանից կողմերի կաթողիկոս Յուսիկի եղբայր Գրիգոր եպիսկոպոսը Աստու խօսքն է հասցնում օսերին: «Ասում է նրանց՝ ճանաչեցէք Աստուծուն: Լսեցին և ընկալեցին առաջին խօսքն ու հնազանդուեցին: Ապա սկսեցին դիտարկել Քրիստոսի օրէնքները, և սովորեցին, որ Աստուծուն ատելի են աւարառութիւնն ու յափշտակութիւնը, սպանութիւնը, ազահութիւնը... Ապա երբ այսպիսի բաներ լսեցին, զայրացան և ի պատասխան նրա [Գրիգորի] խօսքերի ասում են. «Եթէ չյափշտակենք, եթէ աւարառութեամբ [չզբաղուենք], եթէ ուրիշինը չառնենք, ի՞նչպէս ապրենք...»: Եօզէֆ Մարքուարթի՝ սրան կցուող ծանօթագրութիւնը, ուր համեմատութիւն է արւում նաև չինացիների՝ արևելեան թուրքերին բուդալայական ուսմունքի բերելու փորձերի հետ, կարծես գերմանացի ընթերցողին պարտադրում է մեզ համար շահեկան հետևութիւններ

անել:

Եօզէֆ Մարքուարթը ծնունել է 1864 թ. դեկտեմբերի 9-ին՝ Գերմանիայի Վիլրտենբերգ նահանգի Ռայխենբախ ավանում: Աւարտել է Թիւրինգէնի Համալսարանը: Արդէն 24 տարեկանում Մարքուարթը Գերմանիայի գիտական ազդեցիկ Հանդէսներից մեկում լոյս է ընծայում իր առաջին յօդուածը՝ միանգամից ճանաչում ստանալով իբրև ներհուն բանասէր: 1897-1900 թթ. նա Թիւրինգէնի Համալսարանի պրիւատ-դոցենտ էր: Ապա հրաւիրուում է աշխատանքի Հոլանդիա՝ Լէյդէնի Նիդերլանդական ազգագրական թանգարան: 1912 թ. Մարքուարթը Բեռլինի Համալսարանի փոխպաշտօնական (էքստրաօրդինար) ուսուցչապետ էր: 1920-ին նշանակուում է Բեռլինի Համալսարանի Համեմատական լեզուաբանութեան պաշտօնական (օրդինար) ուսուցչապետ և հիմնում Հայկական բանասիրութեան ամբիօն:

Չնայած Ե. Մարքուարթն ամբողջ կեանքն ապրել է չափազանց ծանր պայմաններում, թողել է անգնահատելիօրէն Հարուստ և, առաւել ևս, ծանրակշիռ ժառանգութիւն, հոգեւոր ու գիտական արժէքներ, որ ուղենիշ են ծառայում Հայագիտութեան, իրանագիտութեան, ասորագիտութեան, պալեոնների, իսլաւոների, չինացիների, յունագրների, վրացիների պատմութեան այլազան խնդիրները հասկանալու և լուսաբանելու համար: Նրա Հայագիտական կարեւոր աշխատութիւններից են՝ «Երանշահ» (1901), «Հայկական այբուբենի ծագման մասին՝ կապուած Մեսրոպ Մաշտոցի կենսագրութեան հետ» (1917), «Հայ ազգի ծագումը և վերականգնումը» (1919), «Հարաւային Հայաստանը և Տիգրիսի սկունքները՝ ըստ յունական և արաբական աշխարհագիրների»²:

*

**

Առանձնայատուկ է Մարքվարթի սէրը Հայաստանի և Հայերի նկատմամբ: Կարօ Մելիք-Օհանջանեանի բնորոշմամբ իր ուսուցիչ Մարքուարթը և՛ Հայագէտ էր և՛ Հայասէր: Բաւարար է յիշել, որ «Markwart»-ը նա թարգմանել էր Հայերէն՝ «Բղեշխեան» «...և ցանկացաւ կրել Հայի ազգանուն»³: Իսկ որպէս գերմանացի գրում էր. «Մեր սերունդներն անտարակոյս պէտք է ամօթից շառագունեն, երբ պատմութեան գրքերում կարդան կամ հարկադրուած լինեն իրենց հարեաններից լսել այն մասին, որ Աբդուլ Համիդը, homo sapiens-ի այդ ցցուն Հատանմուշը, Համարձակութիւն է ունեցել իրեն կոչել գերման ժողովրդի բարեկամ»⁴: Մէկ այլ կարեւոր մեջբերում. «Հայաստանն այդպէս են կոչում (Արեւելեան Անատոլիա) ներկայ պատերազմում թուրքերը, որոնք վճռական նպատակ ունեն դուրս քշել բնիկ ժողովրդին»: Մի քանի էջ յետոյ Մարքվարթն անդ-

րադառնում է Դարանաղի գաւառում գտնուող Անի ամրոցին և ասում. «Այդ վայրն էր, որ վերջին ջիհադի՝ աղետալի համաշխարհային պատերազմին ուղեկցող այդ խայտառակ երևոյթի օրերին՝ թուրքական գիշատիչների միջոցով այնքան վշտալի անուն հանեց որպէս բազմահազար հայ կանանց և երեխաների ջարդատեղի»⁵:

Հետաքրքրական են Մարքուարթի աշակերտ Կարո Մելիք-Օհանջանեանի՝ իր դասախօսի մասին պատմած դէպքերը, որ գրի է առել Ռուբէն Զարեանը.

«Կազմակերպւում է Արմին Վէգներին⁶ դասախօսութիւնը՝ հայ ժողովրդի տարագրումը Միջագետքի անապատները: Օթեակում նստած լսում է նաև յայտնի պրոֆեսորը (Յօզէֆ Մարքուարթը): Դահլիճում լինում են բաւական թուով թուրքեր: Երբ դասախօսութեան ընթացքում Վէգները մոգական լապտերի օգնութեամբ ցոյց է տալիս զարհուրելի տեսարաններ, թուրքերն աղմուկ են բարձրացնում: Աղմկում է նաև Մարքուարթի կողքին նստած մի երիտասարդ թուրք: Հայերը և գերմանացիները փորձում են զսպել թուրքերին, որպէսզի չխանգարուի դասախօսութեան ընթացքը: Մարքուարթը կարգի է հրաւիրում իր հարևան թուրքին: Վերջինս հայհոյում է նրան և փոխարէնն ստանում մի շունդալից ապտակ: Թուրք դեսպանի որդին անմիջապէս յայտնւում է ոստիկանի հետ և ասելով, թէ ով է ինքը, պահանջում է կալանքի առնել իրեն վիրաւորող հային, այսինքն Մարքուարթին: Մարքուարթը յայտնում է իր ով լինելը և պահանջում հեռացնել դասախօսութիւնը խանգարողներին, և ոստիկանը ենթարկւում է նրան»:

Ահա մէկ այլ դէպք:

Մարքուարթին է ներկայանում մի մարդ՝ հայկական հնագոյն ձեռագրերով: Նա ասում է, որ ինքը թուրք սպայ է և իր բերած ձեռագրերը վերցրել է Վանի մօտերը գտնուող մի գիւղից և կամենում է վաճառել: Իրեն ուղարկել են Մարքուարթի մօտ, որ գնահատի այդ ձեռագրերը:

Մարքուարթը վրդովւում է և դուրս անում թուրք սպային. «Հայերի դժբախտութեան վրայ ուզում էք մի վայելուչ կեանք ստեղծել ձեզ համար»: Թուրք սպան դուրս գնալիս ուզում է վերցնել ձեռագրերը, Մարքուարթը թոյլ չի տալիս. «Հայերի ձեռագրերը պէտք է հայերի մօտ լինեն»:

Ու մի քանի օրից ուղարկում է ձեռագրերը Վիեննայի Մխիթարեաններին⁷:

Ե. Մարքուարթը բազմիցս հանդէս է եկել հայ ժողովրդի պաշտպանութեամբ, մեղադրել երիտթուրքերին: Ըստ նրա՝ Սահմանադրութեան հռչակումից (1908 թ.) օսմանյան քաղաքականութեան կարգախօսը

նոյնն էր. Չլիների հայ՝ չի լիների և Հայկական հարց: Մարքուարթն առաջիններից էր, որ Հայոց ցեղասպանութիւնը դիտում էր որպէս Թուրքիայում քրիստոնէաների ոչնչացման ընդհանուր ծրագրի բաղկացուցիչ մաս: Մեծ գիտնականն աներկբայ քննադատում էր Գերմանական կառավարութեանը, որ պաշտպանում և խրախուսում էր Թուրքերի գործողութիւնները: Առաջին աշխարհամարտից յետոյ Մարքուարթը պահանջել է դատապարտել ցեղասպանութեան մեղավորներին, դրանց յանձնել Հայաստանի Հանրապետութեանը կամ միջազգային ատեանին: 1919-ին Մարքուարթը պնդում էր, որ Հայաստանին պէտք է միացնել Տաճկաստանի այն մասերը, որոնք գրաւուած էին ռուս բանակների կողմից (1917): «Բայց մի՞թէ տաճիկների ձեռքին պիտի մնան Փոքր Հայքը..., Կիլիկիան. մի՞թէ դրանք «ծոյլ ու բարբարոս թիւրքերին ձեռքը պիտի մնան: Ո՛չ, անհրաժեշտ է, որ հանդիսաւորապէս երաշխաւորուի, հայ ազգի սեփականատիրական անկապտելի իրաւունքը իր պատմական ամբողջական հայրենիքի վրայ, մէջն առնելով Փոքր Հայքն ու Կիլիկիան»: Եւ ընդհանրապէս Մարքուարթն այն համոզմանն էր, որ տաճիկները և առհասարակ Թրքութիւնը մարդկութեան և քաղաքակրթութեան թշնամիներ են:

*

**

Չնայեա՞ծ «Հայոց եպիսկոպոսութիւնների ծագումը» գրքի փոքր ծաւալին, վստահաբար կարելի է ասել, որ կատարուած աշխատանքն ահռելի է: Ինքն իր նկատմամբ խստորէն բժախնդիր հեղինակը ձգտել է համադրել հին ու նոր փաստերն ու դրանց արձագանքները, գտնել սկզբնաղբիւրները և միասնական քննութեամբ գտնել ու վեր հանել իրականը:

Յիշատակելի է նաև բառագիտական-ստուգաբանական աշխատանքը: Չխորանալով մանրամասնութիւնների մէջ՝ կկամենայինք միայն յիշել, ասենք, պանդուխտ և պանդոկ բառերի մանրակրկիտ դիտարկումը, որ, ի դէպ, յետագայում ընդունել է և Հր. Աճառեանը⁸:

Յաւալի պատահարի պատճառով (1930 թ. փետրուարի 3-ին Մարքուարթը գազահեղձ եղաւ) ներկայ գիրքը կարող էր լոյս աշխարհ չգալ, մնալ անտիպ, ինչպէս հեղինակի գուտ հայագիտական բնույթի մօտ երեք տասնեակ գրքերի մի մասը:

Սակայն թէ՛ այս, թէ՛ վերոնշեալ երեք տասնեակի անտիպ⁹ մասը կազմող գրքերի կապակցութեամբ, մենք՝ հայերս, պիտի պետական հոգածութիւն ցուցաբերէինք՝ տպագրելով պատշաճ մակարդակով, եթէ ոչ անուանի հայագէտին յարգանքի տուրք մատուցելու, ապա գոնէ մեր պատմութեան և մշակոյթի բեկորները վեր հանելու համար:

Կկամենայինք ընդգծել թարգմանիչ էվելինա Մակարեանի կատարած գործը: Թերևս կարելի է ասել, որ նա մասնագիտացել է Հայաստանին ու Հայերին նուիրուած գերմաներէն գրքերի թարգմանութեան մէջ և կարողանում է վստահօրէն կողմնորոշուել գիտական խրթին ոճում: Այստեղ՝ իւրաքանչիւր նախադասութեան մէջ, թարգմանիչը ոչ միայն մտազբաղ է եղել փնտրուած բառի ընտրութեամբ, այլև իւրաքանչիւր միտք Հայեցի դարձնելով:

Մարքուարթի «Հայոց եպիսկոպոսութիւնների ծագումը» գիրքը ոչ միայն Հայաստանի, այլև արևելեան շատ եկեղեցիների Համար անհրաժեշտ և արժէքաւոր է: Ասուածի հետ մէկտեղ աշխատութիւնում, ինչպէս Մարքուարթի բոլոր ուսումնասիրութիւններում, առկայ է աշխարհագրական, պատմական և լեզուաբանական ծավալուն նիւթ, որը կհետաքրքրի ոչ միայն Հայ եկեղեցու պատմութեամբ զբաղուողներին, այլև գիտնականների լայն շրջաններին:

Գ. Մադոյեան

¹ Կենսագրական տուեալները բերում ենք ըստ Գ. Աբգարեանի՝ «Եօզէֆ Մարկուարտ» («Պատմա-բանասիրական Հանդէս», 1965, N 2, էջ 149-164) յօդուածի, ուր հեղինակը նշում է, որ Վ. Ֆ. Մինօրսկու (*Essai de bibliographie des travaux de J. Markwart, Paris, 1930*) մատենագիտութեան մէջ ծննդեան ամիսը վրիպմամբ նշուած է յուլիսը:

Գերմանացի գիտնականի անունը մեր իրականութեան մէջ հանդիպում է երկու տառադարձութեամբ՝ Մարքուարթ և Մարկուարտ. առաւել ընդունելի ենք համարում առաջինը՝ ելնելով գերմաներէնի արտասանական առանձնայատկութիւնից:

² Տե՛ս «Հայկական Համաօտ Հանրագիտարան», Հատ. 3, Երևան, 1999:

³ Տե՛ս Գ. Աբգարեանի նշւ. յօդուածը, էջ 151:

⁴ Über das Volkstum der Komanen, Osttrkische Dialectstudien:-Abhandl. d. Gesellsch. d. Wissensch. zu Göttingen, N. F., Bd. XIII, N 1, Berlin, 1914, p. 192.

⁵ Տե՛ս Գ. Աբգարեան, նշւ. յօդուածը, էջ 151:

⁶ Վէգներ Արմին Թեօֆիլ (1886-1978) ևս մի Հայասեր գերմանացի, գրող, հրապարակախօս, իրաւագիտութեան դոկտոր: Բազմիցս Հանդէս է եկել Հայկական հարցի պաշտպանութեամբ: 1919-ին Գերմանիայի մի շարք քաղաքներում դասախօսութիւններ է կարդացել Հայկական ջարդերի մասին: Մելիք-Օհանջանեանի խօսքը Հաւանորեն հէկց դրանցից մէկի մասին է: Տե՛ս «Հայկական Համաօտ

հանրագիտարան», հատ. 4, Երևան, 2003:

⁷ Տե՛ս Ռ. Զարեան, Յուլապատում, հատ. 3, Երևան, 1981:

⁸ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արժատական բառարան, հատ. IV, Երևան, 1979:

⁹ Անտիպներից յիշատակելի են՝ «Հայաստանի պատմութիւն. Գ դարու սկզբից մինչև Ե դարու կէսերը», «Նորչիրական», «Պարսկահայք», «Բագրատունեաց ցեղաբանութիւնը Մովսէս Խորէնացու և Մար Աբասի մօտ», «Հնագոյն եկեղեցական պատմութիւն Հայոց (է դարու վերջին)» (բնագիր և մեկնութիւն), «Մանագիւրտի ժողովը», «Հայերը որպէս գաղթողներ (կօլօնիստ) Հին և միջին դարերում», «Կորիւն, Վարք սրբոյն Մաշտոցի» (թարգմանութիւն և մեկնութիւն), «Փաւստոս Բիւզանդացի» (թարգմանութիւն և մեկնութիւն) աշխատութիւնները:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ՆԱԽԱԲԱՆ

Պրոֆեսոր Յ. Մարքվարթի ժառանգությանը պատկանող սույն աշխատությունը վերաբերում է Հայոց եպիսկոպոսությունների ծագմանը՝ մինչև Ներսես կաթողիկոս, եւ ներկայացնում է հայկական եկեղեցական ավանդությունների քննական տեսությունը: Սկզբում հակիրճ տեղեկություն է տրված 11-րդ դարում հայ եւ աղվանից եկեղեցիների վիճակի մասին, որն առավել արժեքավորվում է բերված ծանոթագրությունների շնորհիվ:

Ձեռագիրը կազմում է 117 էջ եւ սկզբից մինչև վերջ ընթանում է առանց գլուխների բաժանման: Չկա գլխակարգություն: Այս հանգամանքը, ինչպես նաեւ, ամբողջ նյութի կառուցվածքն ու նույնատիպ բառերի նկարագրության եւ թարգմանության տարբերությունները այն տպավորությունն են թողնում, որ աշխատանքը տպագրության պատրաստ չի եղել: Կիսնդրեի ընթերցողներին գրքի գնահատման հարցում նկատի ունենալ այս պարագան:

Այսուհանդերձ, կարծում եմ, աշխատության հրատարակումը ցանկալի կլինի, որովհետեւ, բացի այն, որ Մարքվարթի հատկապես Հայաստանի մասին ուսումնասիրությունը, ուր նրա իրավասությունը, ինչպես նաեւ սկզբնաղբյուրների քաջատեղյակությունն ու արժեքավորումը համընդհանուր ճանաչում ունեն, պակաս կարելուր չէ եւ պարունակում է բազմաթիվ նոր ու խորաթափանց մտքեր, որոնք ներկայացվել են գիտական շրջանակներին, թեւ ոչ բոլոր հետեւություններն ունեն նույն արժեքը: Համենայն դեպս դրանք հետաքրքիր են եւ կիսթանեն այսուհետ Հայ եկեղեցու սկզբնավորման պատմության լուսաբանումն եւ կնպաստեն աղբյուրներում պատմականի ու ավանդականի տարանջատմանը: Սա մի աշխատանք է, որը ոչ միայն Հայաստանի, այլեւ արեւելյան շատ եկեղեցիների համար անհրաժեշտ եւ արժեքավոր է: Ասվածի հետ մեկտեղ աշխատությունում, ինչպես Մարքվարթի բոլոր ուսումնասիրություններում, առկա է աշխարհագրական, պատմական եւ լեզվաբանական ծավալուն նյութ, որը կիստաքրքրի ոչ միայն Հայաստանի եկեղեցիների պատմությամբ զբաղվողներին, այլեւ գիտնականների լայն շրջանների:

Ձեռագրից հնարավոր չէ եզրակացնել, թե երբ է աշխատանքը գրվել: Գրության ժամանակի վերաբերյալ նաեւ բանավոր որեւէ տեղեկություն չունեն ոչ միայն անձամբ Մարքվարթից, այլեւ ուրիշներից: Օտար անունների գրելաձեւից (Մարքվարթը հաճախ է փոխում դրանց գրելաձեւը) կարելի է կարծել, որ աշխատանքը գրվել է մոտավորապես 1920 թ., մի ժամանակաշրջան, երբ հեղինակը գործնականում զբաղված էր Հայաստանով: Հավանաբար ուսումնասիրությունը մասն էր կազմելու Հայաստանի պատմության ծավալուն աշխատության, որը նախատեսված էր, բայց, ցավոք, այլեւս հնարավոր չէ իրագործել:

Պապական արեւելագիտական ինստիտուտը աշխատությունն ընդգրկել է իր մատենաշարում, հրատարակման ուշացումը (լույս էր տեսնելու այս տարվա սկզբին) պետք է ընդունել ներողամտությամբ: Դժվար ընթեռնելի ձեռագրի՝ հատկապես հայերեն բառերի վերծանման հարցում ինձ օգնել է իմ գործընկեր պրոֆ. Ֆր. Տորելը, իսկ Ու. Հոլցմայսթերի հետ կարդացել ենք տպագրական մամուլները: Ես իմ ջերմ շնորհակալությունն եմ հայտնում նրանց:

Հոռն, 1 սեպտեմբեր, 1932 թ.

Ջուզեպե Մեսինա Ս.Ի.

ՀԱՅ ԵՒ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ 11-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Մատթեոս Եղեասացին ուշագրավ տեղեկություն է հաղորդում 11-րդ դարի հայ ազգային եկեղեցու արտաքին վիճակի մասին.

«Յայսմ ամի (հյց. 514=5 մարտի 1065 - 4 մարտի 1066) մեռաւ ամենագովելին Տէր Խաչիկ կաթողիկոսն Հայոց, սա կեցեալ յաթոռ հայրապետութեան զամս վեց յօտար աշխարհի, պանդխտեալ յիշխանութիւնն Յունաց¹ եւ բարոք քաղաքավարութեամբ լցեալ զժամանակս կենաց իւրոց, եւ բազում վիշտս կրեաց ի յանիրաւ եւ ի մոլի ազգէն Հոռոմոց ի մէջ Կոստանդնուպօլսի, որ եւ ի պէսպէս փորձութիւնս ածէին զնա վասն հաւատոյ, զի այսպէս լսելով մեր՝ եթէ հրով փորձեցին զնա, եւ նա անվնաս անցանէր ընդ մէջ հրոյն, զոր նոցա զայրացեալ՝ եւ առաջօր՝ ասէին զայն: Եւ այսպէս օրինակաւ սուգ ունէր Տէր Խաչիկ ի սրտի իւրում. եւ յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տանն Հայոց, նաեւ զխափանել աթոռոյ թագաւորութեանն յազգէն Բագրատունեաց եւ զալ ծառայել չարամիտ ազգաց Յունաց, եւ աղքատութեամբ տիրապէս ել՝ յաթոռոյ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին. վասն զի յորժամ էր Տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն եւ ի Հայաստան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի եւ մեծանիստ եւ շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս եւ եպիսկոպոսս հինգ հարիւր փառատոր եւ զաւառապետս⁴ ի վերայ եօթն հարիւր⁵ թեմի (θέμα) հանապազ. երկոտասան եպիսկոպոս եւ չորս վարդապետ⁶ ի տանն հայրապետին եւ վաթսուն երէց ի կրօնաւորաց՝ եւ յաշխարհականաց՝ հինգ հարիւր. եւ չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց: Նաեւ զարդարանք եկեղեցեացն եւ տանն հայրապետութեանն բազում եւ անհամար եւ հրաշալի մեծութեամբ լցեալ, որ առաջին թագաւորացն տուեալ հաստատութեամբ առաջին հայրապետացն. որ զայր հասանէր մինչեւ ի Տէր Պետրոս եւ առ նովաւ խափանեալ լուծաւ: Արդ՝ զայն ամենայն զմտաւ ածէր Տէր Խաչիկ եւ տեսանէր ի տառապանս զհայրապետական աթոռն Հայոց եւ կայր յոյժ վիրաւորեալ»⁷:

Արիստակէս Լաստիվերտցին վկայում է, որ Պետրոս կաթողիկոսը շատ զանձասեր էր, որի համար շատերը պախարակում էին նրան: Այդ զանձերի պատճառով Կոստանդին Դուկաս կայսրը, առնելով Խաչիկ

կաթողիկոսի (1060-1065) հաստատման լուրը, պատգամավորներ է ուղարկում եւ նրան ու գանձերը, որ գտնվում էին թե՛ այդտեղ (Մեքսատիայում), թե՛ Հայաստանում, բերել է տալիս իր մոտ՝ Կոստանդնուպոլիս⁸. Պետրոսը (1019-1060)⁹, իր անիրավ դրամասիրությունից դրդված, ցանկանում էր հայկական թագավորության անկման շրջանում Հայոց կաթողիկոսության ունեցվածքը շահադիտական նկատառումներով թուլատրելի եւ անգամ պատիվ չբերող միջոցներով բազմապատկել՝ գերազանցելով իր նախորդներին, ինչն այն ժամանակ կաթողիկոսարանի խնամիական միջավայրում բավական ընդունված էր¹⁰: Վստահորեն կարելի է ասել, որ հայ եկեղեցին քաղկեդոնական հռոմեացիների եւ մուսուլման սելջուկ հորդաների կատարած գերեզմանակրկիտի աշխատանքից առաջ էլ հիրավի հարուստ էր եւ հզոր, որ հաստատվում է նվիրատվությունների պահպանված վավերագրերով:

Իսկ ինչ վերաբերում է կաթողիկոսին ենթակա եպիսկոպոսների եւ թեմերի կարծեցյալ թվին, ապա այն. ընթերցողի մոտ ճշմարիտ զարմանք է հարուցում եւ թվում է, թե վավերագրողն այստեղ «խոշորացույց» է օգտագործել: Դյուլորիեն սրանից օգտվել է այսպես. նա եւ **գաւառապետս**, ինչպես նաեւ **գաւառատեսուչս** արտահայտությունը, որն, անշուշտ, պետք է դիտել **եպիսկոպոսի** բացահայտիչը, թարգմանել է «ou chorévêques»: Եթե նոր հրատարակությունում թեմերի թիվը 700 է (է հարիր) ապա Hss ABC-ում եւ Երուսաղեմի հրատարակությունում՝ նախապես 500 (Ե հարիր) է:

Դիշտ այդպիսի զարմանալի մի տեղեկություն է տալիս Մատթեոսը էջ 81=65 Աղվանքի եկեղեցու մասին: Պարսից ամիրա Ապու-Սվարի¹¹ ավերիչ հարձակման ժամանակ (հավանաբար 1040 թ.) Աղվանքի, այսինքն Տաշիրքի թագավոր Դավիթ Անհողինը դիմում է Աղվանքի Հովսեփ կաթողիկոսին. «... եւ ահա արժան է եւ իրատունս ամենայն հաւատացելոց ընդդէմ որոյ երթալ եւ մեռանիլ ի վերայ քրիստոսական հաւատոցն: Արդ ժողովեա զամենայն եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհիդ որ յԱղուանսն են եւ ի բանակ այսր հասիր, զի ընդ մեզ մեռանիջիք»: Չոր եւ արար իսկ եւ երկերիւր եպիսկոպոսօք գնայր Տէր Յովսեփն ի բանակն քրիստոնէից: Եւ գրեաց եւ ի վանորայսն առ հարսն զալ միաբան ամենայն կրօնաւորօքն ի զօրս հաւատացելոց, եւ ժողովեաց զամենայն քահանայս Աղուանից աշխարհին եւ զսարկաւազունս» եւ այլն (Մատթ., էջ 80-81=65-66):

Դժվար է պատկերացնել, թե որտեղ էին նստում այդ 200 եպիսկոպոսները, երբ Շարվանը հարեւան երկրների հետ 10-րդ դարի առաջին կեսին արդեն մեծ չափով բնակեցված էր մուսուլմաններով եւ գտնվում էր իսլամ ընդունած հարստության իշխանության տակ¹²: Իսկ Տաշիրքի տեղ Դավթին սկսած հյց. 438 թ.=989/90՝ Վերին Հայաստանի եւ Առանի տեղ

քորդ Ֆադլուն իբն Մանոճիհրը¹³, նրա մահից հետո վերջինիս եղբայր եւ հետնորդ Աբու Ռավարը նեղելով հափշտակել էին տիրույթների մեծ մասը: Նույն կերպ Ֆադլունը Գրիգոր Փառիսոսցի իշխանի մահից հետո (հյգ. 452 թ.=21 մարտի 1003 - 19 մարտի 1004) նրա որդուն՝ Փիլիպեին, դավաճանաբար շղթայելով, խլում է նրանից Շաղվաղն¹⁴ ու Շաուքքը՝ արդեն իր տիրապետության տակ ունենալով Պարտավն ու Շամքորը¹⁵:

Անշուշտ Միջագետքի թեմի հայազգի իշխաններ Սլեհի, Չմշկիկի (Հովհան Կուրկուաս), նրա նշանավոր եղբորորդի Չմշկիկի /Հովհան Չմշկիկ/, հետագայում՝ կայսր Կյուռ ժան ԿՅՐԻՏ ԲՆՎՆՅԵՏ եւ Նիկեփոր Փոկասի, որոնք սերում էին մախկին Դեզիկ (Դեզիկ)¹⁶ գավառից, ռազմական փառապանձ սխարանքներից ի վեր հայկական տարրը արագ տարածվել էր նոր գրավված մարզերում, ինչպիսիք էին Մելիտենեն, Հանձիքը, Ծամնդսը (Ծամնդավ), Լյուկանդսը (Լափաթա), Կիլիկիան եւ Հյուսիսային Սիրիան¹⁷, այնպես որ այդ երկրամասերում եւս առաջանում են եպիսկոպոսություններ, ինչպես այդ մասին վկայում է Ստեփանոս Ասորիկը՝ III, ԼԱ, էջ 258=196, 14-19. «Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայարպետին Հայոց սփեռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորոց եւ ի Տարսոն Կիլիկեցոց եւ ի Սուլնդայ¹⁸ եւ յամենայն գաւառսն յայնոսիկ»¹⁹: Հայերի գաղթի մի նոր հոսանք հեղեղեց Տավրոսի երկրներ եւ Սիրիա, ինչպես նաեւ Փոքր Հայք, երբ 1016 թ. Վասպուրականի Սենեքերիմ թագավորը վախճանալով թուրքերից, իր երկիրը վաճառեց Բարսեղ Երկրորդ կայսրին: «1300 թ.²⁰ սկսվում է հայ ժողովրդի գաղթը Մեծ Հայքից, նախ դեպի Կապադովկիա: Հատկապես, երբ Բարսեղ կայսրը հայերից խլեց Սենեքերիմ թագավորի երկիրը եւ դրա դիմաց տվեց Մեքաստիան՝ Կապադովկիայում, նրանք, այնտեղ շատանալով, տարածվեցին ամբողջ Կապադովկիայով, Կիլիկիայով եւ Սիրիայով մեկ»²¹:

II ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

1. Ներսեսի եւ Գրիգորի ժամանակը

Գառնալով հայ եկեղեցու սկզբնավորմանը՝ «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի» բնագրում գտնում ենք այն ազնվականների ու եպիսկոպոսների ցանկը, ովքեր ուղեկցում էին սուրբ Ներսեսին Կեսարիա օծվելու: «Ընդ նոսին եւ եպիսկոպոսք մեծաթոռք.

1. ԳԳրիգոր եպիսկոպոս Սիւնեաց
2. ԳՓառէն եպիսկոպոս Վրաց
3. ԳԹաթուլ եպիսկոպոս Տարօնոյ
4. ԳՅովսէփ եպիսկոպոս Բագրատունեաց
5. ԳՔաջաջ եպիսկոպոս Մարդպետական
6. ԳԱնոս եպիսկոպոս Բզնունեաց
7. ԳՆերսէս եպիսկոպոս Մոկաց
8. ԳՇապուհ եպիսկոպոս Արծրունեաց
9. ԳԱբեսողոմ եպիսկոպոս Անձեւացեաց
10. ԳՎահան եպիսկոպոս Մամիկոնէից
11. ԳԶաւէն եպիսկոպոս Յուրտաւայ
12. ԳՏրդատ եպիսկոպոս Բասենոյ
13. ԳԳնել եպիսկոպոս Սելիտենոյ

եւ այլ հնգետասան եպիսկոպոսք՝ որ պատրաստեցան ընդ իշխանսն»²²:

Վարքագրական այս թերի գործում, սակայն, խոսվում է նաեւ ուզերի, այսինքն՝ կոմանների²³, աղեղնավորների (**աղեղնատոռք**), այսինքն սելջուկների²⁴ արշավանքի եւ հռոմայեցի, որ ֆրանկ են կոչվում, ժողովրդի կողմից, Երուսաղեմի վերագրավման մասին²⁵: Բնագրում օգտագործված են ինչպէս Կեղծ Մեթոդիոսի եւ Հովհաննէս Կոզեռնի (հմմտ. Մատթ. Ուռհ. 52-54, 67-74=53-60, 230=193), այնպէս էլ Հովհաննէս Սարկավազի երկերը, եւ համապատասխանաբար վերամշակված է Ներսեսի անեծքը (Փաւստ. IV, ԺԳ, էջ 114, 2-4, 18-35, ԺԵ, էջ 123, 14-124, 3, IV, ԾԱ, էջ 166, 36-167, 9: Ղազար Փարպ. էջ 11, 18-31, 22, 28-29, 23, 2-4, 25, 2-6, 16-26, 4, հրատ. Թիֆլիս, 1904=32, 14-18, 69, 2-7, 24-70, 3, 76, 21-77, 5, 78, 3-830,

8 հրատ. Վենետիկ, 1891): Ինչպես ցույց է տալիս Էմիլը եւ ինչպես վստահաբար կրկնում է Վ. Բոուսերը (Beiträge zur Geschichte des Eschatologie: Zs. f. Kirchengeschichte XX, 1900, էջ 118), այս գործը ստեղծվել է ոչ թե 5-րդ, այլ 12-րդ դարում: Այն առաջին անգամ հիշատակում են Մատթեոս Եղեասացին եւ նրա պատմության շարունակող Գրիգոր քահանան²⁶: Բացի այդ, հեղինակն ինքն է իրեն մատնում՝ բարձրաստիճան հոգեւորականների շարքում հիշելով նաեւ Մելիտենեի եպիսկոպոսին: Մելիտենեն մտնում էր Հռոմեական կայսրության մեջ, ուստի այդ մարզի եպիսկոպոսը պաշտոնապես կապ չուներ Հայկական թագավորության եպիսկոպոսների հետ: Մելիտենեում հայկական եպիսկոպոսություն ստեղծվել է 11-րդ դարում²⁷: Ներսես կաթողիկոսի օրոք Մելիտենեի աթոռին հույն եպիսկոպոսներ էին, որոնց անուններն էին Ուրանիոս եւ Օտրեիոս²⁸: Անանունի եպիսկոպոսների ցանկը առավել անվավեր է, քան հայ ազնվականների նրա երկար ցուցակը (էջ 32-38=Langlois II 25b-26b):

Փավստոսը եւս վկայում է այդ մասին (IV, Գ, էջ 72). «Ապա գումարեցին զհշխանան մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս, եւ գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն օծանել: Նա եւ բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ թագաւորն վասն նորին խնդրոյն. խոնարհել ամենեցուն միով միաբանութեամբ զնա ընտրել հաճոյ թուեցաւ ամենեցուն, զի նստեսցի նա յաթոռ գլխատրութեանն: Ամենեցուն միաբանութեամբ եպիսկոպոսացն եւ թագաւորին եւ աշխարհաժողով ձուլիւք հաւանութեամբ ի միասին արձակեցան եւ գնացին»: Ապա հաջորդում են առաքված ազնվականների անունները, որոնց թվում, սակայն, ոչ մի եպիսկոպոս չի հիշատակվում:

Ուխտանես Եղեասացին (10-րդ դարի վերջ) գրում է, որ երբ Գրիգոր Լուսավորիչը նստեց Մեծ Հայքի կաթողիկոսական աթոռին. «Եւ եպիսկոպոսը՝ որ ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեք հարիւր եպիսկոպոս՝ տեսուչք տեղեաց տեղեաց: Գլուխ Հ. Յաղագս եպիսկոպոսաց՝ որք ընկալան աթոռ ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորէ յիրաքանչիւր գահս:

Արդ յայսմ վայրի զաթոռակալս շարադրեցից եւ յայտ արարից զիրաքանչիւր գահս՝ որպէս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի է կարգեալ եւ եղեալ զսեփական աթոռընկալ եպիսկոպոսացն զկարգս»: Այնուհետեւ թվարկված է 30 եպիսկոպոսություն, որոնց մի մասը, սակայն, հիշատակվում է 6-րդ դարից, եւ կքննարկվեն ավելի ուշ: Վերջում ասվում է. «Այս երեսուն եպիսկոպոսը՝ որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ, եւ այլ եւս երեք հարիւր եւ եւթանասուն եպիսկոպոսք, որ եւ նոքա կարգեցան ի տեղիս տեղիս տեսուչք եւ Առաջնորդք յիրաքանչիւր գաւառս ի փառս Աստուծոյ»²⁹:

Այս վերջին տեղեկությունը հենվում է Ագաթանգեղոսի վրա՝ պարբ. 856. «Եւ բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իրոյ. եւ որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան գշորեքհարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց: Իսկ կարգք երիցանց կամ սարկաւազաց կամ անագնովասց, եւ որ այլ եւս ի պաշտօն Տեառն կացին՝ անթիւք էին ի բազմութենէն»³⁰: Կեղծ Ձենոր Գլակը նախ օգտվում է Ուխտանեսից, ապա առարկում, որ թեմերի թիվը ավելի մեծ է եղել. «Ձի գիտէիք,- գրում է Տրդատ թագավորը Նյուստրայի եպիսկոպոս Եղիազարին եւ ազդենացիների եպիսկոպոս Տիմոթեոսին,- եթէ ամենայն գաւառացս եպիսկոպոսս պիտոյ են եւ քահանայս: Ձի թէպէտ ոմանք, որք ուստեք ուստեք եկեալ են ժողովեալ, բայց զի՞նչ են այսոքիկ առ վեցհարիւր եւ քսան գաւառս Հայոց, որ եւ գաւառին մէն մի քահանայ կամ լուկ թէ հանդիպի»³¹:

Բացի այս ընդհանուր հաղորդումներից, Ագաթանգեղոսը պարբ. 845 տալիս է ճիշտ տեղեկություն. «Եւ դարձեալ բազում եւ անհամար գունդս գունդս վանականաց ի շէնս եւ յանշէնս, դաշտականս շինակեացս, եւ լեռնականս անձաւամուտս եւ արգելականս հաստատր [Գրիգոր]»³²: Եւ գոմանս յորդոց քրմացն առեալ իւր՝ զառաջեաւաստմնս ձեռնաստմնս առնէր. փոյթ ուսման ի վերայ ունէր՝ ընդ հոգեւոր խնամով եւ երկիւղի սնուցանել³³: Որ յաստիճան եպիսկոպոսութեան լինէին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ. որոց առաջնոյն Աղբիանոս³⁴ անուն, որ ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու, երկրորդին՝ Եւտաղիոս³⁵, որ ի կողմանս վայրացն Բասենոյ կացեալ լինէր հովիւ, երրորդն՝ Բասոս, չորրորդն՝ Մովսէս, հինգերորդն՝ Եւսեբիոս, վեցերորդն՝ Յովհաննէս, եօթներորդն՝ Ագապէս³⁶, ութերորդն՝ Արտիթէս³⁷, իններորդն՝ Արսուկէս³⁸, տասներորդն՝ Անտիոքէս³⁹, մետասաներորդն՝ Տիրիկէս, երկուտասաներորդն՝ Կիրակոս⁴⁰: Այսք՝ որ յորդոց քրմացն ընտրեցան լինել եպիսկոպոսք կողմանց կողմանց, աճեցուցանել զքարոզութիւնն: Եւ զայլոցն անուանս թէ եւ կամիցի ոք՝ ոչ կարասցէ շարել»⁴¹:

Հետաքրքիր է, որ վերջին երկու անունները բացակայում են ոչ միայն հունարեն թարգմանության մեջ, այլև հայերեն գրեթե բոլոր ձեռագրերում: Դրանք կան փարիզյան մի ձեռագրում եւ հունարենից արաբերեն թարգմանված. «Հայերի, վրացիների, արխագների եւ ալանների մկրտությունը սուրբ Գրիգորի կողմից» աշխատությունում⁴²: Դժվար չէ տեսնել, որ այդ անունները վերցված են Փավստոսի վերջին գրքից. Տիրիկեսը Բասենի եպիսկոպոս **Տիրիկն** է (սեռ. Տիրկան), Կիրակոսը՝ Տայքի եպիսկոպոսը, որ կոչվում էր նաեւ Շահապ⁴³: Նրանց պաշտոնավարման ժամանակը համընկնում է Հայաստանի երկրորդ բաժանման հետ, եւ նրանց թեմերը սահմանակցում էին Հռոմեական Հայաստանին: Ինչպես

վավերացրել է մետրոպոլիտ Սիմեոնը Քաղկեդոնի ժողովում Տիրիկ է կոչվել նաև Ամիդի պաշտոնյաներից մեկը, եթե լատինական հրատարակության Tyricio, Tyrecio արտասանական ձեերը նախընտրելի են հունական տեքստերի (Mansi VIII 165, 166) Σηροζιον-ից: Նույն անունն Բագրեւանդի եպիսկոպոսը Ներսես Երկրորդ կաթողիկոսի օրոք (554/5) Գիրք Թղթոց, էջ 70, սակայն էջ 73՝ Տիրակ: Հմմտ. Hübschmann, Die altarmenischen Personennamen. Festschrift für Roth (Stuttgart, 1893), էջ 104: Ութերորդ՝ Բասենի եպիսկոպոս Արտիթեսը այստեղ հանդես է գալիս Արտիթ (սեռ. **Արտթայ**) ձեով: «Սա աշակերտեալ մեծին Դանիելի՝ որ էրն յամս Տիրանայ⁴⁴ արքայի, եւ կենդանի կայր յամսն Խոսրովու արքայի եւ Արշակայ, երկուց թագաւորացն Հայոց»⁴⁵: Դիոնիսիոս Թրակացու Քերականության թարգմանության մեջ էջ 28, 23 -**իթ**-ը տոհմանվան վերջավորությունն է, ինչպես **Գն-իթ**, Կորյուն, էջ 27, Փաւստ. III, ԺԲ, էջ 29, **Ման-իթ** Դիոն. Թրակ, նույն տեղում, **Չու-իթ** (ըստ **Ճառընտիրքի** AB in Z. Arm. Ph. II 276 **Չոփ-իթ**, սեռ. Չոփթայ)՝ քահանա Արտաշատից, Փաւստ. IV, ԾԵ, էջ 177, ԾԶ, էջ 179, ԾԷ, էջ 180, **Տիր-իթ**՝ Հայոց Արշակ թագավորի եղբորորդին, Փաւստ. IV Ե, էջ 92, ԺԱ էջ 107, ԺԵ էջ 119-120, 124-126: Սակայն **մարդիթ**-ը mard-it ըստ այդ նույն Քերականության, էջ 34, 3-4 նշանակում է «գեր մարդ» եւ համեմատելի է հուն. Περγαλιτης-ի հետ:

Այնուհետեւ աչքի է զարնում մեկուսի հանդես եկող Արսուկես անունը: Եթե փնտրենք, ապա Փավստոսի մոտ (IV, ԺԲ, էջ 111) կգտնենք Ասրուկ անունը, որը համապատասխանում է վերջինիս: Բագրեւանդի եւ Արշարունիքի Խաղ եպիսկոպոսին են վերաբերում հետեւյալ տողերը. «Եւ էին նորա երկու դստերք. եւ ետ զմինն Ասրկոյ ումեմն կին, եւ զկնի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Խաղայ»⁴⁶: Խաղի եւ Ասրուկի պաշտոնավարման ժամանակը համընկնում է Արշակ թագավորի կառավարմանը: **Ասրուկ**-ը **ասր**-ի սեռ. **ասրու** կամ (ավելի հին) **ասու**-ի «բուրդ» -**ուկ**-ով կազմված փաղաքշական ձեւն է, ինչպես Այր-ուկ Եղիշէ 77 **այր** «մարդ» Ταυτούκας=Դաւթ-ուկ. Դաւիթ, **Յեհն**-ուկ, Մատթ, Ուռհ. 144, հուն. Ίαχνούκας. Jowhan, Παγχαροούκας **Բագրատ**-ուկ. Բագարատ, **հաուկ** «հավի ճուտ», բառացի՝ «թռչնակ» Dionys. Thrax., էջ 20, 20: Հմմտ. Hübschmann, Die altarmenischen Personennamen. էջ 101, ծնթ. 8: Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 55/6, ծնթ. 1: Հետաքրքիր է, որ հայերի, վրացիների, արխագների եւ ալանների արաբահունական դարձի անանուն հեղինակը. պահպանել է Ասրուկի եպիսկոպոսության ճիշտ տեղը: Նա ասում է. «...եւ [Գրիգորը] Դրոսոզոյ-ին դարձնում է եպիսկոպոս եւ ուղարկում Շիրաք (Շիրակ) գավառ»:

Շիրակ գավառը Արշարունիքի հետ Կամսարական տոհմի հայրենա-

կան կալվածքն էր⁴⁷: 4-րդ դարի երրորդ քառորդին, սակայն, այդ երկիրը Բագրեւանդի հետ կազմում էր մի եպիսկոպոսություն: Հավանաբար հեղինակն այստեղ օգտվել է նաեւ ավանդությունից: Նրան առավել քիչ հաջողվել է որոշել մյուս չորս բարձրաստիճան հոգեւորականների նստավայրերը: Եւ նա ՝Աջւնձիւ-ին դարձրեց եպիսկոպոս եւ ուղարկեց *Μαλαξᾶζών* երկիր՝ իրենց *ἄρχων* جانا ارثى-ի հետ, ՝Αντίοχον-ին եւս դարձրեց եպիսկոպոս եւ ուղարկեց *قرذلت* Բարդալիտ երկիր, *Τιρίσιον*-ին նույնպէս դարձրեց եպիսկոպոս եւ ուղարկեց ՝Ατραπατακάν երկիր: *Κυριακόν*-ին եւս դարձրեց եպիսկոպոս եւ ուղարկեց ՝Αρσαμουσίων (Արշամունիք) երկիր»: Արշամունիքը գավառ էր Տուրուբերան նահանգում եւ տարածվում էր Սրմանց լեռների, այժմ՝ Բինգյոլ դաղ, շրջանում, տես *Hübschmann, Die altarmenischen Ortsnamen*, էջ 327, 322, Ղազար Փարպ., Թիֆլիս, 1904, էջ 149, 1, 22-23=516, 11, 518, 10, Ստեփ. Աս. III, ԽԳ, էջ 276, 8: Արշամունիքի եպիսկոպոսությունը գոյություն է ունեցել 6-րդ դարի սկզբներից⁴⁸: Մաղխազունիքը Խորխոռունիք գավառի մեկ այլ անվանումն է, որը նույնպէս գտնվում էր Տուրուբերան նահանգում: Հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց (Վեներտիկ, 1822), էջ 131 եւ հաջորդներ: Նաեւ *Archäologie des Landes Armeniens, II, Venedig, 1835*, էջ 139 եւ հաջորդներ, 173: Հյուբշման, նույն տեղում, էջ 330: Ազաթանգեղոսի հունարեն թարգմանությունում (էջ 69, 53) գրված է *ἄρχων ὁ τοῦ Μαλαξᾶζέων* *ὄχος=իշխանն մաղխազութեան տանն*, պարբ. 795, էջ 414, 16=597, 19: جانا ارثى *Gargoil* աղավաղված ձեւն է: Խորխոռունիքի եպիսկոպոսությունը եւս գոյություն է ունեցել միայն 6-րդ դարի սկզբներից⁴⁹: *جارجويل*-ը հավանաբար *قرذلت=Kord(ոս)տճ*-ի գրության սխալ ձեւն է. Ազաթ. հուն, 68, 48=**կորդովտագ**, պարբ. 795, էջ 414, 9, Թիֆլիս=597, 4, Վեներտիկ, հուն. 77, 72=**կորդուտաք**, պարբ. 842, էջ 440, 2=628, 9: Հմմտ. Մառ, էջ 206: Ատրպատականի եպիսկոպոսությունը գոյություն է ունեցել 7-րդ դարից սկսած:

*
* *

Մի պահ կանգ առնենք. մեզ մնում է, չհաշված թիվ 10-ը, հնչյունափոխության չենթարկված, յոթ զուտ հունական, ինչպես նաև աստվածաշնչային անունների մի խումբ: Ի՞նչ հիշատակություն կա դրանց մասին այլ աղբյուրներում:

Աղբիանոս եպիսկոպոսի մասին գրված է. պարբ. 846 «Եւ գԱղբիանոս գայր ճշմարիտ եւ աստուածասէր՝ վերակացու թողոյր արքունական դրան բանակին»⁵⁰: Հեթանոս կայսեր նկատմամբ Կոստանդիանոս կայսրի հաղթանակի եւ քրիստոնեության՝ որպես պետական կրոն բարձրացման լուրն առնելով՝ «մեծ արքայն Հայոց Տրդատ՝ խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն այնոցիկ, հանդերձէր, կազմէր առնոյր ընդ իւր գմեծ արքեպիսկոպոսն գԳրիգորիս եւ գնորին որդի գԱրիստակէս»⁵¹ եպիսկոպոս եւ գմիւս եպիսկոպոսն գԱղբիանոս»: Ապա հետեւում է թագավորի շքախումբը կազմող հրամանատարների ու իշխանների ցանկը, որը, սակայն, եթե անգամ հին աղբյուրից է վերցված, չի կարող նախնականը լինել, քանի որ այնտեղ, ինչպես նաև Փաւստ. IV, Ծ, էջ 163 եւ V, Թ, էջ 214, Նորշիրականի, այսինքն Աղիաբենի բղէշխը համարվում է Հայաստանի թագավորի վասալը եւ սխալմամբ Ատրբետանի կողմի սահմանակալը, այսինքն Աղձնիքի բղէշխը տարբերակված է Արվաստանի (Բեթ Արաբայե՝ Նիսիբիս մայրաքաղաքով) կողմի բղէշխից⁵²: Յավոք, Տրդատի այս այցի մասին, որն ավարտվում է դաշինքի կնքմամբ (պարբ. 877=հուն. 84, 21-25), այլ տեղեկություն չունենք:

Նիկիայի ժողովում, որին մասնակցում էր 318 հոգեւորական, հայերն ունեին իրենց ներկայացուցիչը, եւ այդ մասին նրանք պահպանել են փոքր-ինչ առասպելախառն հիշողություն. «Ապա յետ այսորիկ հրաման ետ մեծ կայսրն, օգոստականն Կոստանդիանոս՝ ժողովել ամենայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիացոց: Յայնժամ մեծ արքայն Տրդատ եւ սուրբ կաթողիկոսն Գրիգորիոս հանդերձեցին եւ արձակեցին գԱրիստակէս, որ երթեալ հասանէր ի մեծ ժողովին Նիկիայ ընդ եպիսկոպոսն ամենայն, ուր ամենայն տիեզերաց կարգեցաւ ընդունելութեան աւանդութեանն հաւատք եւ կարգք լուսաւորութեան, կանոնք պայմանաւորք, աստուածատուր զօրութիւն հաճոյիցն Աստուծոյ անշափ բարձրութեանցն: Ուր եւ մեծ կայսրն Կոստանդիանոս մտեալ խոստովան լինէր զհաւատսն եւ օրհնութեամբ պսակեալ ի ժողովոյն՝ զանուն յերկրի թողոյր եւ զարդարութիւն յերկինս հաստատէր:

Իսկ երանելին Արիստակէս գայր պայծառ ծագեալ հաւատովքն եւ հաստատուն աստուածահաճոյ նիկիական կանոնօքն երեւել ի Հայաստ-

տան երկրին. եւ առաջի դնէր թագաւորին եւ կաթողիկոսին սրբոյ՝ զբերեալ աւանդութիւնսն: Որով սրոյն Գրիգորի ի նոյն լուսաւոր կանոնսն յաւելեալ, առաւել եւս զիւր վիճակն, զՀայաստան երկիրն, պայծառացուցեալ, հանդերձ միաբանութեամբ արքային Տրդատայ՝ զամենայն ատուրս կենաց իւրոց լուսաւորէր»⁵³:

Փավստոս Բուզանդը նույնպէս պատմում է Նիկիայի ժողովի մասին. «...եւ սա [Մծբինի Հակոբ եպիսկոպոսը] դիպեցաւ ի մեծ սինհոդոսին ի Նիկիա, որ եղև յամս Կոստանդիանոսի կայսր Հռոմոնց, որ⁵⁴ ժողովեցան երեք հարերը եւ ութետասան եպիսկոպոսօք. վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի Աղէքսանդրացոյ, որ էր ի նահանգէ⁵⁵ անտի Եզիպտոսի: Արդ⁵⁶ ամենայն եպիսկոպոսքն նստէին առաջի Կոստանդիանոսի. եւ ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի սքանչելոյ՝ առաջի⁵⁷ կաթողիկոսին Հայոց մեծաց»: Ապա հետեւում է հրաշքի մասին պատմությունը, երբ Հակոբին երեւում է կայսրը: Այս մասին պատմում է նաև Ագաթանգեղոսը, պարբ. 871⁵⁸:

Փավստոսի պատմությունը ծագում է Մար Հակոբի մասին սիրիական ավանդությունից եւ պատմական արժեք չունի: Ստույգ է, որ Հակոբ եպիսկոպոսը ժողովին չի մասնակցել: Ինչ վերաբերում է Ագաթանգեղոսի վկայությանը, որ Արիստակէսը Նիկիայի կանոնները Հայաստան է բերել, մեծ մասամբ բառացի վերցված է Կորյունից, ուր ասվում է. «Որոյ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոյն, եւ բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, եւ նիկիական եւ եփեսոսական կանոնօք⁵⁹ գալին⁶⁰ երեւելով աշխարհին Հայոց, եւ առաջին դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցոյ սրբոյ»⁶¹: Եթե իսկապէս Արիստակէսն է Նիկիայի կանոնները բերել, ապա դրանք 5-րդ դարի երկրորդ քառորդին Հայաստանում կամ այլեւս չէին գործում, կամ անվավեր էին: Այն, որ Արիստակէսը իսկապէս մասնակցել է ժողովին, անվերապահորեն կարելի է ապացուցել Նիկիայի հայրերի ցուցակով, որն, անկասկած, բերված է հավաստի աղբյուրից: Այնտեղ գրված է⁶².

Ἀρμενίας μεγάλης

106. *Ἀριστάκης Ἀρμενίας*

107. *Ἀκρίτης*.

Այն վարկածը, որ այս երկու անունները մի փոքր ավելի ուշ հայկական ազդեցությամբ ընդմիջարկվել են ցանկում, մինազամայն բացառված է, քանի որ *Ἀκρίτης* անունը 5-րդ դարի կեսերին սկզբնավորված հայկական ավանդություններում լիովին անձանոթ է:

Գրիգորի ավագ որդին՝ Վրթանեսը, աշխարհիկ կյանք էր վարել եւ ապա նոր քահանայության եկեղեցական աստիճան ընդունել: Երկրորդ որդին՝ Արիստակեսը, դաստիարակվել էր աստվածապաշտական ծառայության համար եւ նվիրվել էր միայնակեցության⁶³: Երբ Գրիգորը հրաժարվեց թողնել ճգնարանները, մշտապես մնալ Տրդատ թագավորի մոտ եւ ուղեկցել նրան իր ճանապարհորդությունների ժամանակ, վերջինս հրամայեց շտապ իր մոտ բերել նրա երկու որդիներին: Պատվիրակները «Արդ՝ եկին հասին նոքա յաշխարհն Կապուտակացոց եւ գտին զՎրթանէս ի Կեսարացոց քաղաքին, եւ գտորբն Արիստակէս բնակեալ յանապատի, յիւրում մենաւորաստանին. ապա ոչ հաւանէր նա իջանել յանապատէ անտի, մինչեւ եղև ժողով բազմութեան քրիստոնէից, որք հաւանեցուցին զնա զնալ անտի. զի «Լաւ է, ասեն, քեզ գործ մշակութեանն Աստուծոյ՝ քան զայդ մենաւորութիւն բնակութեան յանապատի այդր»⁶⁴: Չորս (Գրիգորի որդիներին) այնուհետև եւ յուղարկեցին զնոսա անտի: Իսկ նոքա կրկին հասին յերկիրն Հայոց, եւ յանդիման ունէին զածեալսն, զերկոսին որդիսն Գրիգորի, առաջի թագաւորին. զորս առեալ թագաւորին՝ ինքնին նոքօք հանդերձ ի խնդիր ելանէր սրբոյն Գրիգորի՝ ուր եւ գտցէ: Եւ եկեալ գտանէին ի Դարանաղեաց գաւառին, ի լերինն որ կոչի Մանեայ Այրք, յանապատին:

Ապա աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ գտորբն Գրիգորիոս, զի փոխանակ այնր, զի ոչ հաւանեցաւ նա կալ եւ շրջել ընդ նմա, եւ սիրեաց զմենաւորութեան կեանս՝ ձեռնադրեսցէ եւ տացէ նմա եպիսկոպոս գտորբ որդին իւր, զոր ետ ածել ինքն՝ զԱրիստակէս: Չոր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր, որպէս ըստ գրեցելոյն ի դէպ, թէ «Փոխանակ հարց եղիցին որդիք՝ կալ իշխան ի վերայ երկրի» (Մաղմ. ԽԳ-17): Որ առաւել եւս քան զհայրն վերագոյն երեւեցուցանէր զիւր վարդապետութիւնն առ հայրն. եւ ետ նորա կալաւ գտեղի հայրենեացն եւ անդէն նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց: Ապա եւ ինքն իսկ մեծն Գրիգորիոս «ելանէր գտեղեօքն կարգելովք եւ զգաւառօքն աշակերտելովք յաշխարհին Հայոց՝ զուարթացուցանել, զօրացուցանել, նորոգել եւ հաստատել զամենեսեան⁶⁵: Իսկ մեծ արքեպիսկոպոսն երանելին Գրիգորիոս, սուրբ որդովն իւրով Արիստակիսաւ եւ ամենայն երեւելի օգնականօքն, զամենայն աշակերտովքն շրջէր, եւ հաստատէր զնոսա՝ կալ ի պատուիրանին ճշմարտութեան»⁶⁶:

Սրանով լիովին պատճառաբանվում է Նիկիայում Գրիգորի փոխարինումը նրա որդի Արիստակեսով: Այնինչ, հիմնվելով հայկական ավանդությանը, հանձին Աճառեոց անվան պետք է տեսնել ավելի շուտ Աղբիանոս եպիսկոպոսին:

Արիստակեսի մասին Փավստոսն ունի նաեւ հետևյալ վկայությունը:

Մեծ քահանայապետ Գրիգորի՝ Հայաստանի Լուսավորչի եւ նրա որդու⁶⁷ սուրբ Արիստակեսի եւ նրանց շիրիմների մասին:

«Արդ ի թագաորութեանն Տրդատայ՝ որդոյն Խոսրովու, լուսաորութեամբ հաճոյական սիրով եւ աստուածպաշտութեամբն հաւատոյ, ծանօթութեամբ ի ձեռն Գրիգորի՝ որդոյն Անակայ, մեծի քահանայի, եւ որոյ ընդ մմին կրտսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան զամենայն աուրս կենաց իւրոց մինչեւ յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ⁶⁸: Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան, եւ արժանի եղեալ շիրիմք հանգստեան. եւ մեծին Գրիգորի ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Թորդան. եւ սրբոյն Արիստակայ որդոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, եւ տարան զնա ի Ծովսաց գաւառէ, եւ եղին զնա յԵկեղեաց գաւառի ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի, հօրն իւրոյ»⁶⁹:

*
* *

Փափստոսը մի չափազանց կարեւոր տեղեկություն է հաղորդում Ադրիանոս եպիսկոպոսի մասին:

«Յաղագս երկուց տոհմիցն՝ որք անգաւակեցան ի մէջ Հայաստան աշխարհին, վասն Մանաւազենիցն եւ Որդունոց:

Եւ զայնու ժամանակաւ (Խոսրով Երկրորդ թագավորի օրոք) յարեաւ խոշովութիւն մեծ [մեր] յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք եւ իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անկանէին⁷⁰ ընդ միմեանս մեծաւ ոխութեամբ յարուցին կռիւ, եւ տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց: Եւ պղտորէին [մեր] զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին, եւ միւս եւս նահապետն Որդունոց տոհմին: Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ եւ բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ: Ապա առաքեցին թագաւորն Խոսրով եւ մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Ադրիանոս ի մէջ նոցա, խօսել ի հաշտութիւն խաղաղութեան: Երթեալ հասանէր ի մէջ նոցա երանելին Ադրիանոս զնոսա ուղղել նուաճել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել: Անարգեցին զնա, եւ ոչ լուան բարեխօսութեանն եկելոյն, անգոսնեցին զյղէլիսն, եւ մեծաւ թշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն, եւ առնուին աւերէին զտունն արքունի: Եւ զայրացեալք խստութեամբ հապճեպ տային ընդ միմեանս մարտ պատերազմի: Ապա մեծ ցասմամբք եւ բազում սրտմտութեամբ արձակեաց թագաւորն ի վերայ նոցա զՎաչէ որդի Արտուազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատա-

կել կորուսանել զազգն երկոսեան: Ապա երթեալ հասանէր ի վերայ նոցա զօրավարն Վաչէ, հարկանէր վանէր զազգն երկոսեան, եւ ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն եւ ոչ զմի. եւ ինքն դառնայր առ արքայն Խոսրով թագաւորն Հայոց, եւ առ եպիսկոպոսապետն Վրթանէս: Եւ ետ զաւանն եւ զբուն զահոյից գեղն նահապետին Մանաւազենից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն եւ զաւառական հանդերձ՝ որ շուրջ գնոքօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ⁷¹: Եւ ետուն զբուն գեղն Որդունոց, որոյ անուն էր Որդորու⁷², ուստի եպիսկոպոս Բասեանու⁷³ ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասեանու»⁷⁴:

Այս արժեքավոր տեքստը միանշանակ վկայում է, որ Աղբիանոսն ու Եւտադիոսը, որոնք կանգնած էին Գրիգորի օծած եպիսկոպոսների գլուխ, այնուամենայնիվ, սեփական թեմ ունեցող եպիսկոպոսներ չէին: Նրանք թեմ ստացան միայն Խոսրով Երկրորդ թագավորի օրոք, որպես լրավճար: Այդ նպատակին ծառայեց Մանավազյան եւ Որդունի նախարարական տների տոհմական վեճը, որի հետեւանքով արական սեռի անդամները սրի մատնվեցին, իսկ նրանց ունեցվածքը տրվեց նորաստեղծ եպիսկոպոսություններին: Եթե այս երկուսը իսկական եպիսկոպոսներ չէին, անկասկած մնացած հինգը առավել եւս: Կաթողիկոսությունն էր շատ աղքատ, որ իր կալվածքներից եպիսկոպոսություններին բաժինք չէր հանում: Հազիվ թե: Փավստոսը չի զլացել այդ կետը եւս պարզաբանել.

«Յաղագս Հայր մարդպետին (ներքինապետ), յորժամ եկն էջ ի գաւառն Տարօնոյ՝ եթէ զհարդ եկն ել ի տեղի աղօթիցն Աշտիշատ, կամ զհարդ դատապարտեալ գնաց անտի յիւրոց բերանոցն ի խօսիցն, կամ զհարդ անկեալ, մահուն պարտ եղեալ, սատակեցաւ ի Շաւասպայ Արծրունոյ:

Եւ էր մարդպետն Հայր այր չար եւ ժանտաբարոյիւր⁷⁵ անօրէն եւ անիրաւ քան զառաջին Հայր⁷⁶ անուն մարդպետսն: Սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի⁷⁷, եւ տոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ՝ եւս չար քան զառաջինն գործել չար առ ամենայն մարդ: Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեղսն⁷⁸ տեսանել:

Չայնու ժամանակաւ. սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն⁷⁹. զի հնգետասան գաւառ զայն, ձեռական իշխանութեան ունէին իբրեւ սեպիական ի բնէ, առանձին առոշոզի⁸⁰ նոցա էր կարգեալ: Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Գարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծովք եւ որ ընդ մէջ նոցա եւ որ շուրջ գնոքօք:

Եկն էջ եւ Հայրն մարդպետ զհարով իշխանութեամբն շրջել. սպա եկն եւ սուրբ կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ ի Գրիգորէ, եւ զվկայարանսն սրբոցն զվկայիցն, եւ անդ գլխատակս սրբոցն կատարէր: Ապա դէպ եղև անցանել Հայր մարդպետին առ տեղօքն, ցանկացաւ ելանել ի սուրբ տեղիսն Աշտիշատու կալ յաղօթս, եւ առնուլ ողջոյն ի սրբոյ եպիսկոպոսապետէն Ներսէսէ: Ապա իբրև կային⁸¹ յաղօթս, ետուն ողջոյն. հրաման տայր սուրբ հայրապետն Ներսէս, եկելոցն⁸² ճաշ պատրաստել: Եւ մինչ դեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագօրէն սպաս, նա ելանէր յեպիսկոպոսական կայանէն յապարանիցն մինչեւ ի վկայարանս սրբոցն. ի մեծ եւ ի գեղեցիկ հրապարակին զերթեւեկս առեալ շրջէր, զճեմն առեալ: Ապա տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղութեան ի բարձրավանդակ տեղեացն եւ զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին. եւ չարակնեաց:

Ապա եմուտ բազմեցաւ յուտել եւ ըմպել: Իսկ յորժամ արբեցաւ սխաղակեցաւ, սկսաւ ներքինին խօսել բանս հպարտս եւ ամբարտաւանս յարբելեաց՝ դնէր թշնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս եւ կենդանեացն ի կեանս ազգի եւ տակի եւ տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց: Զիս⁸³ող, ասէ, զայսպիսի տեղիս կանացահանդերձ մարդկանս տուեալ է [Տրդատ], եւ ոչ արանց: Եւ զսուրբ տեղեօքն քամահեալ արհամարհէր, եւ ասէր՝ եթէ զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի: Եւ թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ եւ առ թագաւորսն հասից, ասէ, որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից. եւ որ աստ իցեն, ասէ զնոսա հանից, եւ զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից:

Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր, եւ ասէ՝ եթէ տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր աստ, որոյ անունն առ հասարակ ընդ ամենայն տեղիս փառաւորեալ է Հարբն եւ սուրբն Հոգովն հանդերձ, որ պատուիրեաց մի՛ ամենեւին յայլոյ ինչ ակն դնել կամ ցանգալ⁸³. Իսկ որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս, եւ այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի՛ հասցէ առ այն՝ որով սպառնացան, այլ խափան լիցի իւր յառջեւ նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց»⁸⁴: Ուրեմն սեփական հողատարածքների սակավությունը չէր, որ խանգարում էր Գրիգորին եպիսկոպոսություններ հիմնելու: Այստեղ հարցն այն էր, որ ուշադրությունը ժամանակավորի վրա ավելի խիստ չէր, քան հոգեւորի:

*

**

Մանավազակերտի (Ապահունիք) եպիսկոպոսները հետագայում եւս (4-րդ դար) մեծ դեր են խաղում: Եպիսկոպոսությունը ժառանգաբար

պատկանում էր Աղբիանոսի ընտանիքին, ինչպես կաթողիկոսությունը՝ Գրիգորի: Աղբիանոսն ու նրա հետնորդները, ինչպես Գրիգորն ու նրա շառավիղները, ամուսնացած էին: Երբ Հուսիկի սպանությունից հետո նրա որդիներ Պապն ու Աթանազիները, որոնք Գրիգորի ծոռներն էին, «ոտքի տակ տվեցին Աստծո քահանայապետությունը», եւ երբ Հուսիկի հետնորդ Փառենը (Փառ Ներսեհ) կարճ ժամանակ անց մահացավ, հայրապետ նշանակվեց մի ոմն Շահակ, որն Աղբիանոս եպիսկոպոսի սերնդից էր (Փաւստ., III, ԺԷ, էջ 45 եւ հաջորդներ): Իսկ երբ Պապ թագավորի կողմից թունավորված Ներսես կաթողիկոսի մահից հետո աթոռը կրկին որբացավ, «կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի գաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: Ետ հրաման ունել մնա գտեղի հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպան, եւ էր նա փոխանակ նորա» (Փաւստ., V, ԻԹ, էջ 232 եւ հաջորդներ):

Հայաստանի երկրորդ բաժանումից հետո պարսկական մասում սկզբնապես եպիսկոպոսների գլուխ կանգնած էր Զավենը. «անուանի գաւակ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղջէ Մանաւազակերտոյ» (նույն տեղում, VI, Բ, էջ 271): Երկրորդը, որ փոխարինեց եպիսկոպոսների գլխավորին, եղավ «Ասպրուկ ոմն ի գաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի», որն առաջնորդում էր Խոսրով Երրորդ թագավորի արքունիքում (նույն տեղում, VI, Գ, էջ 272, ԺԵ, էջ 279 եւ հաջորդներ):

Խոսրով Երրորդ թագավորի օրոք Պարսկահայաստանում Բասենի եպիսկոպոսներն էին.

1. Արտիթ, մի պատվական եւ պիտանի ծերունի: «Սա աշակերտեալ մեծին Դանիէլի՝ որ էրն յամս Տիրանայ արքայի, եւ կենդանի կայր յամսն Խոսրովու արքայի (Երրորդ) եւ Արշակայ (Երրորդ), երկուց թագաւորացն Հայոց» (նույն տեղում, VI, Է, էջ 274):

2. Մովսէս եւ

3. Տիրիկ

«Եւ էին երկու եպիսկոպոսք Բասենայ գաւառին, Մովսէս եւ Տիրիկ արք լարք հրեշտակակրօնք, սուրբ հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք: Առաջնորդէին իւրաքանչիւր ժողովրդոց ի ճանապարհն Աստուծոյ զամենայն կենաց իւրեանց» (նույն տեղում, IV, ԺԳ, էջ 279):

2. Խաղ, Բագրեւանդի եպիսկոպոս

Պատմության ընթացքով առաջ շարժվելով՝ հանդիպում ենք Բագրեւանդի Խաղ եպիսկոպոսին:

«Յաղագս Խաղայ եպիսկոպոսի Բագրաւանդացոց, զոր էր ձեռնադրեալ⁸⁵ եւ թողեալ էր Ներսէսի ետեղապահ յիւր տեղի⁸⁶ եւ թէ⁸⁷ որպիսի այր էր. եւ կամ որչափ նշանք կամ զօրութիւնք որ ի մնանէն լինէին⁸⁸, կամ թէ որպէս կայր ի ճշմարտութեանն, եւ ոչ առնոյր ակն թագաւորին մեծի Ար-

շակայ⁸⁹, եւ ընդդիմանայր եւս ընդդէմ նորա վասն անօրէնութեան գործոց ինչ. կամ որպէս խնամ տանէր աղքատաց⁹⁰, իբրեւ զեպիսկոպոսապետն⁹¹ Ներսէս:

Այրս այս Խաղ բուն էր սայ ի Կարին գաւառէ, ի գեղջէ Մարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, գառաջեաւ իւրով զսա էր սնուցեալ: Այլ իբրեւ ի միտս աջողակս եբեր, եւ յառաջադէմ եղեւ ի հաւատս, եւ հաւատարիմ յամենայն գործ գտաւ, իսկ իբրեւ յայնմ եւս առաւել ի պաշտօնն՝ գոր ունէր զսէրն ընդ եկեղեցին Աստուծոյ, սպա աղքատաց եւս տեսչութիւն ի սրբոյն Ներսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ եւս առաւել զբարեխնամութիւն ցուցանէր:

Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեզնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խաղ յեպիսկոպոսութիւն⁹² Բագրաւանդայ եւ Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ ետեղապահ, եւ գնաց: Իսկ աշխարհի ամենայն Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահպետք մեծազգեացք⁹³ եւ ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոյն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխատրին. զի հեռացաւ ի նոցանէ: Իսկ սուրբն Խաղ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրաման ի պահս եւ յաղօթս մտանել եւ ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսէսի: Եւ գամենայն ժամանակս, որչափ եւ արգելաւ նա անդ, համակ խնդրէին պահօք ժողովուրդքն. եւ ամենայնի իսկ Խաղն առաջնորդէր նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն զիովուսապետն Ներսէս. մինչեւ ի գալուստն նորա. մինչեւ կատարեաց Տէր զաշխարհի խնդրուածս, եւ դարձաւ սուրբն Ներսէս ի տեղի իւր:

Չայնու ժամանակաւ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ի ճանապարհ Աստուծոյ գնացեալ լինէր. զի որչափ ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ի լիութեան ի շաղաշատութեան հատաւ. գոր սուրբ հովիւն Խաղ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, որում ոչ ինչ անսացեալ լինէր:

Չայնու ժամանակաւ իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոզ գաւառի (այսինքն՝ Կոզայ-հովիտ): Ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ. եւ հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ, եւ ամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւ արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեացեն ի դաստակերտն շինեսցին: Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունի-

ցի, կամ որ յումեքէ երկիւղած ինչ իցէ, եւ եկեսցէ յայն տեղի, դատ եւ իրաւունք մի՛ լիցցին: Իսկ եթէ որ ումեք ինչ պարտիցի եւ որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի եւ իրաւանց կայցին, եւ ի դուրս տարցեն:

Իբրեւ ել հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետեւ յայն տեղի ամենայն գողք եւ աւագակք, արիւնահանք, սպանողք, սուտք եւ մարդէլոյգք, վնասակարք, գանձահատք, գրկողք, ստաղատք, զրախօսք, գերփողք, յակշտակողք, ժլատք: Բազում վնասս վնասս առնէին, եւ անող անկանէին, բազում կանայք զարս թողուին, եւ անող անկանէին. բազում արք զիրեանց կանայս թողուին, եւ զայլոյ կանայս առեալ՝ անող անկանէին. բազում ծառայք զիրեանց տէրանց զգանձս ըմբռնեալ, փախուցելաք անող անկանէին. բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ. անդ անկանէին. գերփէին աւերէին գերկիրն ամենայն: Չի թէպէտ եւ կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր. եւ իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին: Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին⁹⁴ եւ ասէին ի հաւանել բանիցն իւրեանց. այս բարք ըստ այսմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան⁹⁵ եւ վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր⁹⁵ եւ կորուսեալ էին, ուր եւ էր⁹⁵ ջանայաք խնդրեաք գտանեաք:

Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ, բազմացաւ եւ ելից զիովիտն ամենայն: Ապա տայր հրաման արքայն Արշակ դնել անուն դաստակերտին յիւրակից անունն Արշակաւան. եւ շինեցին եւս անդ ապարանս արքունի: Եւ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին ի Տեառնէ ամենելին, եւ ամենայն մարդ զրկեալ էր իրօքն այնոքիւք, եւ բազմաց հառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր: Վասն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա եւ յանդիմանէր սուրբն Խաղ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, թէ եկ ուղղեա սեղան յեկեղեցուջն յաւանն յԱրշակաւանն: Իսկ նա բազում անգամ կշտամբէր եւ յանդիմանէր զթագաւորն Արշակ եւ զամենայն մեծամեծս եւ զիշխանս: Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. եւ ոչ ինչ առանց այնորիկ, որ⁹⁶ թողն⁹⁷ զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ: Ապա կամեցեալ Արշակ թագաւորն պատուաւ եւ ազահուրեամբ կարասոյն մեքենայի (*μηχανή*) խաբել զսուրբ եպիսկոպոսն Խաղ, բազում ոսկի եւ բազում զանձս արծաթոյ, եւ բազում նժոյքս (նժոյգ) զարքունական ձիոյ՝ արքունի օճառովք (աւճառք) ոսկիվարաւանդ⁹⁸ ապրդովն, տայր նմա. պատրել հանել զմիտս նորա, յինքն յանգուցանել: Իսկ նա զկարասին, զոր առնոյր յարքայէն, յանդիման նորա աղքատաց բաշխէր, եւ զյանդիմանութիւնն ոչ ինչ թուլացուցանէր, մինչեւ հրամանն տայր [թագավորն] հալածեր զեպիսկոպոսն Խաղ ի բանակէ անտի:

Իսկ նա առ շրջել ընդ աշխարհն, կարգել եւ խրատել, ուսուցանել եւ դարմանել զաղքատսն, որպէս էր նմա յանձն արարեալ սրբոյն Ներսիսի, եւ իր գնացեալ: Բազում նշանք եւ արուեստք եւ զօրութիւնք բժշկութիւնք հիւանդաց լինէին ի ձեռս նորա. բազում յոյժ առնէր սքանչելիս մեծամեծս: Բայց իբրեւ պաշտէր զաղքատսն, եւ սպառէր թափէր զամենայն յորանս եւ զնորամասնս եւ զմառանս զինոյն, եւ զկարասս ամենայն մառանացն տայր բաշխել աղքատացն, երթայր յայլում ատուր տեսանէր լցեալ ինքնին իբրեւ ի հրամանէ Աստուծոյ. եւ դարձեալ օր ըստ օրէ մատակարարէր աղքատացն, եւ այն ստէպ ստէպ լցեալ լինէր:

Այսպիսի սքանչելիք մեծամեծք լինէին ի ձեռն առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի եւ հոյակապ ի մէջ ամենայն Հայոց, շրջէր խրատէր եւ ուսուցանէր զեկեղեցիս Հայոց ընդ ամենայն տեղիս իբրեւ զիր վարդապետն զՆերսէս: Բայց ի ժամանակեան միոջ եկին գողք, եւ գողացան զեզինս եկեղեցոյն սրբոյ զԽաղայ եպիսկոպոսին, առին եւ գնացին: Իսկ ի միում ատուր աչք կուրացեալ եղեն գողոցն, եւ ինքեանք յանմաստս առ խարխափս եկին ածին ի դուրս սրբոյն Խաղայ զամենայն եզինսն: Իսկ ինքն սուրբ Խաղ ելեալ տեսանէր զնոսա, եւ զոհանայր զՏեառնէ՝ որ այնչափ վերակացու եւ այցելու եղէ հաւատացելոց իւրոց: Կայր յաղօթս եպիսկոպոսն Խաղ. եւ բժշկէր զաչս գողոցն, եւ հրաման տայր լուանալ զանձս նոցա. եւ դնէր ճաշ առաջի նոցա, եւ քաջ ուրախ առնէր զնոսա մեծապէս: Ապա օրհնէր զնոսա. եւ տայր նոցա զեզինսն՝ զոր իւրեանցն էր գողացեալ, եւ արձակէր զնոսա զիւրեանց ճանապարհն. եւ գնացին: Այսպէս բազում համբերութիւնս յամենայն գործս իւր ցուցանէր. եւ բազում առնէր նշանս եւ զսքանչելիս: Եւ էին նորա երկու դստերք, եւ ետ զմիսն Ասրկոյ ումեմն կին, եւ զկնի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Խաղայ»⁹⁹:

Երբ Ներսէս կաթողիկոսը վերադարձավ իր այսպէս կոչված արքորից, «ի վերայ հասանէր իւրում ետեղապահին սրբոյն Խաղայ, զի էր կացեալ ի ճշմարտութեան եւ յողորմութեան, եւ գնացեալ էր զճանապարհս Տեառն Աստուծոյ. եւ ոչ էր թիրեալ յաջ կամ յահեակ, բազում գոհութիւնս մատուցանէր Աստուծոյ, զի զԽաղ զհոգեւոր որդեակն իւր եզիտ ըստ կամացն՝ որպէս ինքն կամէր. զնա անձկով տեսանէր: Այլ յորժամ լսէր ի Խաղայ զամենայն զանօրէնութիւնս չարութեանն ծուռ գնացիցն թագաւորին, տրտմէր, լալր, ողբայր եւ կոծէր մեծամեծ հեծեծանօք, մանաւանդ վասն քաղաքին Արշակաւանին, զի անօրէնութեամբ եւ չարութեամբ եւ յափշտակութեամբ շինեցաւ բազում մեղօք»¹⁰⁰:

Նավասարդի մեծ տոնի նախօրէին «... տօն դիպեցաւ յիշատակին մեծին Յովաննու¹⁰¹, որ ի Գրիգորէ եւ ի Տրդատայ յաւանին Բագաւանին (Բագրեւանդում) կարգեալ էր: Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակք

մարդկան՝ որ ժողովեալն էին, եւ բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. եւ ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽաղ, եւ զիւր արքեիդիակոնն եպիսկոպոսին (*ἐπίσκοπος*)¹⁰², որում անուն Սուրիկ կոչէր. զի երթիցեն նոքա, պէտք զինչ եւ իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն: Եւ ինքն անդէն մնաց յարքունական բանակին (Շահապիվանում), զի գնոյն հաղորդութեանն եւ անդ կատարեսցին»¹⁰³: Այդ տոնի ժամանակ թագավորի բանակում պատանի Գնէլը ենթարկվում է մահապատժի (29 օգոստոսի 359 թ.):

Խաղ եպիսկոպոսը Պապ թագաւորի օրոք եւս եղել է Ներսէս կաթողիկոսի տեղապահը: Թագաժառանգն անուղղելի արվամոլ էր, եւ երբ տարվում էր իր սիրելի ահրիմանական գործերով, դէտերը օձերի կերպարանքով դուրս էին գալիս թագավորի ծոցից եւ փաթաթվում նրա ուսերին¹⁰⁴: «Բայց յորժամ հայրապետն Ներսէս մտանէր առաջի նորա կամ սուրբ եպիսկոպոսն Խաղ, դէպքն չերեւեալ աներեւոյթ լինէին»¹⁰⁵: Խաղի փեսան՝ Ասրուկը, փոխարինում է նրան Պապի մահից հետո:

*

**

Խաղ եպիսկոպոսն անտարակույս առաջին հայ եպիսկոպոսն է, որի հավաստիությունը վկայում է մաեւ հուշարձանը: Հռոմեական աշխարհաքարտեզի վրա Արտաշատ-Սատաղ ճանապարհին Raugonia-ից (Geogr. Rav. II 4 p. 49, 14 Ragauna, II 9 p. 63, 10 Ragaunia) արեւմուտք նշված են հետեւյալ կայարանները.



Raugonia

Colchion XXIII

» Chadas XXIII (Rav. II 12 p. 74, 9 Chadas).

Armanas XVII

» Andaga XII (Rav. p. 74, 10 Andacas, Bandachas).

Chadas եւ Andaga կայարանները, ինչպէս Raugonia-ն եւ Artaxata-ն նշված են երկու աշտարակներով, որ հաստատում է դրանց՝ կայազորով ամրացված վայր լինելը: Ռ.Կիպերտը (Formae orbis antiqui Taf. V, 1909, տեքստ) Raugonia-ն տեղադրում է Պարանաուտում՝ Կողբից եւ Սուրմալուից (Սուրմառի) արեւմուտք, ինչպէս մաեւ Էլքչիմագում՝ Կարսից հարավ-արեւմուտք, Կոնրաղ Սիլլեր (Itineraria Romana, Stuttgart, 1916, սյունակ 677 եւ քարտեզ 242 սյունակ 745 /6/) Բայազէդում (Լիմչի քարտեզում՝ Bayazid Agha՝ Բերկրիից հյուսիս), Սոյուք-սու գետի ափին: Նրանք երկուսն էլ բացահայտ սխալվում են: Isumbo-ն, որտեղ Tigranakert-Zanse-

rio (Rav. Zancerion) Cymiza (Rav. Dimiza)- Dyzanas (Rav. Dizanas)- Patansana (Rav. Patransana)- Vastauna (Rav. II 9 p. 63, 17 Bastavena)- Molchia (Rav. Maia)-Dagnevana (Rav. Dognavana)-Flyoana ճանապարհը սուր անկյամբ թեքվում է ձախ, իմ կարծիքով, համընկնում է Ծումբ գյուղին, որը գտնվում է Ապահունիքում, Արճեշից հյուսիս-արևմուտք, ոչ շատ հեռու¹⁰⁶: Jsumbo-Raugonia ճանապարհահատվածը անտեսված է եւ փոխարինված (Cobdi)-Nasabi-Antebo-Sovae-Catispi-(Artaxata) գծի սխալ կրկնությամբ: Այնինչ այստեղ նշված է Arsania կայարանը, որը Rav. II, 4 p. 49, 15 տեղադրված է Ragauna-ի եւ Isumbo-ի միջեւ, եւ որն անշուշտ ոչ մի կապ չունի Nabarra-ի (Nararra, աղյուսակ) եւ Sardera-ի (Sardebar, աղյուսակ) միջեւ գտնվող Arsania-ի հետ (p. 50, 12): Անվան հիմքում ակնհայտորեն ընկած է Arsanius (հայ. Արածանի) գետանունը, այստեղից նաեւ՝ ad Arsaniam¹⁰⁷: Արսանիաս գետի ակունքները փաստորեն գտնվում են Արճեշից հյուսիս-հյուսիս-արեւելք, Նպաստ (այժմ Ալա դադ) լեռան լանջերին:

Raugonia-ին պետք է համապատասխանի կենտրոնական դիրք ունեցող վայր. ի նկատի ունենք այն ժամանակվա Հայկական թագավորությունը բաժանումից առաջ, և դա Բագավանն է, այժմյան Ուշ Բիլիսան «երեք եկեղեցի»՝ Դիադինից հյուսիս արևմուտք, որի անունը կապված է ճամփորդներին ապաստան տվող աստծո (Վանատուր) հետ՝ իրանական Բագա կամ Միթրա աստվածությունը, որի տոնը՝ *Μεθ' ἄκαια*, Միիրագանը, նշվում էր Միիր (հոկտեմբեր) ամսին և հնում Նոր տարին (Նավասարդ) էր, իսկ հետագայում տարվա սկիզբը զարնանային գիշերահավասարին տեղափոխելուց հետո դարձավ այդ ժամանակվա Նոր տարին: Ք.ծ.ա. 400 թ. Միիրի 1-ը համընկնում էր սեպտեմբերի 23-ին (հուլ.), Ք.ծ.հ. 256 թ. Նավասարդը սեպտեմբերի 23-ին էր, 325 թ.՝ սեպտեմբերի 6-ին: Քրիստոնեության ընդունումից հետո այդ տոնը, որ միաժամանակ նաև բերքի տոն էր, փոխարինվում է սուրբ Հովհաննես Մկրտչի (հնում հավանաբար Աթանագինես մարտիրոսի) հիշատակի օր:

Որ Բագավանը շատ կարևոր կայարան էր հունական սահմանից Վաղարշապատ ինչպես նաև Արտաշատ գնացող ճանապարհին, պարզ երևում է Ագաթանգեղոսի երկում (պարբ. 817-819)¹⁰⁸, իսկ որ այն շատ կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող վայր էր, երևում է այն երկու հիշատակությունից, որ վերաբերում են Վաղես կայսեր գործողություններին՝ ուղղված պարսիկներին սպառնալիքների տակ պահելուն՝ առանց խաղաղության բացահայտ խախտման (Փաստ., V, Գ, էջ 196 և V, ԽԳ, էջ 259, ինչպես նաև Ammian. 29, 1, 3): Այստեղ Vagabanta-ն Բագրևանդ գավառանվան և Բագավան տեղանվան

խառնուրդն է: Փափստոսը (V, Ա, էջ 191, 35) գրում է. «Եւ զօրսն Յունաց յԵռանդ¹⁰⁹ և ի Բախիշն¹¹⁰ ընդ ամենայն երկիրն Հայոց բաշխէին¹¹¹ ընդ ամենայն զաւառսն»: V, Գ, էջ 196, 18 և հաջորդներ. «Եւ եկեալ զօրքն Պարսից ասպատակ առնէին և ի միջաշխարհն Հայոց. ապա և թագաւորն Հայոց Պապ զօրաժողով առնել հրամայէր ի Բագաւանն: Եւ զօրքն Յունաց, որ էին յԵռանդին ի Բախշանն¹¹² ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ, և ածին փոս (φόσσα) զքանակաւն իրեանց մօտ ի լեառնն ի Նպատ մեր ի գետն Եփրատ, եւ կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն»: Ինչպէս նաև V, ԽԳ, էջ 259 ասվում է, որ Մերուժանը գալիս հասնում է Կոզ գավառը (Դարոյնք բերդով), դիրք գրավելով լրտեսներ է ուղարկում Մանուէլ Մամիկոնյանի բանակը: Վերջինս գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան ավանում, որի մոտակայքում էին գտնվում Չարեհավանդ (1. Չարեհավան) քաղաքի ավերակները: Կոզից (Բայազետի մոտ) Բագավան տանող ճանապարհն անցնում էր լեռներով, որոնք կոչվում էին Եղջերք (Եղջուրներ):

*

**

Այսպիսով, Ragauna, Ragaunia գրութայն ձեւերը Ռավեննացու մոտ ավելի ճիշտ են, քան Raugonia-ն, որ կարելի է վերականգնել Ragauna կամ *Bagauana, ինչպէս նաև Vastauna, Rav. Bastauena, 63, 17¹¹³:

Andaga տեղանունը հայտնի է բյուզանդական եպիսկոպոսութայնների ցուցակից: Մի բնագրում, որը Հ. Գելցերը վերագրում է Հովհաննես Չմշկիկ կայսեր ժամանակներին, Տրապիզոն /Խաղիա/ մայրաքաղաքի պաշտոնյաների ցանկում թվարկված են¹¹⁴.

η δ *Μανανάλεως*

θ δ *Ζαρινάκων*

ι δ *Αυδάκων*

ια δ *Μεσοσυνη*

ιβ δ *Χαχάιου*

ιγ δ *Σακάμου*

ιδ δ *Χαβτζιτζιου*

ιε δ *τὸ Χαντιερχ*

ις δ *τὸ Ὀλνοίτην*

ιζ δ *Φασιανης*

ιη δ *τὸ Σερμάντζου*

Փոքր-ինչ ավելի ուշ շրջանում ընդօրինակված բնագրում ցուցակն ունի հետևյալ տեսքը.

$\overline{\eta}$	ὁ Σακάβου	
$\overline{\theta}$	ὁ τοῦ Χαβτζῆζου	
$\overline{\iota}$	ὁ τοῦ Χαντιερχ	$\overline{\iota\delta}$ ὁ Ἀνδάκων
$\overline{\iota\alpha}$	ὁ τοῦ Ὀλνούτη	$\overline{\iota\epsilon}$ ὁ Ζαρινάκων
$\overline{\iota\beta}$	ὁ τοῦ Φασιανῆς	
$\overline{\iota\gamma}$	ὁ τοῦ Σερμάτζου	

Այդ տեղանուններից ծանոթ են Մանանաղին¹¹⁶, Փասիան¹¹⁷=Բասենը, Ὀλνούտի¹¹⁸=Օղնուտը՝ Գյունեք գետի վրա¹¹⁷ Տերմաձոս=Եւ Սրմանց լեռան, Անանիա Շիր., Աշխարհ., 31, 6 τὸ κάστρον τοῦ Τζερματζοῦ Konstantin Porphyrog. de administr. imp. c. 44 p. 194, 8, այսինքն՝ Բինգյուղա¹¹⁸ τὸ Χαβτζῆζου = հայ. Հաւաճիչ, Հաւճիչ, Արիս. Լաստ., 4, 82, Ստեփ. Ա., III, ԽԳ, էջ 276. **Ἡσάβου** **Ἡσάβου**, G. Freytag, Geschichte der Hamdaniden, ZDMG X, I, 467: Ըստ Արիստակեսի՝ Հավաճիչը գտնվում էր Ադրբի գավառի կողմերում: Երբ Լիպարիտի որդի Իվանեն, որին որպես պարզեւ բնակության տեղ էին տվել Հաշտեանք գավառի Երեզ մեծ ավանը եւ շրջակա դաստակերտները, իմացավ Հռոմեական կայսրությունում քաղաքացիական պատերազմի մասին (հյգ. 506 թ.=1057/8 ինդ. X), խաբերությամբ առնելով Եղանց բերդ (Օղնուտ) ամրոցը, կրկին վերադարձավ Ադրբի գավառն ու Հավաճիչ ամրոցը: «Հիջրի 328թ. (18 հոկտ. 939-5 հոկտ. 940) Մծբնացի Սայֆ ադ-Դաուլան հույների դեմ պատերազմի ժամանակ գրոհում է Գալիս (այսինքն՝ **قاليغلا** Qaliqala=Էրզրում) քաղաքի վրա: Հույները վերջինիս դեմ դիմաց մի քաղաք էին կառուցել, որին տվել էին **Ἡσάβου** անունը: Նրանք, տեղեկանալով գրոհի մասին, այրում են քաղաքն ու դիմում փախուստի: Այդ մասին երգել է բանաստեղծ ան Նամին: Այնուհետեւ ադ-Դաուլան վերադառնում է եւ մինչեւ ձյան հալչելը մնում է Արգնում (Արգան, սիր. Արգոն)՝ Հայաստանի սահմանի մոտ: Այստեղ նրան այցի է գալիս Հայաստանի եւ ազ Զավազանի (Անձավացի)¹¹⁹ այսինքն՝ Վասպուրականի Գագիկ թագավորը, ապա նա գնում է Խլաթ՝ կենտրոնական Հայաստանի մայրաքաղաք» եւ այլն: Ըստ Ստեփանոս Ասողիկի՝ Վասիլ Երկրորդ կայսրը (Ք.ծ.հ. 1000 թ.), երբ անցնում էր Հանձիթի, Բալուի, Կոհեր լեռան (գտնվում է Հաշտեանքի, Ծոփքի եւ Խորձեանի միջեւ), Արշամունիք գավառի Երեզ քաղաքի մոտերքով, հասնում է Հավճիչ լեռն ու քաղաքը, ուր նրան մեծարանքով ընդունում են Աբխազիայի Բագարատ թագավորն ու նրա հայրը՝ Վրաստանի Գուրգեն թագավորը: Այստեղից նա գնում է Հարք գավառի Մանակլերտ քաղաքը: Պետք է ենթադրել, որ Հավաճիչը պետք է գտնված լինի Գյունեքի

ակունքների մոտ, Օղնուտից հյուսիս, հյուսիս-արևելք: Μεσοսνῆ-ն կարող է Վաժնունիքը լինել, հին հայ. Վարաժնունիք, գավառ Տուրուբերանում, որը թվարկվում է Հարքի կողքին եւ տարածվում էր մինչեւ Արածանի, Անան. Շիր., 30, 13-14, Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, էջ 322¹²⁰: Այդ դեպքում հանձին *Χαλα* ԾԽ-ի, որ դատելով թվարկման հերթականությունից, դժվար թե կապ ունենա Եկեղյաց գավառի Խախ ավանի հետ, ուր Պապ թագավորի ապարանքն էր (Փաւստ., V, ԻԳ, էջ 222, 6-7, 223, 33), կարելի էր տեսնել Հարք (սեռ. Հարքայ) գավառը, որ *τὸ Χάρσα* առավել ճիշտ ձեւով վկայում է Կոստանդին Ծիրանածինը (de administr. imp. c. 44 p. 193, 7. 195, 12): *Σακάμους* եւ *Σακάβους* անունները պետք է ենթադրել Սուկաւ-ը՝ լեռ Բագրեւանդ գավառում, Ստեփ. Ասող., III, ԽԱ, էջ 371=206, 6, Հովհ. Մամիկ., էջ 9=թարգմ. Langlois, I, 362 a, նաեւ՝ Չրքաշխ (Սուփերք հայկականք, 19, 33. 63, 65), այժմ՝ Քյոսա դաղ Վաղարշակերտի (Ալաշկերտ) մոտ, Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, էջ 465: *Καντιεοῦ*-ը=**հանդերձ**, միջ. հայ. *Հանթերձ, ծանոթ չէ ինձ: *ὁ Ἀνδάκων*-ը (այս ձեւն ամեն դեպքում ավելի ճիշտ է, քան *ὁ Ἀνδάκων* cod. Athen. 1372) սովորաբար զուգակցվում է *ὁ Ζαφινάκων*-ին: Վերջինս, անշուշտ, **Չարինակ** հայտնի ամրոցն է Հայկական թագավորությունում, որը 543 թ. (1094/5) պաշարում եւ գրավում է Անտիոքի տեր Աղուսիանը՝ Դ-դուշ (Տուտուշ) սուլթանի զորապետը, Մատթ. Ուռհ., էջ 248, 14-16=208:

Տարոնում գտնվող «ի հարաւոյ կուտ վանացն, որ ի գլուխ Նարդակայ (տորք. 1 Սադակայ), եւ հայի ի փոքր ամրոցն Մեծամոր ներքոյ Նարդակայ՝ գոր Անդակն կոչեն» (Հովհ. Մամ., էջ 11, 25=28=I 363 a Langlois, 35, 18=371b. 41, 12-14=374 a: Հմմտ. Ինճիճյան, Նոր Հայաստան, էջ 191, Հյուբշման, նույն տեղում, 452) ոչ մի կապ չունի բյուզանդական եպիսկոպոսությունների հետ:

Այնինչ Andaga կայարանի տեղադրությունը կարելի է որոշել Aramanas-ի օգնությամբ: Դազար Փարպեցին գրում է, թե ինչպես Վարդանանց ապստամբության սկզբնական շրջանում դիմադրության կողմն անցած հայերը «միաբանութեամբ արհամարհեալ զամենայն սնոտի մեծութին կենցաղոյս այտորիկ՝ առ ոչինչ համարեցան այլ հանդերձ հաւանելովք ընդ ինքեանս դրամբ եւ ընտանեօք դէմ եղեալ անցանել ի կողմանս իշխանութեանն Յունաց ճեպէին, որ եւ թագուցանել միաբանութեամբ եւ կամ աստ անդր ցրուել զանձինս կարասցեն: Եւ եկեալ հասանէին գիող մի, որոյ անուն էր Արամանայ, ի նահանգին Բագրաւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ եւ Տուարծատափու. ուր եւ սակաւինչ աւուրս կամեցեալ հանգչել, եւ զուշ եղեալ, ճանապարհն զնալ պատրաստէին ստիպով»¹²¹:

Այստեղից Վարդանը իր յուրայինների հետ շարժվում է դեպի Ծաղկոտն գավառը, դեպի այն ամրոցը, որ կոչվում էր Անգղ (զլ. 31, էջ 60, 19-23=291a): Ուրեմն Արամանայ գյուղը գտնվում էր Բագրեւանդ գավառի արեւմտյան ծայրում, Բասեն եւ Տվարածատափ գավառների սահմանին, միաժամանակ նաեւ Պարսկաստանի եւ Հռոմի, որին պատկանում էր Բասենը, իշխանությունների ոլորտի այն ժամանակվա սահմանին: Արամանայը գտնվում էր հենց այն ճանապարհին, որը Բագրեւանդից գնում էր հռոմեական մաս, այսինքն՝ դեպի Թեոդոսուպոլիս (Կարնոյ քաղաք, Էրզբրում) եւ նշված է Պետինգերյան քարտեզում: Բավական է մի հայացք ձգել Հյուբշմանի քարտեզին (Die altarmenischen Ortsnamen), համոզվելու համար, որ Արամանայ գյուղը լիովին համապատասխանում է Armanas կայարանին: Այդ դեպքում Andaga կայարանը կարելի է տեղադրել Դելի-բաբա լեռնանցքի ելքից հյուսիս: Ըստ այդմ Chadas կայարանը եւս գտնվել է Բագրեւանդում: Այն հավանաբար նշում է Խաղի/սեռ. Խաղայ/ եկեղեցու վայրը (Փաւստ., IV, ԺԲ, էջ 111), որն էլ Ուղեցույցի ստեղծման կարեւոր terminus post quem-ն է: Ամենայն հավանականությամբ վերջինս, ինչպես նաեւ Արիների երկրից նահանջի (այսպես կոչված Ալեքսանդրի) ուղեցույցը եւ, ցավոք, կորած Արիական Պարթեւտանից երթի նկարագրությունը Կոստանդինոս կայսեր նախապատրաստություններն էին պարսիկների դեմ ծրագրված պատերազմի: Բագավանի եկեղեցին Խաղը չդարձրեց եպիսկոպոսական Մայր տաճար, քանի որ նրա եկեղեցական ծխերը Բագրեւանդ եւ Արշարունիք գավառներում էին, իսկ Բագավանի եկեղեցին ծայրամասում էր, այլ կառուցեց մի նոր եկեղեցի, որը գտնվում էր երկուսի սահմանի մեջտեղում:

*

* *

Նախքան մեջ բերված տեքստերից անհրաժեշտ հետևություններ անելը, բերեմ մի քանի հատված եւս: Հուսիկ կաթողիկոսը՝ դաժան ծեծի ենթարկվելուց հետո «գոր բարձեալ պաշտօնէիցն դրան եկեղեցւոյն ի Բնաբեղ բերդէն արքունի՝ մեծ Ծոփաց գաւառին, եկին բերին ի գաւառն Դարանաղեաց ի գեղն Թորդան. եւ անդ ոչ ինչ յետ բազում ատուրց հանգեաւ, եւ եղաւ մօտ առ Գրիգորի եւ ընդ հարս իւր»¹²²: Դանիել քորեպիսկոպոսի սպանությունից հետո նրա սիրելի աշակերտներ Շաղիտան ու Եպիփանը եւ նրանց հետ նաեւ բանակի հոգեւոր պաշտոնյաները /**պաշտաւնէիցն եկեղեցւոյ բանակի**/ վերցրին նրա սուրբ դին, եւ տարան թաղեցին Տարոնում, Աշտիշատի Հացյաց դրախտ վայրում¹²³: Նույն կերպ Փառեն կաթողիկոսի մահից հետո «առեալ պաշտօնէիցն եկեղեցւոյ բա-

նակին զմարմինն, զնացեալք ի գաւառն Տարօնոյ տարան ի յագարակն¹²⁴ մեծի մարգարէանոցին Յովհաննու, որ էր ինքն ի կենդանութեանն իրում յառաջագոյն բնակեալ. եւ զտրա ոսկորս ծածկեցին»¹²⁵: Ներսէս կաթողիկոսի մահից հետո «առեալ զմարմին սրբոյ Ներսէսի զառնն Աստուծոյ պաշտօնեայք (պաշտամեայք) եկեղեցոյն, եւ Փաւստոս եպիսկոպոս, եւ պաշտօնէիցն (պաշտամեիցն) գլխաւոր Տրդատ, եւ Մուշեղ սպարապետն եւ Հայր Մարդպետ, եւ ամենայն ազատագունդ բանակն արքունի, բարձին յաւանէն ի Խախ գեղջէ՛ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիլն յաւանն յիւր գեղն: Թագաւորն Պապ երթեալ պատեաց եւ թաղեաց ի մարտիրոսական ի բնակութիւն»¹²⁶: Վախճանված Սահակ կաթողիկոսին եւս «առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք, ձեռնասուն աստուածաւէր պաշտօնէիցն իւրոց, որոյ գլխաւորին (ավագ սարկավագ) Երեմիա անուն ճանաչէր»... եւ տարան նրան ու հասցրին Տարոն, իր տոհմական Աշտիշատ գյուղը (Կորյուն, էջ 42, 1 եւ հաջորդները): Փալստոսն իր երկի վերջում մեկ անգամ եւս հիշատակում է սարկավագապետ Տրդատին. «Եւ էր Գինդս այս ի Տարօն գաւառէ, եւ լեալ սա աշակերտ մեծին Դանիէլի. եւ յետ նորա էր գլուխ արեղայից, եւ վարդապետ միանձանց, եւ առաջնորդ մենակեցաց... Եւ էր նոցա բուն գլխաւոր սուրբն Գինդ, զի առ հասարակ ամենայն մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ: Բայց էին եւ ի նոցունց այլք աշակերտք, որք նմանէին իրեանց վարդապետին եւ նորա ձեռինն, որոց անուանք այս են. Վաչակ, Արտոյտ, Մարախ. եւ Տրդատ լեալ էր սոցա ընկեր: Իսկ առ մեծին քահանայապետին Ներսէսի էր լեալ սարկաւագապետ, եւ յետ մահուն Ներսէս ի նոյն յառաջին վարդապետսն յանապատաւորաց դասս թեւակոխեաց... Եւ սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարօնոյ, շինեալ զիւր¹²⁷ եղբայրանոցս»¹²⁸:

Հատկապես կարեւոր է հետեւյալ վկայությունը.

«Յաղագս Փաւստեայ եւ Չորթայ եպիսկոպոսաց

Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներսէսի եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին իբրեւ թելակալ: Մոյնպէս Չորթ այր ներքինի ընդ նոսին. քանզի էին ի ներքնի հայրապետին /ի տան/¹²⁹ իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր գործակիցք եւ խորհրդակիցք: Թող զայլոց գաւառաց ամենայն եպիսկոպոսեանն, որ ընդ նովա¹³⁰. այլ երկոքեան սոքա յայնց երկոտասանիցն: Եւ էին սոքա ի տեսչութիւն աղքատանոցացն հաւատացեալք, եւ յամենայն էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա, եւ յամս Խոսրովու (Երրորդ) եւ Արշակայ (Երրորդ) երկուց թագաւորացն բաժանաւորացն, մինչեւ դեռ եւս կային նոքա կենդանիք»¹³¹:

«Յաղագս Առոստոմայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսին

Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրօնազգեաց մենակեաց անապատակեաց լեռնական սքանչելի: Եւ էին լեալ տքա ազգաւ Հոռոմ. այլ այրս այս մեծաւ վարեօք շրջէր զամենայն աուրս կենաց իւրոց: Եւ էր սա բնակեալ յԱյրարատեան գաւառին, եւ վարէր նա Հոգով սրբով. շրջէր սա յանապատս մաշկահանդերձ ճարակաւոր ի լերինն մինչեւ յօր հանգստեան իւրոյ: Ապա հանգաւեւ սա. եւ բերին յանապատէն զմարմին տրա, թաղեցին ի բուն ի գեղոն հայրապետին Ներսէսի, որում անուն Ամօքն կոչի. եւ ամի ամի գլիշատակն նորա կատարէին»¹³²:

Ներսես կաթողիկոսի մասին կա մեկ այլ վկայություն եւս. «Եւ յօրէնսն սաստէր մեծապէս. եւ զոր օրհնէր. եւ զոր անիծանէր, անիծեալ լինէին: Եւ բազմացոյց զկարգս պաշտօնեից /պաշտամեից/ յամենայն տեղիս իշխանութեանն ի սահմանացն»¹³³ Հայոց, եւ յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս¹³⁴. եւ հանապազ զգուշանայր տեսչութեանն իւրոյ եւ իշխանութեան, որչափ եկաց նա ժամանակս»¹³⁵:

Ներսեսն ինքը, հակառակ իր կամքի, դարձավ կաթողիկոս: Արշակ թագավորը հրաման տվեց, եւ բերին կրօնավորի (κληρικός) զգեստներ հագցրին նրան. «ետ հրաման, եւ կոչեցին զժերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս, եւ տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութիւն»¹³⁶:

Այստեղից երեւում է, որ Ներսես հայրապետի կաթողիկոսարանում կար 12 պաշտոնյա, որոնք վարում էին տեսչությունը, եւ որոնց վստահված էր հատկապէս աղքատների խնամքը: Հավանաբար նրանց մեջ էր նաեւ Խաղը, որին անձամբ դաստիարակել էր Ներսես եպիսկոպոսապետը¹³⁷ եւ հանձնարարել աղքատների հոգաբարձության գործը: Երբ Ներսեսը որպէս դեսպան ուղևորվելու էր Կոստանդնուպոլիս /հավանաբար Ք.ժ.հ. 357 թ./, Խաղին ձեռնադրում է Բագրեւանդի եւ Արշարունիքի եպիսկոպոս եւ թողնում իրեն փոխանորդ: Այդ մեծ տարածքը հարավից եւ արեւմուտքից անմիջականորեն միացած էր Այրարատին՝ պետության կենտրոնական մահանգին: Որպէս եպիսկոպոս Խաղն ստանձնում է նաեւ աղքատներին սնելու կարեւոր գործը: Այս տեսանկյունից նրա պաշտոնը լիովին համապատասխանում էր Լատրենտիոս սարկավագի պաշտոնին: Ներսեսի վերադարձից հետո Խաղը եւ եպիսկոպոսական ավագ սարկավագ **արքիադիակոնն եպիսկոպոսն**/ Մուրիկը որպէս կաթողիկոսի տեղապահներ մասնակցում են Բագրեւանում նշվող տարեկան մեծ տոնակատարությանը: Ըստ երեւույթին Մուրիկը որպէս ավագ սարկավագ Խաղի հետնորդն էր, երբ վերջինս թեմ ստացավ: Ներսեսի մահվան ժամանակ ավագ սարկավագը Տրդատը կամ Տրդաձն էր: Կաթողիկոսի 12 խորհրդականները, որոնց թվում կար նաեւ մի ներքինի, իրականում սարկավագներ էին, վարչության պաշտոնյաներ եւ կրում էին **ἐπίσκοπος** տիտղոսը՝ իր նախնական «հսկիչ», հայ. **տեսուչ, վերակացու**

իմաստով¹³⁸: Պարզ չէ սակայն, թե այդ սարկավազապետերի հետ ինչ առնչություն է ունեցել Փավստոս եպիսկոպոսը: Ըստ երեւույթին հեղինակը ցանկացել է ընթերցողների մեջ այն տպավորությունն ստեղծել, որ Ներսեսի բարձրացման ժամանակ (350-ի եւ 357-ի միջեւ) եպիսկոպոս եւ արդեն ծերունի Փավստոսը եղել է Ներսես կաթողիկոսի եռուն եւ իրադարձություններով լի ամբողջ ժամանակաշրջանի ականատեսը՝ ապրելով նաեւ մինչեւ Հայաստանի երկրորդ բաժանումը (Ք. ծ. հ. 389 թ.): Եւ քանի որ նա Ներսեսի պաշտոնավարման սկզբում արդեն ծեր էր, ուրեմն նախորդ շրջանում եւս, Խոսրով Երրորդի եւ Տիրանի օրոք, եղել էր ականատես, հետեւապես եւ այդ ամբողջ ժամանակահատվածի՝ Լուսավորչի եւ Տրդատի մահից մինչեւ Հայաստանի բաժանումը, բանախոսը: Սա վարքագրության անհրաժեշտ պայման էր, որ կիրառվում էր այն բանից հետո, երբ Կորյունը առաջինը որպես ականատես եւ ժամանակակից իր կյանքի ընթացքի երկրորդ կեսին նկարագրեց երանելի Մաշտոցի վարքը¹³⁹: Այս հնարանքն արդեն իսկ կասկածի տակ է դնում հեղինակի այն տեղեկությունը, թե Փավստոսը Ներսեսի բարձրացման ժամանակ եպիսկոպոս էր, եւ այն էլ օժող եպիսկոպոս, այն դեպքում, երբ նա մրցակցության մեջ չէր կարող մտնել ավագ սարկավագ Խաղի հետ: Ամենայն հավանականությամբ Փավստոս եպիսկոպոսն այն նույն Փավստոսն է, որին Պապ թագավորը 373 թ. Ներսեսի մահից հետո ցանկանում էր Կեսարիայի մետրոպոլիտ Բարսիլիոսի ձեռքով եպիսկոպոս օծել տալ: Մեկ այլ թեւ, սակայն, ընտրում է ոմն Կրիլիոսի, եւ քանի որ Փավստոսը չէր կարողացել ներկայացնել Սատաղի Պոյմենիոս եւ Փոքր Հայքի Նիկոպոլսի Թեոդոսիոս եպիսկոպոսների հանձնարարականները, ուստի մերժվում է Բարսիլիոսի կողմից: Այնուհետեւ նա դիմում է Կապադոկիա 2-ի Անթիմոս մետրոպոլիտին, որը նրան առանց այլեւայլության օժում է¹⁴⁰: Ըստ այդմ ուրեմն Փավստոսը իրականում եպիսկոպոս է դարձել միայն 373 թ.:

*

* *

Ինչպես պարզեցինք, Ներսեսի կաթողիկոսարանի տասներկու «եպիսկոպոսներին» դիմաց, սկզբնապես եղել է Լուսավորչի օժած ընդամենը յոթ «եպիսկոպոս»: Նրանք եւս իրականում սարկավագներ էին, եւ միայն Լուսավորչի հետնորդ Վրթանեսի օրոք նրանցից երկուսը՝ ավագ սարկավագներ Աղբիանոսն ու Եւտաղիոսը, օժվեցին իբրեւ թեմակալ եպիսկոպոս: Հավանաբար նաեւ չորրորդը՝ Մովսեսը, փոխառված է Բասենի Մովսես եպիսկոպոսից (Փաւստ., VI, ԻԳ), ուստի նախնական ցուցակն այս է.

1. Աղբիանոս (°Αλβίνος), Վրթանեսի օրոք, Մանավազակերտի եպիս-

կոպոս,

2. Եւտաղիոս (Εὐθαλίος), Վրթանեսի օրոք, Բասենի եպիսկոպոս

3. Բասոս (Βάσσος)

/Մովսես, Մովսես, Բասենի եպիսկոպոս/

4. Եւսեբիոս (Εὐσέβιος)

5. Հովհաննես (Ἰωάννης)

6. Ագապես (Ἀγάπιος)

[Արտիթես (Ἄρτιος) = Արտիթ, Բասենի եպիսկոպոս]

[Արսուկես (Ἀρσούκης) Ասրուկ, Բագրեւանդի եւ [Արշարունիքի] եպիսկոպոս]

Անտիոքես (Ἀντιόχος)

Այս անուններն ամբողջությամբ հունալատինական են, մասամբ նույնիսկ մաքուր քրիստոնէական, նաեւ՝ ավետարանական: Ագաթանգեղոսի այն պնդումը, թե Գրիգորն այդ «եպիսկոպոսներին» օծել է դարձի եկած տեղացի հեթանոս քրմերի որդիներից, խիստ անհավանական է: Ավելի շուտ կարելի է ենթադրել, որ «եպիսկոպոսները» պատկանում էին այն «բազմութիւն տղարց զորս հաւանեցուցանէր ընդ իւր գալ, զի վիճակեցուցէ զնոսս ի քահանայութիւն յիւրում աշխարհին»¹⁴¹: Գրիգորն այստեղից հետը բերեց կրոնը, Փիղախթոս գյուղից Աթանագինես նահատակի մասունքները, եթե, իհարկեւ, այն ժամանակ այդպիսիք կային, իսկ իր Բղղօջուց անունը, որ կրում էր ի պատիվ Սքանչելագործի, ցույց է տալիս, որ Գրիգորը հասակ է առել ոչ թե Կեսարիայում, այլ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքում:

Այստեղից երեւում է, որ հնում՝ հայ եկեղեցու սկզբնավորման շրջանում, առաքյալների պատմության (6, 1-6) նմանությամբ նշանակվում է յոթ սարկավազ (վերակացու=ἐπισκοποι)՝ աղքատների գործն ու կառավարչությունը վարելու: Ավելի ուշ, երբ կանոնական տեսանկյունով օծվեցին եպիսկոպոս, նրանց թիվը հասավ տասի, իսկ վերջում՝ տասներկուսի: Ներսեսի օրոք, երբ աճել էր եպիսկոպոսի կարեւորությունը, հիշեցին առաքյալներին, եւ նրանց թիվը դարձավ տասներկու (Փաստ., VI, Ե): Սա մի երեւոյթ է, որ մշտապես կրկնվում է հերձվածների աշխուժացման ընթացքում: Տասներկու թիվն այնուհետ պահպանվեց նաեւ Հայաստանում մի շարք եպիսկոպոսությունների ստեղծման ժամանակ, եւ հաղթանակեց պետական եկեղեցուն բնորոշ՝ «եպիսկոպոս» կանոնական հասկացությունը: Փաստորեն 11-րդ դարում եւս կաթողիկոսարանում գործում էր տասներկու եպիսկոպոս, հռոմեական եկեղեցու կարդինալին հավասարագոր, եւ այդ ավանդույթն Էջմիածնում պահպանվեց մինչեւ 18-րդ դար: Այսօր Էջմիածնի կաթողիկոսական սինոդում կա հինգ եպիսկոպոս¹⁴²:

3. ԴԱՆԻԵԼ ՏԱՐՈՆԵՑԻ

Մայր եկեղեցու այս «եպիսկոպոսների» կամ ավելի շուտ սարկավագների թվում, որոնց միայն անուններն են հասել Գրիգորի ժամանակներից, խիստ առանձնանում է մի անձնավորություն. դա մեծ քորեպիսկոպոս (Missionsbischof)¹⁴³ Դանիել Տարոնեցին է: Նրա մասին Փավստոսը գրում է III, ԺԳ էջ 36 եւ հաջորդներ¹⁴⁴.

«Յաղագս վարուց եւ գործոց¹⁴⁵ մեծին Դանիելի քահանայի¹⁴⁶, ան Աստուծոյ, եւ թէ որպէս յանդիմանեաց զքազաւորն Տիրան, եւ կամ որպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ:

Բայց յայնժամ (Տիրան թագավորի օրոք) դեռեւս կենդանի էր ծերունի¹⁴⁷ սուրբն մեծն քորեպիսկոպոսն (χωρεπισκοπος) Դանիէլ. այր սքանչելի: Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի.

Ա

վերակացու¹⁴⁸ եւ գլխաւոր եկեղեցեացն¹⁴⁹ [իր] իշխանութեանն, /այլ/ վերակացու¹⁴⁸ եւ հրամանատար տեսուչ¹⁵⁰ եւ հոգաբարձու (=ἐπιμελητής) ամենայն եկեղեցեացն հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս. այլ եւ ի կողմանս Պարսից յօտար տեղիս քարոզեաց սա, եւ անթիս ի մոլորութեանէ դարձոյց:

Եւ էր սա այր զարմանալի, առնէր նշանս եւ զօրութիւնս մեծամեծս յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Սա եւ կօշկօք քայելոյն¹⁵⁷ գնայր ի վերայ ջուրք գետոց, եւ ոչ թանային¹⁶⁰ եւ ոչ հանէր սա: Եւ յաւուրս

Բ

վերակացու նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական [նահանգի] իշխանութեանն կողման գործակալութեանն մեծի դատաւորութեանն, ունէր զիշխանութիւնն [Տարոնում] զայն առանձինն¹⁵¹: Եւ սա էր ազգաւ ասորի եւ ունէր սա զաստիճան արքայն զխաւորութեան Տարօնոյ, ի մեծն եւ նախ զառաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեայց-այսինքն նախ եւ զառաջին եւ /գլխաւոր/ տեղին պատուական¹⁵³. զի առաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին, եւ ուղղեալ սեղան յանուն Տեառն¹⁵⁸: Նոյնպէս եւ ի ներքոյ քան

Գ

հաւատարիմ էր սա այնմ գլխաւոր տեղւոյն, իշխանութեան արքայն հայրապետացն, հաստատութեան ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն (καθολική): Եւ էր սորա ընկալեալ զքորեպիսկոպոսն (χωρεπισκοπή) ձեռնադրութիւն աստիճանին ի ձեռաց մեծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զբազինս մեհենիցն¹⁵² Հերակլայ՝ այս ինքն Վահագնի (Ինդրա), որում տեղւոյ¹⁵⁴ Աշտիշատն կարդացեալ¹⁵⁵. որ¹⁵⁶ [Գրիգոր] նախ եղ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ¹⁵⁹:

ձմերանոյն՝ յորժամ կուտեալ զի-
 գեալ զճնծութիւն¹⁶² բազմութիւն
 թանձրութեան ձեանցն կուտա-
 կեալ հիւսեալ ձեանցն ի վերայ
 ձմերային լերանցն՝ յայնպիսի լե-
 րանց ի վերայ ընդ այնպիսի ժա-
 մանակի կամէր ուրեք երթալ ի
 պէտս ճանապարհի, յանկարծօ-
 րէն¹⁶⁴ ձիւնն ցամաք¹⁶⁶ արջն լինէր
 առաջին նորա: Եւ զի կամէր ի հե-
 ռաստան ուրեք երթալ, իբրեւ
 զվիայլակն սլացեալ լինէր անաշ-
 խատ. իբրեւ թռուցեալ յոր կամէրն
 երթալ ի տեղին յանկարծօրէն անդ
 գտանէր: Յարուցանէր զճե-
 ռեալ¹⁶⁹, առնէր եւ բժշկութիւնս հի-
 ւանդաց, եւ այլ եւս մեծ նշանս եւ
 զօրութիւնս քան զնոյնս գործէր
 գորս ոչ բաւեսցէ ընդ գրով նշմա-
 րանաց¹⁷⁰ փակել: Եւ բնակութիւն
 իւրոց կայեմիցն յանմարդի լերինս,
 այլ զտեսչութիւն մարդկան պիտո-
 յից ոչ երբէք անփոյթ առնէր: Սիա-
 հանդերձ մաշկանափորտն սան-
 դադաւոր (*σάνδαλον*) եւ կերակուր
 իւր արմատք բանջարոց, եւ զաւա-
 զան անգամ ընդ ինքեան ոչ ունէր:
 Եւ առ բանն Աստուծոյ անչափ էր
 հզօր, զի զինչ հայցերն յԱստուծոյ՝
 առնոյր, եւ զոր ինչ ասէր՝ այն լի-
 նէր:

Արդ միաժողով եղեալ մեծամեծք
 նախարարացն, եւ ի մի վայր ե-
 կեալք, խորհուրդք խորհեցան. հա-
 ւանեցուցին զթագաւորն, ածել զժե-
 րունին զԴանիէլ յիւրեանց բա-
 նակն, զի ածցեն կացուսցեն զնա
 իւրեանց զլուխ առաջնորդ, զի նս-
 տի նա յաթոռն հայրապետական:

զնա մարգարեանոցն Յովհաննու,
 նոյնպէս մօտ ի տուն Տեառն Հան-
 գիատ առաքելոցն¹⁶¹: Արդ այս տե-
 ղիք վասն յառաջակարգութեան,
 կանոնաւ (*κανόν*) ի հայրապետացն
 եւ ի թագաւորացն պատուեալք լի-
 նէին. որպէս ի Դարանադեաց գա-
 ւառնին յեկեղեցին Թորդանու պա-
 տուիւն¹⁶³ վասն գերեզմանացն¹⁶⁵
 հայրապետին Գրիգորի: Սոյնպէս
 եւ զյիշատակս թագաւորին Տրդա-
 տայ թէ կամօք թէ ակամայ¹⁶⁷ որ
 արժանին լեալ էր նախածանօթ ի
 Քրիստոսն հաւատոց: Վասն այտո-
 րիկ կամ եղել [մեր] աշխարհին¹⁶⁸
 զնախնեաց ժամանակին հարանց
 եպիսկոպոսաց զայս տեղիս պա-
 տուել ուր սոքա եղեալն էին. զի սի-
 րելի էր աշխարհին, պատուել զյա-
 ռաջընծայն Քրիստոսի զթագա-
 ւորն իւրեանց Տրդատ: Նոյնպէս եւ
 զյառաջեպիսկոպոսն զնախավաս-
 տակն զԳրիգորիս. սոյնպէս եւ ի
 զաւառն Այրարատեան զնախավ-
 կայսն Քրիստոսի, ուր Գայիանէն
 եւ Հռիփսիմէն կային, իւրեանց
 հանդերձ գործակցօքն, սոյնպէս
 առաւել եւ զնախեկեղեցին: Այս
 տեղիքս սմա էին յանձն հանդերձ
 զաւառօքն յորս էին¹⁷¹:

Եւ յաճախ յակն աղբերն ի ներ-
 քոյ սարաբարձր մեհենատեղոյն
 Հերակլայ, որ կայ դէմ յանդիման
 լերինն մեծի՝ որում Յուլն (Տավրոս)
 անուանեալ կարդան¹⁷², ի բազմին
 տեղոջէ ի բացագոյն իբրեւ քա-
 ռընգէց մի ի ներքոյ կուսէ, ի դոյզն
 ծործորալին ի սակաւ անտառա-
 կին ի հացուտ պուրակին՝ որում ա-

Եւ յղեցին առ նա¹⁷³... իշխանն Սահառունեաց տոհմին, եւ զԱրտաւան զիշխանն Վանանդայ, եւ զԿարէն իշխանն Ամատունեաց տոհմին, եւ զՎարազ իշխանն Դիմաքսենից տոհմին:

նուն տեղոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն: Այս այն աղբիւրն է, յորում առնէր յայնմ եւս վաղ մեծն Գրիգոր զմկրտութիւնսն զօրացն բազմաց¹⁷⁴: Յայնմ տեղոջ էր սորա կայեանք խցկան սրբոյն Դանիէլի, էր դարաւոր արարեալ բնակութիւն, եւ յայնմ տեղոջ զդիտաւորութիւն այցելութեանն կատարէր:

Եւ եկին նախարարքն հասին գտին զնա յեկեղեաց գաւառին, ի գեղն եկեղեցոյն ի Թիւն. զի դեռ իմն զգործ մշակութեան Աստուծոյ գործէր: Եւ առին զնա եւ ածին առ թագաւորն Տիրան, ի գաւառն Աղծնեաց ի Գաւէջ (Բառաւէջ) յաւան: Եւ իբրեւ մտանէր առաջի թագաւորին Տիրանայ քրտեպիսկոպոսն (χρειατισκοπος) մեծն Դանիէլ, անդէն ի ձեռն առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն»:

Ապա հետեւում է պատժի խիստ քարոզ, հետո՝ նզովք, իսկ վերջում Դանիէլը հրաժարվում է առաջարկվող պաշտոնից, եւ թագավորը զայրացած հրամայում է խեղդամահ անել նրան.

«Եւ բարձին զմարմին նորա բազմութիւն մարդկան, որք տեղեակ էին նմա, գիտէին զնա. եւ կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրիստոսի: Ապա ինքն յայտնեալ երեւեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան, զի մի՛ ի պատիւ առցեն զոսկերս նորա, իբրեւ զայլոցն, այլ տարցին ի տեղին՝ ուր ինքն հրամայեաց, եւ ծածկեացն ընդ հողով: Չի այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. զի եթէ տէրունական մարմինն, ասէ, ի գերեզմանք ծածկեցաւ ատուրս երկուս մինչեւ զօրն երրորդ՝ յորում յարեաւ առ Հայր իւր, ո՞րչափ եւս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել: Ապա բարձին զմարմին նորա սուրբ սիրելիք իւր աշակերտք, որոյ գլխաւորին անուն էր Շաղիտա, որ ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վարդապետ տուեալ էր. եւ երկրորդին անուն Եպիփան, որ գաւառին Աղծնեաց եւ Մեծաց Ծովաց ի նմանէ իսկ վարդապետեալ¹⁷⁵ էր, եւ ընդ նոսա պաշտօնեայք բանակին: Եւ զնացին տարան, եղին զմարմին ի տեղոջն՝ ուր յառաջագոյն էր կայեանք խցկանն իւրոյ յերկրին Տարօնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մօտ յակն աղբերն՝ ուր առնէր Գրիգոր զմկրտութիւնսն աշխարհագոր բազմութեանն, ի տեղոջն՝ որ անուանեալ կոչի Հացեաց դրախտ: Յայնմ տեղոջ ծածկեցին զմարմին սրբոյն Դանիէլի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեւեանն ըստ հրամանի նոցա տուեալ»:

Գժվար չէ նկատել, որ այս ավանդագրույցը ձեւավորվել է երեք աղբյուրից: Գ-ում Դ-անիելը Տարոնի քորեպիսկոպոսն է, Բ-ում՝ նախ Տարոն գավառի մայր եկեղեցու վերակացուն, ապա Դարանաղի, Եկեղյաց եւ Այրարատ գավառների եկեղեցիների տեսուչը: Ա-ում նա կաթողիկոսի իրավասության տակ եղած ողջ տարածքի առաջնորդական տեղապահն է: Տարիներ առաջ գրական նման մի համեմատություն հայտնաբերեցի Կորյունի¹⁷⁶ հայ գրերի ստեղծման պատմության եւ Ազաթանգեղոսի երկի սկզբնամասում Արշակունիների տիրապետության անկման նկարագրության մեջ: Հավանաբար Դ-անիելը եղել է Գրիգորի աջ ձեռքն ու Մաշտոցի նախակարապետը: Այդ մասին Կորյունը գրում է. «Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց. որպէս զի Տէր եպիսկոպոսն [Սահակ] ի Կայենականսն, եւ նա ի սփիռոս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցն»¹⁷⁷: Սահակ կաթողիկոսն ու Մաշտոցը իրար մեջ բաժանել էին քարոզության մեծ տարածքը, քանի որ այն ժամանակ Հայաստանը դեռեւս կիսով հեթանոսական երկիր էր: Որ Մաշտոցը ոչ միայն քորեպիսկոպոսի պաշտոնն, այլեւ կոչում ունէր պարզ երեսում է Փոյ պատրիարքի վկայությունից.

*ἀνεγνώσθη βιβλιδάριον Θεοδώρου Περι τῆς ἐν Περσίδι μαγικῆς
καὶ τίς ἡ τῆς εὐσεβείας | διαφορά, ἐν λόγοις τρισί. προσφωνεῖ δὲ αὐ-
τοὺς πρὸς Μαστούβιον ἐξ Ἀρμενίας ὀρμώμενον χωρεπίσκοπον δὲ τυγ-
χάνοντα*

Առաջին գիրքը վերաբերում է գրվանականությանը.

*οὗτος ὁ Θεόδωρος ὁ Μοψουεστίας εἶναι δοκεῖ. τὴν τε γὰρ Νεστορίου
αἵρεσιν καὶ μάλιστ|ἐν τῷ τρίτῳ λόγῳ κρατύνων προσαναφωνεῖ, ἀλλὰ
καὶ τὴν τῶν ἀμαρτωλῶν ἀποκατάστασιν τερατεύεται*¹⁷⁸.

Գիտնական պատրիարքի ենթադրությունը տեղին է: Հայերը Թեոդորոս Մոպսուեստացու († 429 թ.) գրվածքները ներկայացնում են Պրոկղ Կոստանդնուպոլսեցի պատրիարքին՝ կարծիքի: Այդ թրթակցությունը պահպանվել է¹⁷⁹: 553 թ. Կոստանդնուպոլսի 5-րդ տիեզերական ժողովում այդ երկերից որոշ գլուխներ կրկին անգամ ներկայացվում են¹⁸⁰: Փոյի գլխացանկից տեղեկանում ենք նաեւ, որ Թեոդորոսը եւս բազմիցս դիմել է հայերին՝ փորձելով գրավել նրանց նեստորականության կողմը: *χωρεπίσκοπος Μαστούβιος*-ը ոչ այլ ոք է, քան Մաշտոցը, իսկ *Μαστούβιος*-ն առաջացել է *Μαστούθιος* ձեւից: Յոթերորդ դարի վերջին ստեղծված *Διήγησις*-ում այդ անունը վկայված է *Μαστήτζης*, *Μαστίτζης* տրբ. *Μαστήντζη*, *Μαστήντζη* ձեւերով¹⁸¹:

Գանիել քորեպիսկոպոսն իրենից հետո թողեց չորս աշակերտ. Շաղիտա, Եպիփան, Աբտիթ և Գիմդ, որոնցից նշանավոր են առաջինն ու վերջինը: Գանիելը Շաղիտային, որ ծագումով ասորի էր, նշանակել էր Կորդվաց աշխարհի, իսկ Եպիփանին, որ հույն էր, Աղձնիքի ու Մեծ Ծովփի ուսուցիչ: Նրանք երկուսով Գանիելի մարմինը Աղձնիքի Բառաեջ գյուղից տարան Աշտիշատ և հուղարկավորեցին այնտեղ: Հետագայում, սակայն, մենք նրանց չենք տեսնում իրենց առաքելության զավառներում: Ներսեսի մահվան ժամանակ (Ք.ծ.հ. 373 թ.) Եպիփանը մեծ լեռան վրա էր, աստվածուհու (մեհյանի) տեղում, «գոր կոչեն աթոռ Նահատայ», իսկ Շաղիտան՝ Առյուծ լեռան վրա. այդ երկու լեռը պետք է փնտրել Փոքր Հայքի սահմանին մոտ¹⁸²: Սա վկայում է այդ երկու ճգնավորների կապը Սեբաստիայի Եւստաթիոս եպիսկոպոսի հետ, որը կուսակրոնության հիմնադիրն էր Փոքր Հայքում, Պոնտոսում և Պափլագոնիայում: Միայն Ներսեսի մահից հետո նրանք վերադարձան առաքելության իրենց զավառները: Սուրբ Եպիփանը, որ բնակվում էր Մեծ Ծովքում, Մամբրե տեղի անապատում, Մամուշեղ գետի ափին, ավելի ուշ իր 500 աշակերտներով գնաց Հունաց աշխարհ և բնակություն հաստատեց մեծ ծովի մոտ, ամայի, օձերով լի մի կղզում, այլուստ բոլորովին անհայտ է: Նա որպես Մեծ Ծովքի ու Աղձնիքի քարոզիչ և Տիգրանակերտում (Mipherqet, Martyropolis) վկայարանի հիմնադիր, մրցում է նշանավոր Մարութ եպիսկոպոսի՝ Տիգրանակերտի ավերակների տեղում Նփրկերտի հիմնադրի հետ: Կորդուքի քարոզիչ Շաղիտան հայտնի է նաև ասորիներին, որոնք նրան վերագրում են եգիպտական ծագում և համարում են Մար Ավգենի աշակերտը: Նա Արիտսի հանդես գալուց առաջ արդեն Աթանասիոս // կաթողիկոսի ղեկավարությամբ հմտանում է աստվածային ուսմունքի մեջ: Այնուհետև կրում է արիոսյան աղանդավոր Վալերիանոս դատավորի հալածանքները: Ապա նա գալիս է Պախոմիոսի վանքը: Ավելի ուշ սուրբ Մար Ավգենի հետ ուղևորվում է արևելք, գալիս է Մծբին եւ բնակություն հաստատում Իզելա լեռան վրա: Նրանք մասնակցում են Մծբինի տաճարի եւ Մար Հակոբ եպիսկոպոսի՝ տապանին նվիրված տաճարի օծման արարողությանը: Գրանից հետո Շաղիտան վերադառնում է Բեթ Չաբդե, ուր բնակվում է Մեզանեաֆ հեթանոսական գյուղի մոտակայքում, Փենեկից (Փոենիկա) մոտ մեկ մղոն հարավ, Շեբա լեռան վրա, մի անձուկ քարայրում. մահանում է Մավաիլե գյուղի մոտ 95 տարեկան հասակում¹⁸³: Շաղիտայի եւ Մար Հակոբ Մծբնացու մասին վարքագրական եւ գուտ ասորական մանրամասնությամբ ու շաղակրատությամբ պատմված ավանդություն-

ները, հատկապես տեսիլքները, բազմիցս համընկնում են Փավստոսի վկայություններին¹⁸⁴: Ամտարակույս, երկու խումբն էլ ծագել է մի ընդհանուր, ավելի հին ասորական աղբյուրից: Սակայն Մար Հակոբի եւ Մար Շաղիտայի մասին ասորական ավանդությունները մի մասն են ամբողջ շրթայի, որը խմբավորվում է Եգիպտոսից սերված Մար Ավգենի շուրջ՝ հետապնդելով Միջագետքում կուսակրոնությունը եգիպտականից բխեցնելու նպատակ: Սակայն Լաբուրը ցույց տվեց, որ VI դարից առաջ չի կարող խոսք լինել միջագետքյան-պարսկական կուսակրոնության վրա եգիպտականի ազդեցության մասին, որ դեռեւս Թոմաս Մարգացուն (832-ի եւ 850- միջեւ) անհայտ էր Մար Ավգենի (եւ Շաղիտայի) վարքը (այդ մասին, ըստ Լաբուրի, առաջինը վկայում է Բասրայի մետրոպոլիտ Իշողենախը 10-րդ դարի սկզբներին), որ Մար Ավգենի անձնավորությունը անհայտ է եւ նույնիսկ կասկածի տակ է նրա գոյությունը¹⁸⁵: Այսպիսով, Շաղիտայի կարծեցյալ եգիպտական ծագումը ավելի ուշ շրջանի հնարանք է: Այս կողմից ապացույց չկա Փավստոսի այն պնդման դեմ, որ Շաղիտան եղել է քորեպիսկոպոս Դանիելի աշակերտը:

Դանիելի աշակերտներից էին նաեւ Բասենի եպիսկոպոս Արտիթը, որն ապրեց մինչեւ Խոսրով Երրորդ եւ Արշակ Երրորդ թագավորների օրերը (Փաւստ., VI, Է), եւ Գինդը Տարոն գավառից, որ էր «գլուխ արեղայից, եւ վարդապետ միանձանց, եւ առաջնորդ մենակեցաց, եւ վերակացու վանորներից, եւ ուսուցիչ ամենայն անապատատուրաց»: Նա բնակության տեղ էր ընտրել այն անապատը, որտեղից բխում էին Եփրատ գետի ակունքները: Նա բնակվում էր ժայռերի ծերպերում, այնտեղ, որ Ոսկիք էր կոչվում, ուր մեծն Գրիգորի երբեմնի առաջին կացարանն էր եղել¹⁸⁶: Այդ նույն ծերպերում բնակվում էր մեծ անապատական Գինդը (Փաւստ., VI, ԺԶ, էջ 280-281):

Հետաքրքիր է, որ քորեպիսկոպոս Դանիելի մասին չի պահպանվել ասորական ավանդության ոչ մի հետք:

Զննելով հայկական հնագույն ավանդությունները կարելի է ենթադրել, որ Հայաստանում Լուսավորչի ժամանակ իրականում եղել է երեք եպիսկոպոս. Լուսավորիչն ինքը, նրա որդի եւ աջակից Արիստակեսը եւ առաջնորդական գլխավոր տեղապահ, Տարոնի քորեպիսկոպոս Դանիելը:

4. ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ՆԻԿԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Վերոհիշյալ եզրակացությունը հիմնականում էապես

համապատասխանում է Նիկիայի հայրերի ցուցակին¹⁸⁷: Գրանք, ինչպես կոտեսնենք, Մեծ Հայքից հիշատակում են միայն երկու եպիսկոպոս: Երկրորդ լատիներեն ցուցակում գրված է.

XIV Armeniae Maioris

104 Arista[r]ces

105 et Acrites Armeni

եւ համապատասխանաբար հայերենում.

VIII ի Մեծաց Հայոց

100 Առիստակէս Հայոց

101 Ակրիտէս

նույնը հունարենում.

XV ᾠ Ἀρμενίας

103 ᾠ Ἀρροστάρχης

104 (A)κρίτης

դպտիերենում.

այս երկուսը մյուս Հայաստանից են.

112 Arirteus in

Θαρμενία

113 Arikes in

Θαρμενία:

Արաբերեն ցուցակում (էջ 170) պարզապես գրված է.

ارساكيون الاكرييس 238. կարդա՛

ارستكيوس Արիստակիոս

الاکرييس ալ Ակրիտես

Չորս ցուցակում էլ երկու անունից մեկը՝ տող խնայելու նպատակով, միացվել է հաջորդ երկրանվանը.

III Լատ. XIV Armeniae Maioris

105 Aristecisus//Diosponti

106 Acrites

Նիտրական վանքի գրացուցակում (էջ 104).

ԱՐԻՏԵՑԻՍ ԱՐԻՍՏՈՆՏԻ XIII Մեծ Հայքից հինգ

ԱՐԻՏԵՑԻՍ ԱՐԻՍՏՈՆՏԻ 106 Արիստակիոս Հայաստանից

ԱՐԻՏԵՑԻՍ ԱՐԻՍՏՈՆՏԻ 107 Աքրիթես // Գիոսպոնտոսից

Միխայել պատրիարքի ժամանակագրությունում.

Մեծ Հայքից 2.

ԱՐԻՏԵՑԻՍ ԱՐԻՍՏՈՆՏԻ 111 Ռ-ստակէս Հայաստանից

ԱՐԻՏԵՑԻՍ ԱՐԻՍՏՈՆՏԻ 112 Ա/ր/քրիտոս // Գիոսպոնտո-

սից¹⁸⁸:

Արդիլո Կոբացու ցուցակում /էջ 128/.

ՌՁՅԻ ՌԱՅՈՒՆԻ XIII.

ՌԱՅՈՒՆԻ ՍԱՎԻՐ 108 Ար[իս]թա[ք]ոս Հայաստանից

ՍԱՎԻՐ (Ս)ՈՒՂ ՍԱՎԻՐ 109 Աքրիթոս // Դիոսպոլիտոսից

Երկու ցուցակում չկա Ալրիխես անունը.

Լատ. IV Prouvinciae Armeniae Maioris

100 Aristheus

Վատիկանի ձեռագրերի ցուցակում (էջ 72).

37 Ἀρωστάκης μεγάλης Ἀρμενίας

Սակայն ամենահետաքրքիր շարադրանքը առաջին լատիներեն ցուցակում է.

XIV Provinciae Armeniae Maioris

107 Arsaphius Sobmon

108 Acrites

Առաջին անունը հավանաբար թարգմանված է ասորերենից.

ՌԱՅՈՒՆԻ ՍԱՎԻՐ

: Ամեն դեպքում Arsaphius-ը *Aristac(h)ius-ի

աղավաղված ձեւն է, իսկ Sobman-ը, ամենայն հավանականությամբ, Տօֆոնի է, հայ. Ծոփք, ասոր. ՌԱՅՈՒՆ ՌԻԾԻՐ :

Հիշենք Փավստոսի այն վկայությունը, որ Արիստակեսն իր խոստովանական մահով վախճանվեց Ծոփքում: Նա նաեւ քորեպիսկոպոս էր եւ այն էլ Հռոմի վերահսկողության տակ գտնվող Հարավային Հայաստանում¹⁸⁹:

Այսպիսով անհրաժեշտաբար եզրակացնում ենք, որ Ἀρωίτης-ը, որը չուներ եպիսկոպոսական նստավայր, համապատասխանում է հայկական ավանդության առաջնորդական գլխավոր տեղապահ Գանիել քորեպիսկոպոսին:

Սակայն Ἀρωίτης անվան այս ձեւը հայկական չէ¹⁹⁰: Պետք է ենթադրել, որ այն հայ-իրանական Վահրիճ կամ Վախրիճ անվան փոխադրությունն է: Թովմա Արծրունին հիշատակում է Անձեւացյաց տեր մի Վախրիճի, որը Ռ-շտունիքի տեր Տաճատի եւ Վարդան Մամիկոնյանի հետ դուրս է գալիս ուրացող Շավասայ Արծրունու եւ որպես մարզպան երկիր ուղարկված պարսիկ մոզպետ Վրդոյի դեմ, Տաճատի հետ բռնում վերջինին եւ այրում Գվինի Որմիզդի տաճարի կրակարանում, իսկ նրա որդուն՝ քրմապետ Շիրոյին, կախում կրակարանի վերեւի փայտից¹⁹¹:

Մաշտոցի եւ Մահակի առաջարկով Վռամշապուհ թագավորը ուղարկում

է «զումն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին. որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ եպիսկոպոսի»՝ նրան համոզելու, ստանալու հայկական նշանագրերը, որոնք թագավորը տեսել էր եպիսկոպոսի մոտ¹⁹²: Հայտնի է ոմն Վահրիզ 379, որն Անուշըվանի օրոք նվաճել էր Եմենը: Նրա իսկական անունն է Խորրեհ-զաբ իբն Նարսե: Նա Կավատի եղբայր Ջամասպ թագավորի թոռն էր: Ըստ ալ-Մաստուդիի Վահրիզ տիտղոսը Խոսրովը նրան շնորհում է Եմեն ուղեւորվելիս: Մինչ այդ նա Դելումի եւ Գելի մարզպանն էր, որի համար էլ ոմանք նրան տալիս են Դելումցի անունը¹⁹³: Իրականում, ինչպես երեւում է, նա Վահրիզ տիտղոսը կրում էր որպէս Դելումի մարզպան: Այդ է վկայում նաեւ Պրոկոպիոսը *ὅπερ τῶν πολ.* (I 12, 10, էջ 57, 12 Haury) ըստ որի Կավատ թագավորը Իբերիայի Գուրգեն թագավորի դէմ ուղարկում է պարսիկ Բոնսին *ὁδὰρζήης-ի* տիտղոսով (*στρατηγὸν ἄνδρα Πέροσην, ὁδὰρζήην μὲν τὸ ἀξίωμα, Βόην δὲ ὄνομα*) Բոյը պետք է որ զուտ դելումական անուն լինի, այսպէս Դելումական հարստության նահապետը կոչվում էր Բոյա, որը 10-րդ դարում իշխում էր արեւմտյան Իրանում եւ Բաբելոնում¹⁹⁴: Այստեղից հասկանալի է դառնում նաեւ Սեբեոսի վկայությունը (զլ. ԺԵ, էջ 61=44, թարգմ. Մաքլեր): Խոսրով Երկրորդ Ապարվեժ թագավորի հորեղբայրը՝ Վստամ Պերոզը, հարձակվում է անմատչելի Դելումի վրա եւ իրեն ենթարկում նրա բանակները: Ապա հարձակվում է Ռայ երկրի վրա, սակայն ոչինչ չկարողանալով անել՝ թագավորին օգնության եկած հռոմեական զորքի դէմ, կրկին նահանջում է Դելում: Այնուհետեւ. նա ամրանում է Պարթեւների երկրում¹⁹⁵: Այստեղ Վստամը, իրեն ենթարկելով Խորասանի բանակները, պատրաստվում է արշավել Բաբելոն (Սուրիստան), սակայն սպանվում է քուշանների թագավոր Պարիովկի կողմից, որից հետո նրա բանակը ցրվում է: «Գնացին նոյնպէս եւ զարն Գեղումն՝ որ ընդ նմա, եկեալ հասեալ փութանակի յամուրս աշխարհին իւրեանց: Եւ արքն այնք հայաստանեայք՝ որ ապստամբեալ էին ի Սմբատայ եւ գնացեալք առ Վստամ ընդ նոսա: Իբրեւ գնացին նոքա յերկիրն՝ որ կոչի Կոմշ (Կոմիշ) որ կայ անդրէն ի թիկանց Վրկանի՝ յայնմ կողմանէ սարոյն՝ որ անցանէ ընդ մէջ նոցա, եւ հասին ի գեղն՝ որ կոչի Խեկեանդ:

Ընդդէմ ելանէր նոցա Շահր Վահրիճ, եւ Սմբատ [Բագրատունի] Գուրկան [=Վրկան] մարզպան հանդերձ բազմաւ. եւ զարք Գեղումք ոչ աւելի քան զերկուս հազարս. եւ եղեւ պատերազմ ի վերայ երկիրն այնորիկ, հարին զզարն պարսից, եւ փախստական արարեալ հալածական տանէին, զբազումս սպանեալ եւ զբազումս ձերբակալ արարեալ դարձան անդրէն, եւ բանակեցան մաւտ ի տեղի պատերազմին: Եւ արքն այնք հայաստանեայք ընդ նոսա: Մեռան բազումք եւ ի զարացն եւ ի հայաստանեայցն՝ որ ընդ մարզպանին Սմբատայ... Չուեցին ամենայն

գարքն ի տեղոջէն յայնմանէ, եւ երթեալ հասանէին յամուրս աշխարհին իրեանց: Յայնժամ զՎահրիճն խնդրէր թագաւորն ի տուն, եւ առ Սմբատ առաքէր շնորհակալութիւն մեծ, զի միամտութեամբ մատուցեալ վանեցաւ, եւ ոչ եթող գտեղին. եւ ապա յետոյ ամենեցուն զնայր եւ նա փախստական»¹⁹⁶:

Շահր Վահրիճը, որ պատասխանատվության էր կանչվել արքունիք, ըստ երեւութիւն Դելուսի փոխարքան էր: Նա չէր կարողացել կանխել դելուսցիների՝ Վստամի կողմն անցնելը: Ուրեմն Շահր Վահրիճը («մարզի վահրիճը») նրա տիտղոսն էր: Հավանաբար Դելուսի փոխարքան է եղել նաեւ Վահրիճի (որդի) Վահրիճը¹⁹⁷, որին Պարսկաստանի Շապուհ թագավորը չորս միլիոն //!// պարսիկներով ուղարկել էր Հայոց աշխարհի վրա, եւ Սախազյան¹⁹⁸ կոչված տեղում նրա բանակը լրիվ ոչնչացվում է հայ զորավարի կողմից¹⁹⁹: Այդ մասին խոսվում է նաեւ հետեւյալ գլխում, ըստ որի Կավոսական տոհմից Դմավանդ²⁰⁰ Վսեմականը 900000 մարդով գալիս է Հայաստան, սակայն Վասակ զորավարը, փախուստի մատնելով նրան, սպանում է զորքի մեջ:

Այս տիտղոսի ձեւն ու իմաստը ոչ պակաս դժվարություն են հարուցում: Յուստին (Iran. Namenbuch, 340 b) բացատրում է «լավ առատություն ունեցող», նոր պարսկ. سَدَا رَءُز -ից: Չհաշված իմաստաբանական անհամապատասխանությունը, այս բացատրությունը քննություն չի բռնում, քանի որ երկրորդ վանկում բացակայում է **e** ձայնավորը: Ավելի շուտ հակված են կարծելու, ինչպես ճիշտ նկատել է Հորնը (GIRPh., I, 2, 181), որ **-իճ**-ը անվանական վերջածանց է, որ սովորաբար հանդես է գալիս **-իճ**. նոր պարսկ. **-iz** ձեւով: Կրճատ **ի**-ն հանդիպում է նաեւ երկրների եւ ժողովուրդների անուններում, ինչպես **شیرجان** **Շերիջան** Տն. 61, 515 Sahīru' ddim ԹԻ 69 արաբ. **الشیرز** as Širriz, **لارجان** **Լարիջան**, արաբ. **الارز** al Lariz, **كآرنامک** Kārnamak XIII 20, ed Anita, Barič, Vd. 1. 18 Gl., արաբ. **لبارز** at Tab. I ԹԷ 13, **کوف-իճ** «վեռնական» Recueil des hist. Seldjoudi des, o, 4. v, 18, արաբ. **قفص**, նոր պարսկ. **کوج** Kōc Տն., 558.650, 886. 330, VI, 192, 383. 308. 1779. 358, 2387 Mohl **Աներիճ** «անիրան» Vd. 1, 18 Gl.: Այս վերջածանցը ծագել է հնդգերմանական erək-, ək-ից «դառնալով», որը վաղուց ձուլվել է -oq- «տեսնելով», արաբերեն -ak- վերջածանցին: Հմմտ. Joh. Schmidt, Pluralbildungen, էջ 388 եւ huəz., Darmesteter, Etudes iran., II, 106-115, Bartholomae, GIRPh., I, 1, 96, պարբ.

178, Brugmann, Grdr., d. hմմտ. Gramm. d. indg. Sprachen, II, 1², 1906, 144. 2, 662:

Այն հաճախ հանդիպում է -իկ վերջածանցի հետ=հին իր. -ja, միջ. իր. - ցիկ, նոր պարսկ. -zi, օր. Սագ-ճիկ Խորենացի, II, Թ, էջ 114, 18. 115, 3 (Թիֆլիս 1913), արաբերեն سَجَزِي նոր պարսկ. سَكْرِي Սագ-զի «Սագիստանցի», مروزي Մարվա-զի եւ مرغزي Մարու-զի «Մարվացի, Մարուացի», ابرزي Աբար-զի (Vambery, Geschichte von Buchara), հեփթաղների վերջին թագավորը, Abu ‘l Hasan (Abd ar Rahman b. Muhammad an Naisabūri, bei Muhammad i Narsachi, Description de Boukhara, p.o., 11, ed. Schefer= ورز **Վարզ** at Tab. I ۸۹, 14-15 T «ավար, վար ար-մատից», հմմտ. Marquart, Eransahr 308, Über das Volkstum der Komanen, 74, 17 ff, وهزي **Վահ-զի** (այսպես 1.)= وخی «Վախանցի» Sn 919, 848. 946, 1342. 994, 580. 1001, 699. 1008, 824. 1017, 962²⁰¹:

Սոգդերենում -ճիկ վերջածանցով գոյականներից եւ մակբայներից կազմվում են ածականներ, ինչպես ƒcambad-ցիկ «աշխարհիկ» ƒcambad, ǃǃcambad «աշխարհ»-ից, amank-ցիկ «ճիշտ», dat-ցիկ «արդար» dat «օրենք»-ից, pēnam-ցիկ «առաջին» pēnam «առաջ»-ից: Այս երկու վերջածանցների սպառիչ բացատրությունը տվել են ավելի քան երեսուն տարի առաջ²⁰²:

Պ. Հորնը Վահիրճն ածանցում է ավեստ. Wrdra-«հաղթանակ»-ից, ասելով նաեւ, որ ավեստ. vrdrayna-բառը 4-րդ դարում դեռեւս ուներ բավական հին ձեւեր, եւ որ հունարեն փոխադրության մեջ պահպանվել է. առաջին r տառը: Հմմտ. ᾿Αρωάγγης (աստված)՝ Կոմագենում Նեմրոթ դադի վրա Անտիոքոս Առաջինի հուշարձանին (Ք.ծ.ա. 1-ին դար), ᾿Ορθάνης հնդպարթեաների թագավորը (Ք.ծ.հ. 1-ին դար)²⁰³, Օշլագնո (աստված)՝ քուշանների Կանելչի թագավորի (Ք.ծ.հ. 2-րդ դար) դրամների վրա²⁰⁴: IV դարում, քրիստոնեության դեմ Շապուր Երկրորդի (348) հալածանքների շրջանում հիշատակվում է Սելեկիա գյուղից մի դավաճան քահանա **idico** Վրդրան անունով, որը Հեղախյաս (Աղիարենե) թագավորի հրամանով մահապատժի է ենթարկում հավատացյալ Գուհիշտ-ազադին՝ Կարկ-հա դե-Բեթ Սելոքիայից²⁰⁵: Երանելի Կանդիդայի նահատակության մեջ ասված է, որ նա մարտիրոսվել է Վրդրանի՝ Սասոր թագավորի պապի օրոք²⁰⁶: Բառի այս

միջին մեդական ձեւն առկա է նաեւ Լուսավորչի ավագ որդու՝ Վրթանէսի, հուն. **Օծթճանց** անվան հիմքում, որ մեզ հասել է հելլենացված այս տեսքով եւ վերարտադրվել խոսակցական Վրդրան ձեւով: Դրամենքի վրա եւ արձանագրություններում պաշտոնական միջին պարսկ. կարդացվում է Vrhran (տե՛ս Herrfeld, Paikuli 171 b) ասոր. **ܘܪܗܢ** Վարահրան, հուն. տառադարձված է **Օծարզանց, Եզարզանց, Գօրզանց, Օծանց**, որ գոեհկացվելով դարձել է Վրհրամ: Վերջին ձեւը 4-րդ դարի վերջում արդեն անցել է հայերենին. սրանից էլ այնուհետեւ առաջացել է ուշ միջին եւ նոր պարսկերեն Vahram, Bahram, հայ. **Վահրամ**, հուն. **Βαράμ, Βαράμης** Theophyl. Sim. passim, Theophanes, p. 262, 15-267, 6, Theophanes, p. 326, 14, վրաց. Գուրամ, Գվարամ ձեւերը: Հմմտ. Nöldecke, Gesch. der Perser und Araber էջ 46, ծմբ. 3, Lagarde, Arm. Stud. թիվ 2084, Justi, Iran. Namenbuch, 361 f., Hübschmann, Arm. Gr., 78: Հայերեն ճիշտ ձեւը Վահագն է (աստված/ <*Warhagn < V(r)drayn առաջին r-ի տարմնանական սղումով, որտեղից էլ առաջացել է հայկական սովորական Վահան անձնանունը: Հմմտ. Marquart, UGE, I, 42, 45, ծմբ. 3, Հյուբշման, նույն տեղը, 75-77, 509: Այս կազմությունը հաստատվում է Վահանառիճ «Վահանի պաշտամունքի վայր» գյուղանվան շնորհիվ, որ պահպանվել է մի արձանագրությունում, Գարեգին Հովսեփյան, մաս 3-րդ, Վաղարշապատ, 1913, թիվ 23, տող 8, էջ 17:

Այս իմաստով կարծում եմ, որ պետք է ելնենք ավեստ. *vadra-«հաղթանակ», van-«հաղթել» բառից, հմմտ. գոթ. vananā-f «հաղթանակ»: Միջին իր. այն դառնում է *vahr, ինչպես ցանցահաղթանակ «թույն» (Hübschmann, Pers. Stud., 71, Horn, GIrPh I, 2, 91, պար. 40, 5): Այսպիսով Վահրիճ տիտղոսը նշանակել է «հաղթական»: Արժրունու հիշատակած Վահրիճ ձեւը Վանի բարբառով է: Նա բավական հաճախ է գործածում խ-ով ձեւերը՝ դասական հայերենի հ-ի փոխարեն. **խեք**, Շիրակացի, 3-րդ, ԻԹ, էջ 263, 28, **Մեք** Կոս. Ծիրանաձիւն, **հեք**, Շիրակացի, ԼԲ, 19 եւ այլուր, **Բախլ** II, Գ, էջ 85, 16, **Բահխ** I, Գ, էջ 25, 24, **Բախլ Շախաստան** II, էջ 88, 3, **Ճախուկ**, սովորաբար՝ **Ճահուկ**, **խեփտարք** I, Գ, էջ 25, 22, 27, 32, խրախատ III, Գ, էջ 147, 4, **Շախրիքն** I, Գ, էջ 28, 7: Նույն առանձնահատկությունն առկա է նաեւ Վասպուրականի անանուն պատմությունում (սխալմամբ վերագրվում է Շապուհ Բագրատունուն), օր. **Խաղամակերտ բերտ** էջ 63, **Խանդամաշեն** էջ 63: Վանի ներկայիս բարբառում հայ. **հ-ն** որպես կանոն տալիս է **խ**: Հմմտ. H. Adjarian, Lautlehre des Van-Dialekts, Zs. f. arm. Phil., I, 130²⁰⁷:

Ինչ վերաբերում է **Պարթև** գրության ձևին, ապա հնուց ի վեր հույները մեծ դժվարությամբ են վերարտադրել շփական **v** հնչյունը, ինչպես նաև կիսաձայն **w**-ն, որ այլևս նրանք չունեն։ Հաճախ **va**, **ver** վանկը բառասկզբում եւս դուրս է մղվում **o**-ի կամ **w**-ի միջոցով, օր. **Պարթևացիք** *εὐεργέται* Her. 8, 85=հին պարսկ. *վարուշանկա «ընդլայնված ծառայությունից» **Պարթև** Arr. III, 29, 2, **Պարթև** Strabo Ptol., ավելի ճիշտ՝ Oaxes Justin., I 8, 2=հին իր. Vaxš, **Պարթևացիք**=հին իր. Վախշու-վարտա «Վախշու աստծո կողմից ընտրված», **Պարթևացիք** Arr. III, 20, 3 IV, 18, 3 «Վախշու աստծո կողմից նվիրված», **Պարթև** (գետ)=*Վախու-կամ *Վախվի, **Պարթև** Kass. Dion, 40, 28, 3: Cic. ad Attic. V, 20, ավելի ճիշտ՝ **Պարթևացիք** Arra-ian *ἔκταξις κατ' Ἀλανῶν* 12=հայ. Վասակ, **Պարթևացիք** դրամներ=ապառնի (դրամներ) Վախշու: Այնուհանդերձ հազվադեպ չէ շփականի սովորական սղումը, օր. **Պարթև** Her. 3, 117=*Վախու-, ինչպես նաև Վախվի, **Պարթևացիք** իլլիրիական արմատ, ավելի ուշ **Պարթևացիք** Strabo, VII, 5, 5, էջ 315: Հռոմեական շրջանում երեսն են գալիս գրության ավելի ճիշտ ձևեր օս կամ ֆ տառերի շնորհիվ, հատկապես հռոմեական պետական պաշտոնյաների մոտ, ինչպիսիք էին Արիանոսը, Վասսիոս Դիոնը, Պրոկոպիոսը, Յոհաննես Լատրեմտիոս Լիդոսը եւ ուրիշներ, օր. **Պարթևացիք**, **Պարթևացիք** լատ. Վոլոգեսես, **Պարթևացիք**, **Պարթևացիք**, **Պարթևացիք** եւ ուրիշներ, այսպես մինչև։ Սկիզբները 11-րդ դար **Պարթևացիք**=*ἡ ἄνω Μηδία* II, 462, 4. 464, 11. 482, 1. 512, 11. **Պարթևացիք**-ի կողքին II 570, 20. 573, 21. 576, 20. 580, 9. 590, 17. 464, 11. **Պարթևացիք** (այսպես 1.) Konstantin Porphyrog., De administr. imp. c. 43, p. 189, **Պարթևացիք** նույն տեղում, c. 45, p. 201, 7=հայ. **Պարթևացիք**: Սակայն Թեոփանեսը էջ 326, 14, գրում է **Պարթև**=միջին պարսկ. **Պարթև**: «Պարսիկների եւ հայերի պատերազմների պատմություն» բնագրի, որից պահպանվել է միայն սկիզբը որպես հունարեն Ազարագեղոսի ներածություն, անհայտ հայ հեղինակը գրում է **Պարթևացիք**=հայ. Վախշու²⁰⁸:

Հայերը, 4-րդ դարում հետեւելով այս կիրառությանը, հելլենացրել են կաթողիկոսների անունները: Փավստոսը (VI, ԺԵ, էջ 279) Շահուկի հետնորդին որպես

«եայիսկոպոսապետ» հիշատակում է **Սապորակ** անունով, **Διήγησις**-ում c. XVII **Ἄσπουραξέσις**, որը **Սապորակես** ձեռով վկայվեց նրա հայկական արքյություն (Անանիա Շիրակացի), եւ այդ արքյորից էլ անցավ Խորենացուն (III, ԻԱ, էջ 309, 21, 49, էջ 320, 5) Ասողիկն (II, Ա, էջ 73-21): **Սապորակեսը** միջ. պարսկ. **վասպորակի** «տան որդիներին պատկանող» հեղինակված ձեռն է: Այս բառը հայերենում օգտագործվել է նաեւ որպես հասարակ գոյական²⁰⁹: Այդ նույն **Διήγησις**-ում Փավստոսի Փառեն կաթողիկոսը վկայված է **ὁ Φαργεσέχ ἀπὸ τῶν Ἀσπράκων** (τῆς Ἀσπισῶν) **χώρας** «վասպուհրակից Աշտիշատ վայրից», իսկ ըստ Խորենացու՝ III, ԺԶ, էջ 275, 9՝ «զՓառներսէի ոմն յԱշտիշատից Տարաւնոյ», Յովհ. Կարթ. էջ 27, 33/34= 38՝ «զոմն Փառներսէի անուն յԱշտիշատէ», Ստ. Ասողիկ՝ II, Ա, էջ 69, 14՝ «որ էր յԱշտիշատայ Տարօնոյ»²¹⁰: Այն, որ վասպուրակ բառը որպես ազնվական դասի անվանում, օգտագործվել է նաեւ Հայաստանում, ապացուցվում է հետագա ամենամեծ մահամզի՝ Վասպուրականի, ամուտով²¹¹:

Օտար կիսաշվականները $\check{c}(=ts)$, $\check{c}'(=ts')$, $c(=ts)$, $c'(=ts')$, $\check{g}(=dz)$, dz հնուց ի վեր հունարենում վերարտադրվել են ատամնային բաղաձայնների միջոցով: Հմմտ. օր. **Τριτανταίχμης** Her. I, 192. VII 82. 121=հին պարսկ. Čidran'taxma, **Ἀσπαθίνης**=հին պարսկ. Aspācanāh, **Τισσαφέρνης** լիկ. Cirraprāna, Aretissa Plin. h. n. VII 127=Արճիշոյ՝ Արճշի սեռ.²¹² Artianius (այսպես 1.), Sallust. hist. rel. IV, 74, p. 187, ed. Maurenbrecher=հայ. Արածանի²¹³, Nitibi, Nitibin, Jul. Capitolinus, Gordiani tres 26, 6, 27, 6, Trebellius Pollio, Gallieni duo, 10, 3. 12, 1, Nitibeni, նույն տեղում, 10, 3, Nitibis Rufus Festus, Brev. 27, 2 GPB=ասոր. **ܢܝܒܝܢ** Nəcībīn²¹⁴: Հայտնի չէ, թե Պրիսկոս պատմիչը, որ պաշտոնական հաղորդումներից եւ որպես դեսպան Աթիլայի արքունիքում անձամբ լսել էր բարբարոսներից բազմաթիվ անձանուններ եւ ժողովուրդների անուններ, ի՞նչն է կիսաշվականը ճիշտ արտահայտել տ՛հ կապակցությամբ: Konst. Poryhyr. Excerpta de legat., p. 130, 8-9, ed. de Boor (Berlin, 1903)=Hist. gr. min. I, 289, 26 Dindorf ձեռագրերում՝ **BE ἀκατζίρων** MP **ἀκατζόρων**, նույն տեղում, սող 24=299, 150 / =բոլոր ձեռագ./ **κατζίρων**: Այնինչ՝ էջ 136, 3=306, 11, Dind. **ο ἀκατήρων**, ինչպես նաեւ 139, 23=310, 30, Dind., 586, 12 =fr. 30, էջ 341, 15 Dind. **τοῖς Ἀκατίροις Οὐρροῖς**, 588, 10=fr. 37, էջ 346, 7 Dind. **Ἀκατίροις**, Acatzirorum gens Iordan. Get. պարբ. 36, էջ 63, 8 Mommsen (acatirorum saec. IX), Agaziros Geogr Rav. IV, 1 էջ 168, 14 Jordanes, **چاسار** Chasar Zach. Rhetor XII, 7, էջ 253, 18, քարգմ. Արեմն եւ Քրյուգեր: Այս տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Պրոսկոսն ինչն է գրել

Ἀκάτιροι, որ սկզբնական շրջանում այս անունը ձեռագրերում տողի վերելում կամ լուսանցքում մեկնաբանվում էր 6-րդ դարում գործածության մեջ մտած **Ἀκάτζιροι** գրությամբ: Սա վերաբերում է նաև Ultzinzures-ին Jordan, Get., պար. 272, էջ 128, 23 Mommsen, որի փոխարեն ինչպես նաև Emnetzur-ի (այսպես H, emnedzur PV) եւ Ultzindur-ի համար Jordan., Get., պար. 266, էջ 127, 2 Ազաթիասը VII, էջ 365, 22. գրում է **Οὐλίξουροι**: Կոստանդին Ծիրանածինը (de legat., 121, 4=276, 7 Dindorf) գրում է **Ἀμιλζύροις καὶ Ἴτιμάροις καὶ Βοίσκοις**, որի համար Յորդանները (պար. 126, 90, 11-12/ գրում է Alpidzuros (Alpilzuros A saec. XI), Alcildzuros, Itimarus, Tuncursos et Bois cos, AMILZOYPOIC ձեռն առաջացել է ALNILZOYPOIC-ից, ուրեմն Պրիսկոսը գրել է **Ἀλπιζούροις**=թուրք. *alp-il-gur<*al-pil-čur եւ **Ἀλκίλζουροι**=*äl-kül-gur<äl-kül-čur նայականից հետո č-ի փափկացմամբ: **Τούνσουρες**-ը= թուրք. *tun-čur-ն է: Պրիսկոսը մնամապես գրում է **Δεγγιζίχ** (Exc. de Irgat., 588, 6. 24. 28=346, 1. 26, 347, 1 Dindorf), որը Յորդանները (Get., պար. 272, էջ 128, 21) հիշատակում է Dintzic ձեռով: Այստեղից հետեւում է, որ τζ, tz-ի փոխարեն č c գրության ձևը, որ իշխում է Պրոկոպիոսի մոտ, եւ լատ. dz-ն⁵, dz-ի փոխարեն, կիրառություն է գտել միայն 6-րդ դարում:

Չափազանց դժվար է անշուշտ **հր** հնչյունախմբի վերաբարտադրումը չը-ով: Այնուհանդերձ որպես ստույգ համեմատություն կարելի է մեջբերել հետեւյալ նախադասությունները, որ թարգմանված են հունարեն Ազաթանգեղոսում (պար. 18). **որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ**=τῆς τῶν Σταχριτῶν πατριδος σατραπης ὑπηρχεν եւ (պար. 20) **հանքարձելոյ թագաւորութեան** Ստահրացոյն=τῶν ἀπαρθέντων Σταχριτῶν²¹⁵:

Այստեղ փաստորեն **հր** հնչյունախումբը հունարեն վերաբարտադրված է չը-ի միջոցով: Իրապես Պարսից մայրաքաղաքը նոր պարսկերեն (արաբացված) կոչվում է اصطخر Ἰstachr²¹⁶, ավեստերենում եւս առկա է staxra- բառը: Սակայն եւ հայերենում²¹⁷, եւ ասորերենում Ստահր արտասանական ձևը վկայված է որպես հին ձև, Synod. orient., էջ 37, 4. 43, 25=276. 285 ed Chabot a. 420. 424, **ܝܢܠܗܝܪ** anhajt Ἰstahr:

Այսպիսով ապացուցելով, որ Վահրիճը «հաղթական» տիտղոս է, եւ **Ἀχιλλεύς**-ը այդ անվան գուտ հունարեն գրությունը, բոլոր վերապահումներով հանդերձ համարձակվում եմ ենթադրել, որ Վահրիճը քորեպիսկոպոս Դանիելի մականունն է:

5. ՎՐՔԱՆԵՍԸ ԵՒ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԸ

Վրթանեսի օրոք եւս կաթողիկոսությունը ծայրամասերում գերազանցապես զբաղված էր քարոզչությամբ, քեւեւ այդ ժամանակ բացի կաթողիկոսի ծխական մեծ համայնքից ստեղծվել էին երկու նոր եպիսկոպոսություններ, չնայած հեթանոսությունը երկրի ներսում, նույնիսկ Մայր եկեղեցու նստավայր Աշտիշատում դեռեւս խոր արմատներ ունէր²¹⁸: Փավստոսը պատմում է նաեւ, որ Վրթանեսը իր ծերության ժամանակ ունեցավ երկվորյակ որդիներ, «եւ կոչեաց զանուն երիցուն յանուն հաւր իւրոյ Գրիգորիս, եւ երկրորդին Յուսիկ: Որք սնան զառաջեաւ թագաւորին Հայոց, եւ ուսման գրոց փոյթ ի վերայ կալան, ուսուցանել զնոսա: Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց, վասն հոգեկիր առաքինի արգասեացն, բարեհասակ, եւ զգիտութիւն Աստուծոյ յանձին կրելով: Ոչ ամուսնացաւ նա, այլ ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եւ Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց: Երթեալ նորոգեաց անդ գեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյն Գրիգորի՝ հաւրն²¹⁹ գործոցն նմանեալ»²²⁰:

Սուրբ պատրիարք²²¹ Գրիգորիսի վախճանի մասին.

«Այլ վասն Գրիգորի եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբօրն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց եւ Աղուանից, իբրեւ եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն եւս էր, շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եւ ձգեցաւ ի գաւառակողմանցն Ատրպատականի:

Քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա, եւ առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի եւ զարմանալի, խստագոյն ու դժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահօք եւ սրբութեամբ, տքնական հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն ջերմութեան առ Տէր Աստուած կանխելոյ վասն ամենայն մարդոյ: Չաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն. զցայգ եւ զցերեկ պահօք եւ աղօթիւք եւ ուժգին²²² խնդրուածովք եւ բարձրակալ կա-

տարման հաւատովքն՝ մերձաւորաց եւ հեռաւորաց զհոգեւոր եռանդն ածէր. իբրեւ զպատերազմասէր նահատակ միշտ զանձն ի կրթութիւն եւ ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց եւ վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոցն մարտնչել որ վասն Քրիստոսի:

Եւ իբրեւ ուղղեաց եւ նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, (անցավ նա Կուր գետը, բարբարոսների մեծ թագավորի տիրոջան սահմանը)²²³, եհաս նա մինչեւ ի ճամբար բանակին Արշակունւոյ արքային Մազքթաց, որոյ անուն իւր Սանէսան²²⁴ կոչէր: Քանզի եւ նոցա եւ Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան: Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց, իշխանին բազմութեան զօրացն²²⁵, եւ եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել եւ աւետարանել նոցա զՔրիստոս: Ասէ ցնոսա՝ թէ ծաներոք զԱստուած, լուան եւ ընկալան գառաջինն եւ հնազանդեցան: Ապա սկսեան քննել զօրէնսն Քրիստոսի, եւ ուսան ի նմանէ՝ թէ ատելի է Աստուծոյ աւարութիւն եւ յափշտակութիւն, սպանութիւն, ազահութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց: Ապա այսպիսի իմն իրօք իբրեւ լուան, զայրացան ընդ բանս նորա եւ ասէն. Չի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞նչ կեցցուք, զի ոչ յերիվար հեծցուք ըստ բնութեան օրինաց սովորութեանց մերոց: Այլ, ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուցուք ի միջոյ, եւ մեք ի Հայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք²²⁶:

Ապա շրջեցաւ թագաւորն, եւ լուաւ բանից զօրացն իւրոց. եւ կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զգաւոյ ձիոյն, եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին Հիւսիսական ծովուն (Կասպիականի) մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ²²⁷: Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս²²⁸: Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ²²⁹, ի գեղն՝ որ անուանեալ կոչի Ամարագ: Եւ եղին զնա առ եկեղեցեան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին: Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ եւ աշխարհաց գաւառացն այնոցիկ, զսորա զօր տօնին զյիշատակ քաջութեան ցնծան²³⁰:

Գրիգորիսի սպանութեան անմիջապէս հետեւում է հյուսիսային ցեղերի հարձակումը Հայաստանի վրա, որ տարածվեց մինչեւ հռոմեական

ու պարսկական սահմանները, Սատաղից մինչև Ատրպատականի Գանձակ քաղաքը: Թշնամին մոտ մեկ տարի մնաց երկրում, իսկ նրա Սանեսան թագավորը իր գնդով հաստատվեց Վաղարշապատ մայրաքաղաքում: Միայն սպարապետ Վաչեին՝ Արտավազդի որդուն, Մամիկոնյանց ցեղից, «զի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ գերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց», հաջողվեց հավաքել նախարարներից քաջերին եւ ոչնչացնել թշնամուն: Հավանաբար Վաչեն Հունաց աշխարհն էր գնացել հռոմեական օգնական զորք բերելու, եւ երկրի ազատագրումը հնարավոր եղավ միայն հռոմեացիների օգնությամբ: Այս մասին մանրամասնություններ հաղորդելուն խանգարել է Փավստոսի հայկական ազգային սնափառությունը: Կարելի է այդ արշավանքը բավական ճիշտ թվագրել, եթե զուգադրենք հռոմեական կառավարության պատասխան քայլերին:

Չարմանալի է, որ հունահռոմեական ավանդությունների բեկորներում արշավանքի մասին հետքեր չեն մնացել, չնայած այն հասել է մինչև Հռոմեական կայսրության սահմանները: Սակայն Oringo Constantini imperatoris (այսպես կոչված անանուն Valisii)-ում պահպանվել է հետեւյալ հանելուկային, սակայն կարեւոր վկայությունը. *Dalmatium, filium fratris sui Dalmati, Caesarem fecit. eius fratrem Annibalianum data ei Constantina filia sua regem regum et Ponticarum gentium constituit*²³¹: Նույնը Ավրելիոս Վիկտորի հավելագրած համառոտության մեջ, c. 41, 20. *Hi reguli has partes regendas habuerunt, Annibalianus Dalmatii Caesaris consanguineus Armenian nationesque circum socias: Chron. Pasch. I 531, 16-532, 3 a. 335.*

*και Δαλμάτιον τὸν υἱὸν
τοῦ ἀδελφοῦ αὐτοῦ Δαλματίου τοῦ κησάριος Καίσαρα ἀνηγόρευσεν
πρὸς ἡ' καλανδῶν ὀκτοβρίων... και Ἄννιβαλιανὸν ἔθηγα προχειρισάμε-
νος ἐνέδυσσε...οκκηρὰν γλαμύδα και κατὰ Καισάρειαν τῆς Καππαδοκίας
ἀπέστειλεν*

Չոսիմնուի վկայությունը ավելի անորոշ է (2-րդ, 39,2).

սυνήρχον δὲ αὐτοῖς |

*τρόπον τινὰ Δαλμάτιος, Καῖσαρ ὑπὸ Κωνσταντίνου κατασταθεῖς, ἔτι δὲ
Κωνσταντίος, ἀδελφὸς ὢν αὐτοῦ, και Ἄννιβαλιανός, ἔσθῃτι χρώμενοι
κοκκοβαφεὶ και περιχρύσφ, τῆς τοῦ λεγομένου νωβελισσίμου παρ' αὐ-
τοῦ Κωνσταντίνου τυχόντες ἀξίας αἰδοῖ τῆς συγγενείας.*

Կայսրության այս բաժանումը տեղի է ունեցել 335 թ. սեպտեմբերի 18-ին Կոնստանդինի երեսնամյակի տոնակատարությունից հետո: Ինչպես ցույց են տալիս համառոտության մանրամասն շարադրանքը եւ

«արքայից արքա» տիտղոսը, Հանիբալիանոսի նպատակն էր, որպես գերագույն թագավոր՝ նստավայր ունենալով Կեսարիան, իր հսկողության տակ առնել Վրաց եւ Հայոց վասալ պետությունները, Գիոկղէտիանոսի գրաված Հարավային Հայաստանի հինգ սատրապոթյունները, ինչպես նաեւ Բոսֆորի թագավորությունը: Ինքնին նշանակալի այս իրադարձություններն ընթանում էին Փավստոսի նկարագրած հյուսիսային ցեղերի ճնշման պարագայում: Կասսիական երկու դռների (Դարիալ եւ Դարբանդ) գրավումից եւ աշարիջ պաշտպանությունից կախված էր ոչ միայն ավատական երկու պետությունների՝ Վրաստանի եւ Հայաստանի ապահովությունը, այլեւ այն հանգամանքը, որ, ինչպես սովորեցնում է պատմությունը, Հյուսիսային Կովկասի տափաստանների վաչկատուն ցեղերը, կիրճերից մեկը նվաճելով, Վրաստանով եւ Հայաստանով հեշտությամբ շարժվում էին դեպի հռոմեացիների երկիրը: Սամեսանի այդ հարձակումը կրկին անգամ փաստում է, որ հարավկովկասյան պետությունների քաղաքական ու ռազմական կառույցներն ի գորտ չէին դիմագրավելու հանկարծահաս անակնկալներին: Մագքութների թագավորի արշավանքը եւ Գրիգորիսի նահատակությունը տեղի են ունեցել համապատասխանաբար 335 թ. զարնանը եւ ամռանը, ավագակախմբերի ոչնչացումը՝ 336-ին: Հանիբալիանոսի թագավորությունն ապացուցվում է նաեւ դրամներով²³²: Գալմատիոսին 357 թ. տեսնում ենք Սիջագետքում²³³, եւ նույն թվականին զինվորական մի ապստամբության ժամանակ երկու եղբայրներն սպանվում են²³⁴:

Մագքութք (Փատստ. միայն հոգնակի սեռ. **Մագքքաց**, III, Ե, էջ 10, 11, 2, էջ 14, 8, 11, Է, էջ 15, 19, 21, 16, 17, 17, 2, 16, ինչպես նաեւ Սեբեոս, գլ. II, էջ 30, 14=12, թարգմ. Մաքլեր, Ստ. Ասողիկ, II, Գ, էջ 112, 23, Եղիշէ, գլ. 8, էջ 351 (Վեներտիկ, 1864), Մովս. Կաղ., 1-ին, Ժ, էջ 101, 10 (Փարիզ, 1860), ԺԳ, էջ 126, 21, 22, 128, 10, 2-րդ, Ե, էջ 220, ԺՁ, էջ 94, 19 հայց., Մովս. Խոր., 2-րդ, ՁՁ, էջ 234, 8, 2-րդ, ԺԳ, էջ 126, 8 հայց. (ալանների անունն է, որ Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ (էջ 77, 69, 83, 94-95) դարձել է *Μασαχούτων Οὐννων*, «Պատերազմի պատմության» սկզբում (էջ 4, 16) ճիշտ թարգմանված է *τῶν σκληροτάτων Μασσαγετῶν* 21-րդ տողը՝ *ἡ τῶν Μασσαγετῶν βασιλεία*²³⁵:

Մասքութները, որ ծագումով անիրանական, հետագայում միայն իրանացված, քոչվոր ցեղեր էին, հնում բնակվում էին Ներքին Յախարտեսի եւ Արալյան ծովի միջեւ: Միերդատ Եպատորի ժամանակ նրանք իրենց իշխանությունն ընդարձակեցին մինչեւ Հյուսիսային Կովկաս, համադաշնությամբ միացրին մի շարք այլ իրանական քոչվոր ցեղեր, ստանալով քաղաքական նոր անուն՝ *Ἄορσοι* կամ *Arzvac* արեւմտասու. *xvarr* իր. *xorr* «լավ»²³⁶: Այնուհետեւ, երբ նրանց իշխանության միջանկետը գնալով մոտենում էր Հյուսիսային Կովկասին,

Եւ նրանք բազմաթիվ այլ ցեղեր միավորեցին, Ք.ծ. հ. 1-ին դարի կեսերին ստացան արևն քաղաքական նոր անունը, հուն. ²³⁷ **Ἄλανοί** <*arjan-«փրանացի»²³⁷: Սակայն **Μασσαγέται** իրն անունը երբեք չնոսրացվեց, եւ Կասսիուս Դիոնը (69, 15, 1, հ. 3, 235, հրատ. Boissvain) պարզորոշ վկայում է արևմտյան ու մարտիրոսների նույնությունը մասին. **ὁ μὲν οὖν τῶν Ἰουδαίων πόλεμος ἐς τοῦτο ἐτελεώτησεν, ἕτερος δὲ ἐξ Ἄλανῶν (εἰοί δὲ Μασσαγέται) ἐκινήθη ὑπὸ Φαρασμάνου (Վրաստանի բազավորին) καὶ τὴν μὲν Ἀλβανίδα καὶ τὴν Μηδίαν ἰσχυρῶς ἐλύτησε, τῆς δ' Ἀρμενίας τῆς τε Καπαδοκίας ἀψάμενος, ἔπειτα τῶν Ἄλανῶν τὰ μὲν δώροισ ὑπὸ τοῦ Οὐολογαΐσου (Հայաստանի բազավորին)²³⁸ πεισθέντων, τὰ δὲ κατὰ Φλόουιον Ἀροϊανὸν τῆς Καπαδοκίας ἄρχοντα φοβηθέντων, ἐπαύσατο.** Հմմտ. Konstantin Porphyrog. Exc. de legat., p. 88, 8-13 ex. de Boor: Այս տեղեկության աղբյուրը ոչ այլ որ է, քան Արրիանն ինքը, որի **ἔκταξις κατ' Ἀλανῶν**-ից ցավոր պահպանվել է միայն մի պատասխի: Արրիաննից է օգտվել նաև Ամմիանոս Մարտիրոսը, հմմտ. 31, 2, 12. Hoc. expeditum indomitumque hominum genus (Hunorum gens)... ad usque Halanos pervenit, veteres Massagetæ etc.; 22, 8, 38; Arimphaei..., quos amnes Chronius et Bisula praeterfluunt; iuxtaque Massagetæ, Halani et Sargetæ, aliique plures obscuro etc.; 23, 5, 16: namque ut Lucullum transeam vel Pompeium, qui per Albanos et Massagetæ, quos Alanos nunc appellamus, hac quoque natione perrupta vidit Caspius lacus etc. Այնուհետև պատմվում է, որ 350 թ. Շապուր Երկրորդը դադարեցնում է Մծբինի պաշարումը եւ խաչատառակ ձեռով նահանջում, քանի որ մարտիրոսները հարձակվել էին Պարսկաստանի վրա եւ ավերում էին: **ἦδη γὰρ καὶ Μασσαγέται τῇ ἐπιήλθοσαν καὶ αὐτῇ ἐλυμαίνοντο**, Zonaras 13, 7, 13, vol. III, p. 195, Dindorf: Սակայն պարզ չէ, թե խոսքն այստեղ կովկասյան, թե խորասանյան ճակատի մասին է, ուրիշ խոսքով՝ **Μασσαγέται** անվան տակ պետք է հասկանալ արևմտյան, հուներ, կամ ըստ Ամմիանոս Մարտիրոսի (16, 9, 4)՝ Cuseni (քուշանք), կամ Chioniten, ալաններ՝ սպիտակ հուններ (հետագա՝ հեպթաղներ):

Ալանները, հավանաբար հոներից մղվելով, Գարբանդի կիրճից հարավ ձեռք էին բերել հենակետ, որտեղից նրանք հոների վարձկան ջոկատների օգնությամբ սպառնում էին Աղվանքին: Վաչագան քազավորի օրոք (5-րդ դարի վերջին քառորդ) Յրի քաղաքում մի հրաշագործության շնորհիվ վերագտնվեցին Հովհաննես Սկրտչի հոր՝ Չարարիայի եւ Պանդալիոն նահատակի մատուցները, որոնք անփոփել էր Գրիգորիսը²³⁹, «գայս նշանագործութիւն Յուսան Հոնաց²⁴⁰ եպիսկոպոս, որ ի Մարթթաց²⁴¹ աշխարհիւն էր, եւ յոյժ ճշմարտախօս» իր իսկ ակամատես եղեալ պատմեաց»²⁴²: Երբ Մեծկողմանքի Իսրայել եպիսկոպոսը 681 թ. վերջին²⁴³ ուղեորվեց կովկասյան հոների երկիրը՝ նրանց քրիստոնյա դարձնելու, եւ դրանով կանխելու հարձակումները Աղվանքի վրա, հասավ Լիփնքի քաղաքներից մեկը, ուր նա կատարեց Եպիփանի տոնը (6 հունվարի 682 թ.), այդտեղից անցավ Մեծ Կովկաս լեռնաշղթայի փեշերին տարածված Ճիդրերի երկիրը, եւ կտրելով Վարդեգրվակի լեռնանցքը, շատ օրերի երթից հետո հասավ «ի վաղնջուցն քազաւորանիստ կայեանս, յայն տեղի, ուր վկայեաց սուրբն Գրիգորիս» թոռն մեծին Գրիգորի, կաթողիկոս Աղուանից: Որ եւ անտի յետ ատուրց ինչ հասանէին ի դռուն Չորայ, որ է մերձ ի Գարբանդ»²⁴⁴: Այդ հին քազավորանիստը գտնվում էր Սամու-

րի՝ բազմանուն Ամազոնի²⁴⁵, գետաբերանում, ուր Կլեիտարխոսը հիշատակում է ամազոնուհիների թագուհու՝ Թալեստրիայի նստավայրը²⁴⁶, իսկ Թեոփանես Միքելեմացին, որ նկարագրել է Պոմպեոսի պատերազմը Միհրդատի դեմ, գրում է Մերմադաս կամ Թերմոդոն, այսինքն Սամուր գետի ափին բնակվող ամազոնուհիների մասին: Գետը բաժանում էր նրանց գելերից եւ լեգերից (*Γῆλαι καὶ Ἀγγαί*) որոնց հետ նրանք տարվա երկու ամիսը սեռական հարաբերություն էին ունենում²⁴⁷: Այստեղ խոսքն, անկասկած, այսպես կոչված *Σαυρομάται γυναικοκρατούμενοι*-ի մի հին խմբի մասին է: Մասքութները, այսինքն պաննները, այստեղ հաստատվել էին Ք. ծ. հ. 4-րդ դարի սկզբներին: Նրանց անունը պահպանվել է *مسقط* Մասքութ քաղաքի անվան մեջ, որն ամրացրել էր Խոսրով Անուշիրվանը, եւ հիշատակվում է հաճախ Շուբուրանի հետ²⁴⁸: Վրաստանի Գեորգի Երրորդ (1156-1184) թագավորի մասին կարդում ենք. «Նա շարժվեց մինչեւ Դերբենդի դարպասները, կողոպտեց Մուսկուրի եւ Շարաբամի մերձակա շրջանները, գրավեց Շարուրան (արաբ. *شبران*) քաղաքը»²⁴⁹: Հետագա ձեռը *مسکور* Մուշկուր է: Տե՛ս Derbend-nämeḥ, քարգմ. Միրզա Ա. Քազեմ-բեգ, Ս. Պետերբուրգ, 1851, էջ 7, 2. 30, remark 25 եւ Dom's Caspia քարտեզը: Այս ձեռը համապատասխանում է այսպես կոչված թաթերեն բարբառին, ուր նոր պարսկ. d-ն ձայնավորից հետո դառնում է r: Արաբերեն *مسقط* Մասքութ գրությունը ենթադրում է *Maskut ձեռը, ամենաճիշտը, սակայն, Մովսես Կադանկատվացու հիշատակած հայերեն *Մասգութք*-ն է, որը համապատասխանում է արեւմտաալանական (դիզորական) *Masgutä-ին: Դիզորերենում սա կանոնավոր հոգնակի ձեւ է *masag<*masaag<massjag-ից, որը արեւմտաալաներենում (իրոներեն) դառնում է *masgi-²⁵⁰: *Μασσαγέται* առաջացել է հին սոգդերեն հոգնակի *mássjag-ə-tä (չեշուն առաջին վանկի վրա) ձեւից, որը (*mássa-g) նշանակում է «ձուկ ուտող» կամ «ձուկ բռնող» (անվան փաղաքշականն է), ուրեմն սոգդերենում ենթադրվում են *massj-ād-, *massj-āsa- կամ *massja-naima ձեւերը²⁵¹: Այստեղ մեկ այլ փաղաքշական ձեւ է անշուշտ *Μασσαῖτοι*-ը Ptol., VI, 14, էջ 426, 26: Հետեւապես *Μασσαγέται* հնում եղել է ծաղրանուն, որով սոգդերը կոչել են նրանց:

Անանիա Շիրակացին (Աշխարհ., էջ 27, 2 եւ հաջ.) այսպես է նկարագրել այդ երկիրը. «Ապա գալիս են Շիրքերը, Գիրքերը, Փոխերը: Կովկասյան լեռները բաժանվում են երկու բազուկների, որոնցից մեկը ձգվում է ուղիղ: Այստեղ ապրում են Շրվան եւ Խսրվան²⁵² ժողովուրդները, որոնց բնակավայրը տարածվում է մինչեւ Խորսվեմ²⁵³: Այստեղից է սկիզբ առնում երկար պարիսպը, որը կոչվում է Ապգուտ Կավատ²⁵⁴ (եւ ձգվում) մինչեւ Ալդմինոն անտառը եւ ծովը: Մրանցից հյուսիս, Վարդանյան կոչվող դաշտավայրում, ապրում է Մասքութ ժողովուրդը, որի բնակավայրը տարածվում է մինչեւ Կասպից ծովը, որտեղ վերջանում է Կովկասյան լեռնաբազուկը, եւ ուր կառուցված է Դարբանդի պարիսպը, այսինքն՝ Դոռա պահակ քաղաքի կապ դարպասը՝ ծովի մեջ կառուցված անագին մի աշտարակով: Նրանից [Դարբանդի պարսպից] հյուսիս, ծովափին Հոների թագավորությունն է»²⁵⁵:

Արցախ նահանգի Հաբանդ, հետագայում Վարանդա, գավառի տեղը որոշվում է Ամարաս վանքով եւ Ամարաս գետի²⁵⁶ ափին Ամարաս ավանի ավերակնե-

րով: Հմնտ. **Մակար Բարխուտարեանց**, Արցախ (Բագու, 1895), էջ 113-115, 422, ծմք. 15 եւ նույնի քարտեզը «Պատմութիւն Աղուանից» գրքի 1-ին հատորում, Վաղարշապատ, 1902, Hübschmann, Die altarm.. Ortsnamen, էջ 350: Արցախ նահանգը, ինչպէս եւ Կուրից հարավ ընկած բոլոր գավառները մինչեւ 363, 367 թթ. պատկանում էին Հայկական պետությանը²⁵⁷: Ուստի նահանգի Խաղխաղ քաղաքը, որ 5-րդ դարում եղել էր Աղվանքի թագավորների²⁵⁸ ձմեռային նստավայրը, 2-րդ եւ 3-րդ դարերում հայ թագավորների ձմեռոցն էր²⁵⁹:

Այսպիսով, միանգամայն ճիշտ է, երբ Փավստոսը Հաբանդ գավառը տեղադրում է «ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց»: Ուրեմն Գրիգորիսի խնդիրն էր պետության հյուսիսային սահմանները գոնե մակերեսորեն քրիստոնեացնել, ինչն Արիստակեսն սկսել էր Ծովքում, Հարավային Հայաստանում: Առաքելությունը Մասքութների երկրում բխում էր քաղաքական անհրաժեշտությունից, ինչպէս 6-րդ դարում Աղվանքի Քարդուկը²⁶⁰ եպիսկոպոսի եւ 7-րդ դարի վերջին Բարայել եպիսկոպոսի ուղեւորությունը Վարաշան՝ կովկասյան սպիտակ հոնների մոտ: Սակայն, ըստ Փավստոսի, Ամարասի եկեղեցին կառուցել է Գրիգոր Լուսավորիչը, եւ ընդհանրապէս նա է քրիստոնեությունը տարածել Վրաստանում եւ Աղվանքում, իսկ նրա թոռ Գրիգորիսը հաստատել ու ամրապնդել է: Հիրավի, Ագաթանգեղոսի Պատմության մեջ (պարբ. 842, էջ 439, 3, 440, 4 627, 20 - 628, 14) կարդում ենք. «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց ի ծագաց մինչեւ ի ծագս, ձգտէր տարածանէր զճշակութիւն քարոզութեանն եւ աւետարանութեանն, ի Սատաղացոց քաղաքէն մինչեւ առ աշխարհան Խաղտեաց, մինչեւ առ Կաղարջօք, մինչեւ ի սպառ ի սահմանս Մասքթաց²⁶¹, մինչեւ ի դրունս Ալանաց, մինչեւ ի սահմանս Կասպից²⁶², ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց, եւ յԱնդացոց քաղաքէն մինչեւ առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորոց [Սիջագետք] առ Նոր Շիրական [Ադիարենն] երկրան, եւ առ Կորդուօք մինչեւ յամուր աշխարհն Մարաց (Gott'n), մինչեւ առ տամբն Մահքր-Տան (Անձեւացիք) իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»²⁶³: Այս նախադասությունն սկիզբն է մի ամբողջ պարբերության, որ բառացի արտագրված է Կորյունից²⁶⁴, ուր խոսվում է սուրբ Մաշտոցի մասին. «Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց, Վրաց եւ Աղուանից, զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն եւ զձմեռն, զտիւ եւ զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարանական եւ ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց եւ իշխանաց, եւ ամենայն հեթանոսաց եւ անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին»: Սահմանի բերված նկարագրությունը Կորյունի՝ **զամենայն կողմանս Հայոց Վրաց եւ Աղուանից** նախադասության հարազատ շարադրանքն է եւ փաստորեն հնարավորին 62

չափ ստույգ տալիս է չմասնատված Հայկական պետության սահմանները՝ ներառյալ Վրաստանը եւ Աղվանքը: Իսկ **ձգտէր տարածանէր զնշակութիւն քարոզութեանն եւ արտարարանութեանն** բառերը Ազաթանգեղոսն ավելացրել է ըստ իմաստի:

Սակայն Վրաստանի առնչությամբ մենք ստույգ գիտենք, որ նա քրիստոնէությանը ծանոթացել է Բակուր թագավորի օրոք, եւ ուրեմն ոչ թէ Լուսավորիչը, այլ նրա թոռ Գրիգորիսն է քարոզել այնտեղ: Նույն վստահությամբ կարող ենք մերժել Աղվանքի վերաբերյալ այն պնդումը, թէ այստեղ Լուսավորիչն է հիմնադրել եկեղեցին: Այս կեղծիքն անշուշտ հետապնդել է նվիրապետական նպատակ, այն կանոնապես հիմնավորել է հայ եկեղեցու գերագույն իշխանությունը Աղվանից եւ Վրաց եկեղեցիների վրա: Բայցեւայնպես գերագույն այդ իշխանությունը սուրբ Մաշտոցի եւ նրա աջակից Սահակի մեծածավալ եւ խորիմաստ գործունեության նվաճումն էր, եւ այն, ինչպես արդեն նշվեց, առաջադրվելով Սելեւկիայի կաթողիկոսի պահանջով, տրվեց Երանի կաթողիկոսին, այսինքն՝ Պարսկական կայսրության պատրիարքին: Երկրորդ ժողովում (420) Իհարալահա կաթողիկոսը հավակնում էր հետեւյալ տիտղոսին²⁶⁵. կաթողիկոս Բեթ Լապատի, Նիսիբիսի, Պարսի, Հայաստանի, Պերաթի, դե Մաիշանի, Խղաիջաբի, Բեթ Գարմեի, Գուրգանի (Իբերիա), Բեթ Մաղաջեի (Մեդիա), Արանի (Աղվանք), Աբարշահրի, Աղարբաջագանի, Կղզիների (Պարսից ծոցի), Իստահրի, Կարկայի (դե Բեթ Սելոկ), Արգոնի, Շուշի (Սուսա), Շուշտարի, Բալաշֆարի, Դասքարթայի, Չաբեի, Պերոզ-Շաբորի (Ամբար), Դար[ար]գիրդի, Բեթ Դարաջեի, Շաբոր-խվաստեի, Արդաշիր-ֆարեհի, Բեթ-Շաբորի (Պարսում), Ճաիմարատի: Ըստ այդմ այն ըմբռնվեց որպես ինքնահաստատման հակաքայլ եւ գործույթ:

Վրաստանի եւ Աղվանքի կաթողիկոսի տիտղոսը, որ Փավստոսը վերագրում է Գրիգորիսին, ինքնին ժամանակի առումով հակասություն է: Սակայն պետք է նշել, որ նա է Աղվանքում ցանել քրիստոնէության սերմերը: Հակառակ բոլոր հակահարվածներին, որոնք անշուշտ այնտեղ առավել հուժկու էին, քան Հայաստանում, այն գոյատևեց մինչեւ Մաշտոցի երեսան գալը, չնայած ժողովուրդը դեռ մեծ մասամբ հեթանոս կամ կիսահեթանոս էր²⁶⁶:

*

* *

Գնելի սպանությունից հետո (29 օգոստոս 359 թ.) «սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ եւս յաւել տեսանել գերեսս թագաւորին Արշակայ մինչեւ յօրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսիսի զՉունակ («չունետոր») ոմն անուն, եւ կացուցին փոխանակ նորա զլուխ քրիստոնէու-

թեանն. եւ էր ըստրուկ ի ստրկաց արքունի: Ապա հրաման տայր թագաւորն՝ կոչել զամենայն եպիսկոպոսս Հայոց աշխարհին, զի եկեացեն ձեռնադրեսցեն զՉոնակն (այսպէս) ի կաթողիկոսութեան Հայոց: Եւ ոչ մի որ ոչ հաւանեաց գալ. բայց միայն Ադձնեաց եւ Կորդուաց եպիսկոպոսք եկին. եւ զՉոնակն ձեռնադրեցին ի կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին: Եւ էր Չոնակն այր զգօն. եւ ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ եւ նա գործիցէ»²⁶⁷:

Նախ ասենք, որ Չոնակը անձնանուն չէ, այլ մականուն, իսկ ճիշտ անունը հայտնի չէ: Այստեղ խոսքը Ադձնիք եւ Կորդուք նահանգների եպիսկոպոսների մասին է, նահանգներ, որոնք մեզ արդէն ծանոթ են որպէս քորեպիսկոպոս Դանիելի աշակերտներ՝ սուրբ Եպիփանի եւ Շաղիտայի քարոզչության տարածքներ, հանգամանք, որ ամենից առաջ կարող է սովեր ձգել վկայության վրա: Ադձնիք (Արզոն) եւ Բեթ-Չաբդե գավառներն այդ ժամանակ պատկանում էին Հռոմի գերիշխանության տակ գտնվող սատրապներին, մինչդեռ Կորդուքը (Կորդուենե) Գալերիոսից խլված գավառներից մեկը, 359 թ. մասամբ պարսիկների իշխանության տակ էր²⁶⁸: Ատրական վկայաբանություններում հիշատակվում է Բեթ-Չաբդեի Հելիոդորոս եպիսկոպոսը, որը 360 թ. պարսիկների կողմից ամրոցի պաշարման ժամանակ (Ammian., 20,7,7-9) փորձում էր Շապուրին ետ պահել հարձակման մտքից, իսկ ամրոցի անկումից հետո այլ գերիների հետ տարվում է Բեց Հուգաջե եւ այնտեղ սպանվում²⁶⁹: Ըստ իս, այս վկայության հավաստիությունը առիթ չի տալիս տարակուսելու, մանավանդ որ Մեշիխա-գեկան Ք. ծ. հ. 2-րդ դարի առաջին քառորդին իր Արբելայի եկեղեցու պատմության մեջ հիշատակում է Բեթ-Չաբդեի Մազրա եպիսկոպոսին, որը Պեքիդայի սարկավագ Շեմշունին օծել էր Արբելայի եպիսկոպոս (շուրջ 118-123)²⁷⁰: Ըստ Մար Շաղիտայի ատրական վարքի՝ վերջինս գործել է ոչ թե Քարդուում, այլ Փենակից ոչ հեռու գտնվող Բեթ-Չաբդեում: Կորդուքի այդ մասի, որը 359 թ. պարսիկների տիրապետության տակ էր, սատրապն էր Յովինիանոս անունով մեկը, որը իբրեւ պատանդ Ատրիքում հունական կրթություն էր ստացել եւ գաղտնի պահում էր հռոմեացիների կողմը²⁷¹: Կարծում եմ, որ լրիվ հնարավոր է, որ այն ժամանակ արդէն հռոմեական Ադձնիքում եպիսկոպոս կար:

6. ՆԵՐՍԵՍ

Այնուհետեւ մի կարճ ժամանակահատված ծավալվում է Ներսես կաթողիկոսի եպիսկոպոսական գործունեությունը: Եւ քանի որ ժամանա-

կազմությունը պատմության ողնաշարն է, ապա փոքր-ինչ կանգ առնենք ժամանակագրական հետազոտության վրա: Փափստոսը, օգտվելով ժամանակակից եկեղեցիների պատմությունից, հատկապես Բարսեղ եպիսկոպոսի խիստ առասպելական, գունազարդված վարքից, իր հերոսին՝ Ներսեսին, վերջինիս հետ զուգահեռներ անցկացնելով էլ օտար փետուրներով զարդարելով, մասնակիորեն ստեղծել է Ներսեսի պատմության ամբողջապես աղավաղված պատկերը: Որ նրա կարծեցյալ արտորը պատմական հիմք չունի, նշել են ավելի քան 30 տարի առաջ: Նույնը վերաբերում է նաև նրա օծման արարողությանը մետրոպոլիտ Եսեբիոսի ձեռքով, որը պարզապես վերցված է Բարսեղի վարքից: 358 թ. Աթանասիոս եպիսկոպոսը արհանսականների դեմ վանականներին ուղղված իր ջատագովության մեջ հանդիմանում է Կոստանդիանոս կայսրին՝ մերձավորների դեմ գործած մի ամբողջ շարք անարգ արարքների համար.

τί δὲ θαυμαστόν εἰ πλανηθεὶς εἰς ἀσέβειαν οὕτω κατὰ τῶν ἐπισκόπων ἔστιν ὤμός, ὅπου γε οὐδὲ τῆς ἰδίας συγγενείας ὡς ἀνθρώπος ἐφείσατο; Τοὺς μὲν γὰρ θεῖους κατέσφαξε, καὶ τοὺς ἀνεψιούς ἀνεῖλε· καὶ πενθεροῦ (πενθερόν;) μὲν ἔτι τὴν θυγατέρα γαμῶν αὐτοῦ, συγγενεῖς δὲ πάσχοντας οὐκ ἠλέησεν, ἀλλὰ καὶ ὄρκων ἀεὶ πρὸς πάντας παραβάτης γέγονεν. Οὕτω γὰρ καὶ εἰς τὸν ἀδελφὸν ἀσεβεῖν τετόλμηκε. Καὶ προσποιεῖται μὲν οἰκοδομεῖν αὐτῷ μνημεῖον, τὴν δὲ μνηστὴν αὐτοῦ τὴν Ὀλυμπιάδα βαρβάρους ἐκδέδωκεν, ἣν ἐκεῖνος μέχρι τελευτῆς ἐφύλαττε, καὶ ὡς ἰδίαν ἀνέτρεφεν ἑαυτῷ γυναῖκα. Καὶ τὴν γνώμην δὲ αὐτοῦ παραλείπει ἐπίεσησεν, οὗ καὶ κληρόνομος εὐχεται εἶναι, γράφων τοιαῦτα ἔφ' οἷς καὶ ὀλίγην αἴσθησιν ἔχων ἂν τις ἠσχύνθη²⁷²:

Պրետորիաների պրեֆեկտ Արլատիոսի դուստրը՝ Օլիմպիան, որը նշանված էր Կոստանդիանոսի եղբոր՝ Կոստանի հետ (վերջինս խիստ միկիանետ էր եւ մահացավ 350 թ.), ամուսնանում է Հայոց Արշակ քազավորի հետ, որին Աթանասիոսը արհամարհանքով բարբարոս է կոչում: Այդ ամուսնությունը պետք է որ կնքված լինի 358 թ. ոչ շատ առաջ, քանի որ Աթանասիոսը այդ մասին խոսում է որպես բոլորովին մի նոր երեւույթի: Հավանաբար եպիսկոպոսը ցանկացել է ասել, որ Օլիմպիային զոհ են տվել ի շահ քաղաքականության, որն անշուշտ արդարացի է:

Տեսնենք, թե ինչ է գրում Փափստոսը. «Յաղագս Ներսիսի Հայոց կաթողիկոսին, թէ զհարդ յԱրշակայ արքայէ առաքեցաւ առ Վաղէս կայսրն հանդերձ նախարարօքն... եւ կամ (կայսրը) զայլ նախարարսն արձակեաց հանդերձ պատարագօք:

Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր

[մեր] աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղի առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց, զի ինքնին²⁷³ մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս, եւ ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն ընդ մնա առնել²⁷⁴, զի երթիցէ. ի մէջ կայսերն եւ ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան եւ խաղաղութեան նորոգեսցեն: Ապա չոգան գնացին հասին ի կայսերական պաղատն (*παλάτιν*) թագաւորացն Յունաց»²⁷⁵:

Անշուշտ այդ նվիրակութեան խնդիրը, ինչպէս ասվում է շարադրանքում, դաշինքը կայսեր հետ նորոգելը եւ Հայոց թագավորի համար ազնվական հարսնացու, ավելի ճիշտ կայսերական արքայադուստր գտնելն էր: Առաքելությունը պսակվում է հաջողությամբ, եւ «յայն յիշխանաց, որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Հայոց, գնոսա (բացի Ներսէսից) բազում գանձիւք լցեալ արձակէր կաշառակործս կաշառաւ եկս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին, եւ բազում գանձս ոսկոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրեւ այնու կամէր հաճել զմիտս թագաւորին: Չի ոչ գոյր չափ եւ ոչ թիւ, զի անհամար գանձ առաքէր արքային Հայոց. գրէր առ նա զիր ամբաստանութեան զսրբոյն Նեսիսէ, իբրեւ թէ սպան զորդի նորա: Եւ արձակեաց եւս զպանդանդսն զԱրշակունիսն թագաւորին Հայոց, որ կային եւս ի կայսերական պաղատանն. զի են նոքա եղբօրորդիք արքային Արշակայ, զի միտմն անուոն ճանաչէր Գնել, եւ միտումն անուոն Տիրիթ, ետ ի ձեռս սատրապացն Հայոց, եւ գնոսա զայս օրինակ անդուստ յուղարկէր»²⁷⁶:

Յաղագս դարձի իշխանացն անդրէն յերկիրն Հայոց, որք երթեալք էին առ կայսրն Վաղէս, զի եկին դարձան առ տէրն իւրեանց Արշակ...

Այսոքիկ են իշխանքն, որք չոգան ի թագաւորէն մեծէ Արշակայ ի Հայոց աշխարհէն առ կայսրն Յունաց առ Վաղէս. ինքնին մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծ նահապետն Մամիկոնեան տոհմին, որում անուն Վարդան կոչիւր, եղբայր սա մեծի ստրատելատին (*στρατηλάτης*) Հայոց որում Վասակն կոչէր. որ դայեակք եւ սնուցիչք էին թագաւորի Արշակայ:

Եւ ընդ մնա

- Մեհեն**²⁷⁷ նահապետն Ռշտունեաց, եւ
- Մեհառ** նահապետն Անձեւացեաց, եւ
- Գարջոյլ Մաղխազ** նահապետն Խորխոռունեաց, եւ
- Մուշկ** նահապետն Սահառունեաց, եւ
- Դեմետ** նահապետն Գնթունեաց, եւ
- Կիշկէն** նահապետն Բազէնից, եւ
- Սուրիկ** նահապետն Հրսիձորոյ /?/ եւ
- Վրկէն** նահապետն Հաբուժենից:

Սոքա չոգան դեսպանութեամբ ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս: Իսկ թագաւորն Վաղէս արգել արքորեաց զմեծն քահանայապետն Ներսէս, եւ փոխանակ սորա արձակեաց զեղբորորդի զթագաւորին Արշակայ զԳնել եւ զՏիրիթ, եւ զանձս բազումս եւ անթիս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ եւ որք ընդ մմա էին, առաքէր: Եկին հասին դեսպանքն երթեալք ի կայսրէն առ թագաւորն Հայոց Սեծաց Արշակ եւ մատուցանէին մմա զհրովարտակն կայսերն. եւ ընդ մմին զիր, տրտնջելոյ եւ ամբաստանութեան: Չի գրեալ էր կայսրն զսրբոյն Ներսիսէ առ թագաւորն Հայոց Արշակ, թէ նա սպան զորդին իւր զմիամօր, վասն այտրիկ ինչ լինիցիս, ընկալ զպատանեակս առաջի զարձակեալս զերկոսեան զեղբորորդիս [Արշակայ]²⁷⁸, զԳնել եւ զՏիրիթն: Ունէին եւ զանթի կարասի զանձուցն առաջի թագաւորին»²⁷⁹:

Ապա հետեւում է ի հատուցումն Ներսես կաթողիկոսի վերադարձի արգելքի Կապադովկիայի վրա՝ մինչեւ Անկյուրա քաղաքը, հայերի հարձակման գրոտեաքային պատմությունը:

Այն, որ Ներսեսի արքորը եւ դրա շարժառիթը վերցված է Բարսեղի պատմությունից, հիմնականում ընդունվում է ըստ իմ առաջադրած փաստարկների: Այնուամենայնիվ, Ներսեսն իրոք նվիրակների հետ չի վերադարձել: Արշակավան ազատ քաղաքի հիմնադրման ժամանակ (Փաստ., 4-րդ, ԺԲ) նա Հայաստանում չէր, նրան փոխարինում էր Բագրեւանդի Խաղ եպիսկոպոսը: Հավանաբար նա Հայաստան է վերադարձել կայսեր մահից հետո, մինչ երկրաշարժը (կարդա՝ **սասանումն սատակումն**-ի փոխարեն), որից կործանվեց այդ ազատ քաղաքը:

«Յաղագս որ ինչ իբրեւ դարձաւ սուրբ կաթողիկոսն Ներսէս յերկրէն Յունաց, թէ որպէս կշտամբէր զարքայն, կամ որպէս լինէին նշանք ահագինք ի վերայ աւանին Արշակաւանի, եւ սատակեցան առ հասարակ յանկարծօրէն ամենայն բազմութիւն մարդկան՝ որք յայնմ տեղոջ էին:

Այլ իբրեւ սատակեցաւ կայսրն²⁸⁰, դարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսքն՝ որք արքորեալք էին (*ἐξօրίζεւν*), եւ կեցեալք էին յիրաքանչիւր քաղաքս: Յայնժամ դարձաւ եւ սուրբ կաթողիկոսն Ներսէս յանապատ ի կղզոյ անդի, ուր էր զնոսա արգելեալ եւ համաշխարհի էին խնդրուածք միսանգամ աշխարհի շնորհեցաւ: Իբրեւ եկն յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային մմա ի զաւառաց զաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, եւ նախարարք ամենայն եւ ամենայն զաւառակալք: Եւ բերէին առաջի նորա զիրաքանչիւր հիւանդս, եւ բժշկէր զնոսա. ուր եւ բազում իսկ եւ կարի յաճախէր զոհութիւն ի փառս Աստուծոյ, եւ ամենայն մարդիկն առ բազում զուրբ հովուապետին՝ համարէին զանձինս իրեանց թէ ինքեանք իբրեւ զնոսա ի գերութենէ դարձեալ իցեն:

Եւ առնէին ուրախութիւն բազում հոգեւորս մեծաւ ցնծութեամբ: Հա-

մաշխարհի ամենայն ոք իրուքանչիւր Տեառն Աստուծոյ զեղեալ ուխտս կատարեին, որ ի վերայ հոգեւոր գանձին հայրապետին՝ որ առաւ նոցա. եւ կատարեաց նոցա զխնդրուածս նոցա, եւ զորբութիւն արտառութեան անձանցն սրակելոց ցաւոցն սրտաբեկութեանն, միսանգամ սիրով գթով վարդապետութեամբ հոգեւոր հարբն մխիթարեաց զամենեսեան: Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն զուարթացեալք յորախոսքիւն դառնային: Ինքն իսկ թագաւորն Արշակ երթայր ընդ առաջ նորա, մինչեւ ի կողմանս Բաքասերոյն, եւ անդի մեծաւ զուարթութեամբ դարձան: Եւ սկսան նորոգել եւ պայծառանալ վարք աշխարհի եւ կարգացն եւ օրինացն եկեղեցեացն»²⁸¹:

Կաթողիկոսը նոր էր վերադարձել, երբ Խաղ եպիսկոպոսից տեղեկանում է Արշակավանի խայտառակության մասին: Նա թագավորին խիստ կշտամբում եւ պահանջում է կա՛ն կասեցնել քաղաքի կառուցումը, կա՛ն ճիշտ հիմքերի վրա դնել այն: Թագավորը քամհարում է նրա խոսքերը, իսկ երեք օր անց տեղի է ունենում անեղ դատաստանը, եւ մի հարվածով ոչնչանում է ոճրագործ քաղաքը:

Այդ երկրաշարժն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 358 թ. հետո, իսկ նվիրակության այցը եւ Օլիմպիայի ու Արշակ թագավորի ամուսնությունը՝ 357 թ.: Ներսէսը, այսպիսով, ոչ թե 9 տարի (ամս)²⁸², այլ հազիվ 9 ամիս (ամիսս) է բացակայել Հայաստանից: Այն, ինչը նրան այդքան ժամանակ պահեց հռոմեացիների երկրում, լավ բան լինել չէր կարող: Հավանաբար երկու կուսակցությունները՝ կայսրից հովանավորվող արիոսականները եւ նիկիականները, փորձում էին իրենց կողմը քաշել նրան: Սակայն այս մասին ոչ մի հիշատակություն չկա հայկական ավանդություններում: Կոստանդիանոս (3 նոյ. 361 թ. Մոփսուեստիա) եւ Վաղես (մահ. 378 թ. օգոստոսի 9-ին, Ադրիանուպոլիս) կայսեր օրոք երկրի արիանոսականության շրջանի նկարագրությունը Փավստոսի պատմության խճողված հանգույցներից մեկն է համարվում, իսկ երկու կայսրերը միաձուլված են մեկ անձնավորության՝ Վաղես կայսեր մեջ: Սա վերցված է առասպելական, խիստ գունազարդված հունական կամ ասորական աղբյուրից: Սակայն որոշ հատվածներում պարզորոշ պահպանվել է հիշողություն Իսավրայում Արիմինում-Սելեկիայի ժողովի մասին, որը գումարվել էր Սելեկիայում 359 թ. սեպտ. 27-ին եւ գործել մինչեւ 360 թ. (հմմտ. Փաւստոս, IV, Ե, էջ 91, 6-92, 7): Մեկ այլ տեղում, ուր պատմվում է մի տեսիլքի մասին, որ երեսացել է սրբուհի տիկին Թեկղիի քաղաքից դուրս (Սելեկիա՝ Իսավրայում) գտնվող վկայարանում (Փաւստ., IV, Ժ, էջ 103-105, 30), դարձյալ պահպանված է աղոտ հիշողություն Սելեկիայի ժողովի մասին՝ միախառնված Վաղեսի իշխանության վերջին տարիների անցքերով, որտեղ Բարսեղը մեծ դեր է խաղացել: Ներսէսը

Մելեկիայի ժողովի ժամանակահատվածում, սակայն, չէր կարող Հռոմեական կայսրությունում լինել:

*

**

Գժվար թե Ներսեսը, որ կաթողիկոս ընտրվելուց առաջ եղել էր «ի վարս զինուորութեան ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ եւ արտաքոյ»²⁸³, մեծ հետաքրքրություն ցուցաբերեր հունական աստվածաբանության դավանաբանական հարցերի նկատմամբ, առավել եւս զաղափար ունենար այդ մասին: Հավանաբար նա այցելել է հայտնի եպիսկոպոսների՝ ուսումնասիրելու այդ խիստ վիճելի հարցերը՝ սեփական կարծիք կազմելու համար: 357 թ. Սմյունիայում տեղի ունեցավ երկրորդ ժողովը, ինչպես նաեւ մեկ այլ ժողով Անտիոքում, որտեղ անհոմոիրականները կարողացան անցկացնել իրենց դրույթները: Նույն թվականի հոկտեմբերին Անկյոնի կիսաարիանոս եպիսկոպոսները մերժում են անհոմոիրականների դաժան ուսմունքը: Այդ ժողովի պատգամավորների թվում էր Եւստաթիոս Սեբաստացին (ամենաուշը՝ 356 թ.). նրանք ժողովի որոշումով ուղեւորվեցին Կոստանդինոս կայսեր մոտ՝ համոզելու նրան ընդունել Որդու՝ Հոր հետ ունեցած էական մտանքայինները: Այնուհետեւ՝ 358 թ. վերջին, կայսրի հրամանով հրավիրվում է մի նոր ժողով, որտեղ կիսաարիանոսականների ուսմունքը հայտարարվում է կատարյալ, իսկ անհոմոիստականությունը՝ մերժվում:

Եթե կարելի է վստահել Փավստոսի պատումին, ապա առաջին հերթին բարոյագիտությունը, դրսից ներմուծված մի ուսմունք, եւ արտակարգ գթասրտությունն են խթանել Ներսես կաթողիկոսին եւ մղել նրան եռանդուն գործունեության եւ խստագույն պատժի²⁸⁴:

Անշուշտ դրանք հաստատվում էին այն ժողովներում, որոնք նա գումարում էր Աշտիշատում՝ իր կաթողիկոսության սկզբնական շրջանում: Մեծարժեք գործունեությունը, որ Ներսեսը ծավալել էր երկրում՝ աղքատանոցների, հիվանդանոցների, կուսանոցների հիմնում, մուրացիկության վերացում, կարող է ընկալվել միայն Եւստաթիոս Սեբաստացի եպիսկոպոսի անձի հետ համադրության մեջ: Հնարավոր է, որ Ներսեսը Կոստանդնուպոլսից վերադառնալիս բավական ժամանակ մնացել է Եւստաթիոսի մոտ:

*

**

Ներսեսի կաթողիկոս ընտրվելու թվականի ճշգրտման համար, անհրաժեշտ են հուսալի կովաններ: Ըստ Փավստոսի՝ կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունեցել Արշակ թագավորի իշխանության գալուց անմի-

ջապես հետո: Սակայն այն պատմությունը, որ Արշակը իր կույր հոր՝ Տիրանի հետ ազատվում է պարսկական գերությունից եւ թագավոր կարգվում Պարսից Ներսես թագավորի կողմից, շնորհիվ Հունաստանի Վաղես եւ Պարսից Ներսես թագավորների միջեւ կնքված հաշտության պայմանագրի²⁸⁵ ունի պատմական հետմախորք՝ 298 թ. հաշտության պայմանագիրը Պարսից Նարսես թագավորի եւ Վալերիոս Գալերիոս կայսրի, ինչպես նաեւ Դիոդորեոսի միջեւ եւ պատմական արժեք չի ներկայացնում: Ինչպես է թագազրկվել Տիրանը, հայտնի կդառնա, երբ կգտնվեն նոր աղբյուրներ:

Քաղաքական ընդհանուր նկատառումներից ելնելով՝ կարելի է ենթադրել, նվիրակների առաքումը Կոստանդնուպոլիս եւ ամուսնությունը Օլիմպիայի հետ տեղի են ունեցել Արշակ թագավորի իշխանության գալուց կարճ ժամանակ անց: Սրանով է հաշվվում նաեւ Ներսեսի կաթողիկոսության սկիզբը՝ 356 կամ ամենաշուտը՝ 355 թթ.: Օլիմպիայի եւ Արշակի ամուսնությունը, այսինքն կայսեր խնամիանալը Հայոց թագավորի հետ 360 թ., Կոստանդիանոսը համարում է քաղաքական կարեւոր, գործուն քայլ, եւ Արշակին կանչում է Կապադովկիայի Կեսարիա մայրաքաղաքը. «Constantius adscitum Arsacem Armeniae regem summaque liberalitate susceptum praemonebat et hortabatur, ut nobis amicus esse perseveraret et fidus, audiebat enim **saepius** eum temptatum a rege Persarum fallaciis et minis et dolis, ut Romanorum societate posthabita suis rationibus stringeretur²⁸⁶. qui crebro adiurans animam potius posse amittere quam sententiam, muneratus cum comitibus, quos duxerat, redit ad regnum nihil ausus temerare postea promissorum, obligatus gratiarum multiplici nexu Constantio, inter quas illud potius excellebat quod Olympiada, Ablati filiam praefecti quondam praetoris, ei copulaverat coniugem, sponsam fratris sui Constantis»²⁸⁷:

*

* *

Արշակի եղբորորդու՝ Գնելի սպանությունը տեղի է ունեցել նավասարդի օրը (359 թ. օգոստոսի 29-ին), իսկ շատ չանցած թագավորը նրա այրիին՝ Փառանձեմին, կնության, ավելի ճիշտ հարճ է վերցնում, քանի որ Օլիմպիան նրան ժառանգ չէր պարգևել: Հազիվ թե Արշակը համարձակվեր, գոնե արտաքուստ քրիստոնեական մի երկրում, բացահայտ երկկնության դիմել, եւ հազիվ թե Կոստանդիանոսը այդ վիրավորանքը հանգիստ ընդուներ եւ Կեսարիայում՝ հանդիպման ժամանակ, թագավորից հաշիվ չպահանջեր: Այս մասին Ամմիանոսը շատ քիչ բան է հաղորդում: Իգուր չէ Հայր մարդպետը Փառանձեմին բողոքակցում²⁸⁸: Փավստոսի պատումը, ըստ որի Արշակը Օլիմպիային առաջարկություն է արել

միայն այն բանից հետո, երբ չի կարողացել նվաճել Փառանձեմի սիրտը (IV, ԺԵ, էջ 126, 20-35), անշուշտ առարկելի է եւ ժամանակագրական առումով անհնար: Փառանձեմը թագավորի համար ծնուն է որդի՝ Պապ անունով (էջ 126, 27-31): Սակայն բնավ չի բացառվում այն հնարավորությունը, որ նա լիներ Գնելի որդին՝ ծնված նրա մահից հետո: Չնայած Փառանձեմն ատում էր թագավորին, սակայն Օլիմպիա թագուհու հանդեպ տածում էր նախանձ եւ խանդ, ի վերջո վերացնում է նրան՝ հաղորդության հացին թույն խառնելով: Անհնար է, որ այս ոճիրը կատարված լինի Կոստանդիանոս կայսեր օրոք, այն տեղի է ունեցել հավանաբար Հուլիանոս կայսրի ժամանակ:

*
* *

Ըստ այդմ կարելի է վերականգնել 325-363 թթ. իրադարձությունների ժամանակագրական հետեւյալ աղյուսակը.

325 Նիկիայի ժողովը: Մասնակցությամբ՝ Ծովքի եպիսկոպոս Արիստակեսի (միջ. մեղ. Ռուստակ), Գրիգորի առաջնորդական գլխավոր տեղապահ ու Տարոնի քորեպիսկոպոս ՝Առլւտէց-ի (Վահրիճ)=Դանիել, եւ Հակոբ Մծբնացու:

335 Գրիգորիսի քարոզչությունը Մասքութների երկրում: Գրիգորիսի սպանությունը:

Մասքութների արշավանքը Հայաստան:

335 (շուրջ) Կոստանդիանոս կայսրի հաղթանակը պարսիկների հանդեպ Նարառայի մոտ:

Ընկնում է Նարսեհ արքայազնը²⁸⁹:

Դատաբենի դավաճանությունը: Առեստի ճակատամարտը: Բզնունյաց նախարարական տան սերիատումը (Փաւստոս, III, Ը, էջ 18, 31-20, 30):

Աղձնիքի Բակուր բղէշխի դավաճանությունը: Բղէշխի տոհմի սերիատումը (Փաւստոս, III, Թ, էջ 21):

335 սեպտ. 18-Արքաների եւ պոնտական ժողովուրդների արքա Հաննիքալ:

336 գարուն-Մասքութների բնաջնջումը:

338 Պարսիկների պատերազմը հայերի դեմ:

Ընկնում է Վաչե սպարապետը (Փաւստոս, III, էջ 28, 28):

338 (շուրջ) Խոսրով Երկրորդ թագավորի եւ Վրթանես կաթողիկոսի մահը (Փավստոս, III, ԺԱ, էջ 28, 29-29, 10):

341 Պարսիկ իմաստունի (Ափրահատ) ճանապարհորդությունը Ռշտունիք²⁹⁰

Ընձաքիարսի երկրաշարժը (Փաւստոս, III, Ժ, էջ 24, 1-25, 14):

356 (ամենաուշը) Սեբաստիայի Եւստաթիոս եպիսկոպոսը՝ Հայաստանում, Պոնտոսում եւ Կապադովկիայում միաբանության հիմնադիր եւ առաջին հիվանդանոցի ստեղծող²⁹¹:

336 (335 ?) Արշակը դառնում է թագավոր, իսկ Ներսեսը կաթողիկոս է օծվում Կեսարիայում Դանիել քորեպիսկոպոսի ձեռքով:

Պարսիկների արշավանքը Հայաստան եւ Միջագետք: Ammian., 15, 13, 4, 16, 9, 1:

357 Բագրեւանդի եւ Արշարունիքի Խաղ եպիսկոպոս:

Արշակի նվիրակությունը՝ Ներսեսի գլխավորությամբ, Կոստանդիանոս կայսրի մոտ: Դաշինք երկու տիրակալների միջեւ: Արշակն ամուսնանում է Օլիմպիայի հետ: Ներսեսը մնում է Հռոմեական կայսրությունում Եւստաթիոս Սեբաստացու մոտ ?:

Սմյունիայի երկրորդ ժողովը:

Անտիոքի ժողովը:

Հոկտեմբեր - Անկյուրիայի ժողովը:

357 (շուրջ) Բարսեղի վերադարձն Աթենքից:

358 Արշակավանի հիմնադրումը:

Ներսեսի վերադարձը:

Օգոստոսի 24 - երկրաշարժ: Նիկոմեդիայի ավերումը:

Արշակավանն ավերվում է երկրաշարժից:

Դաշինքի բանակցություններ Շապուրի եւ Արշակի միջեւ: Փաւստոս, IV, ԺԶ:

Պարսկական պատերազմի վերսկսում:

359 գարուն: Շապուրի առաջապահ ջոկատների կռիվը Մծբինի մոտ: Ammian., 18, 6, 8-7, 8: Փաւստոս, IV, Ի, էջ 134, 12-136, 7:

Դարձյալ դաշինքի բանակցություններ Շապուրի եւ Արշակի միջեւ, նույն տեղում, էջ 136, 3-139, 16:

Զիատայի գրավումը: Ammian., 19, 6, 1: Տիգրանակերտ ամրոցի նվաճումն ու ավերումը: Անգղ ամրոցի ապարդյուն պաշարումը: Դարանաղի Անի (Կամախ) ամրոցի գրավումը (Փաւստոս, IV, ԻԴ, էջ 145-148):

Ամիդի գրավումը:

Օգոստոսի 29 - Գնելի սպանությունը:

Արշակը հարձ է դարձնում գնելի այրիին՝ Փառանձեմին:

Ներսես կաթողիկոսը հեռանում է արքունիքից:

«Չունակն» օծվում է կաթողիկոս:

Սեպտեմբերի 27: Իսավրայում Սելեւկիայի ժողովի գումարումը:

360 Կեսարիայում Արշակի հանդիպումը Կոստանդիանոսի հետ:

Պարսիկները գրավում են Բեզաբդեն:

Պապի ծնունդը:

361 նոյ. 3: Կոստանդիանոսի մահը:

362 (նոյ. - դեկ. 361) Օլիմպիայի սպանությունը: Փառանձեմը թագուհի:

363 Հաշտություն հույների եւ պարսիկների միջեւ, Հայաստանի լքումը՝ Շապուրի եւ Արշակի միջեւ դաշինքի բանակցությունների խզումից (359) հինգ տարի անց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պանդխտին՝ պանդուխտ-ից «այցելու, սակավահող գյուղացի, օտարական», ածանցված հուն. *πανδόςχος* = *πανδόςχος*-ից «բոլոր օտարներից ընդունող, հյուրընկալող, *πανδοχεύς* = *πανδοχεύς* «պանդուկապետ»: Չկա Հյուլքմանի Arm. Gr. 370:

2 Երուս. **հառաչանօք** «**հառաչանքով**»:

3 Տիրապետել. GE Երուս. **տիրապետել**:

4 Վաղ. **գաւառապետս ի վերայ եօթն հարիւր քիմի հանապազ** տրք. 1. **գաւառանիստ տետուչս**, GE Եր. **գաւառատետուչս**, Դ-յուլորիէ «chorévêques»:

5 AGD Եր. «հինգ հարիւր»:

6 ABGDE Եր. «անդադար էին»:


7 Մատթ. Ուռն., Վաղարշապատ, 1898, էջ 153-154 = Երուս., 1869, էջ 183-185, էջ 127-128, թարգմ. Դ-յուլորիէ, *Bibliothèque historique arménienne*, Paris, 1858:

8 Արիստ., էջ 60, 18-22, Մատթ., 137, 20 եւ հաջ. = 115: Սամուէլ Անեցի, Վաղարշապատ, 1883, էջ 112 = թարգմ. Բրոսսէ, *Collection d' hist. armén.* II 449:

9 Տեր Պետրոսը ձեռնադրվել է հյց. 468 թ. = 17 մարտի 1019 - 15 մարտի 1020 (Արիստ. Լաստ., էջ 3): Նա 486 թ. (12 մարտի 1037 - 11 մարտի 1038) սկզբին ուղեւորվում է Վասպուրական, ուր մնում է չորս ամիս (Մատթեոսի բնագրում՝ էջ 75, տարի, ծ. թ.): Ապա կրկին վերադառնում է եւ շատ չանցած ձեռքակալվում Հովհաննես թագավորի հրամանով, մեկ տարի ու հինգ ամիս մնում բանտում: Կաթողիկոսի պաշտոնում առաջադրվում է Սանահինի վանքի վանահայր Դիոսկորոսը, սակայն մեկ տարի երկու ամիս անց Անիում՝ Աղվանից Հովսեփ կաթողիկոսի գլխավորած ժողովը պաշտոնանկ է անում նրան եւ կրկին հաստատում Պետրոսին (487 = 12 մարտի 1038 - 11 մարտի 1039, մոտավորապես 1038 ղեկտեմբեր): Մատթ. Ուռն., էջ 75-78 = 61-63, թարգմ. Դ-յուլորիէ: Գազիկ թագավորի արգելափակվելուց հետո Պետրոսը դավաճանաբար Անի ամրոցը հանձնում է Կոստանդին Մոնոմախ կայսրին: Այդ ծառայության ղիմաց նա մեծ պատիվներ է ստանում Անիի նոր բերդակալ Ասիտից (= *Μιχαήλ βέστης ὁ Ἰασίτης* Kedren. II 557, 23 եւ հաջ.), (Արիստակէս էջ 42, 32-43, 5, Մատթ. Ուռն., էջ 96-98, 493 = 10 մարտի 1044 - 9 մարտի 1045): Նոր զորահրամանատար Կամենասը ընդհակառակն *ὁ βέστης κατακάλων ὁ Κεκαυμένος* Անիի եւ Իբերիայի փոխարքա Kedren. II 574, 3-4 — Կամեն Մատթ. Ուռն., էջ 104, 2 = 84/ կաթողիկոսին ամբաստանելով Կոստանդին Մոնոմախ կայսեր մոտ, արտաքսում է նրան Արիւն՝ Կարինի գավառ: Կաթողիկոսը նոր էր տեղ հասել (Եպիփանից քիչ առաջ), երբ ոստիկանները ձեռքակալում են նրան եւ տանում Խաղտոյադիւն ամրոցը, այնտեղից էլ Ջատկի օրերին քրոջ որդու՝ Տեր Խաչիկի հետ հասցնում Կոստանդնուպոլիս՝ կայսրին: Արիստ., էջ 43-44, Մատթ. 104-107 = 85-86 498 = 9

մարտի 1049 - 8 մարտի 1050 (հյգ. 493 թվականը Արիստ. 43, 7 խաթարված է): Նույն թվականին հետեւում է սելջուկների սուկայի հարձակումը, որի ժամանակ Թեոդոսուպոլսի մոտ գտնվող Արեն փոքրիկ բնակավայրը գրավվում է սրի է մատնվում: Հմմտ. Lebeau XIV 349-358: Kedren. II 572, 17-581, 17: Արիստ. գլ. ԺԱ, ԺԲ, էջ 44-58: Մատթ., 102-103=83-84: Պետրոսը Կոստանդնուպոլսում մնում է չորս (ըստ Արիստ. էջ 60, 8 երեք) տարի եւ ապա ազատ արձակվում: Այնուհետեւ նախկին թագավոր Սենեքերիմի որդու՝ Ատոմի հրավերով գալիս է Սեբաստիա, ուր երկու տարի անց մահանում է: Մատթ. 107=87, Արիստ. էջ 60, 15: Ըստ Մատթ.՝ էջ 127=107. Պետրոսը մահացել է հյգ. 505թ.=7 մարտի 1056 - 6 մարտի 1056, այն նույն թվականին, երբ Իսահակ Կոմնենոսը գահից հրաժարվեց, եւ գահ բարձրացավ Կոստանդին X Դուկասը: Այս անցքը, սակայն, տեղի է ունեցել 1059 թ. նոյեմբերին կամ դեկտեմբերի սկզբին, եւ ըստ այդմ Պետրոսի մահը եւ Խաչիկի բարձրացումը կարող է եղած լինել միայն 1060 թ.: Դրա ապացույցը նրա հաջորդի՝ Տեր Խաչիկի (որը մահացել է 514 թ. = 5 մարտի 1065 - 4 մարտի 1066) հայրապետական աթոռին վեց տարի նստելն է (Մատթ., 137-138 = 115, 153 = 127), այսինքն՝ 1060-1065: Այսպիսով, Պետրոսը աթոռակալել է ոչ թե 42 (Մատթ. էջ 127, 17-107), այլ մոտ 41 տարի (1019-1060): Մատթ. էջ 7, 21= 6 ԴճԻ (420) պետք է. լինի ԴճՀ 470=16 մարտի 1021 - 15 մարտի 1022: Իրականում Գագիկ թագավորը կառավարել է հյգ. 438 թ.= 989/90 (Ստեփ. Աս., Գ 30) - 1018: Հովհաննես թագավորի եւ Պետրոս կաթողիկոսի գահակալությունը (Մատթ., էջ 10, 6=8) մի քանի տարով հետ է տարված:

10 Պետրոսը ըստ Բրոսսեի (Collection d' hist. armén. II p. 440 n. 4, 442 n. 4) Խաչիկ Առաջին կաթողիկոսի եղբայրն է: Ես չգիտեմ՝ ինչ աղբյուրից է քաղված այդ տվյալը. իմ ձեռքի տակ եղած աշխատություններում չկա այն: Եթե դա ճիշտ է, ապա կաթողիկոսների ծննդաբանությունը 10-րդ դարի կեսերից մինչև 11-րդ դարի կեսերը կունենա հետեւյալ տեսքը.



Խաչկիկից սկսվում է այսպես կոչված Պահլավունիների հարստությունը: Աննայի նախորդներ Տեր Թեոդորոսը (11 Հ.) եւ Տեր Եղիշեն (7 Հ.) եղբայրներ էին: Հովհաննես Վեցերորդ Դրասխանակերտցին՝ պատմիչը, ոչ միայն աշակերտը, այլեւ մոտիկ արյունակիցն էր իր նախորդի՝ Սեանի վանահայր Մաշտոցի, որ ծագումով Արագածոտն գավառի Եղվարդ ավանից եր:

11 Աբու-լ Ուսվար, Ապու-Սվար, Դվինի ամիրան Անիի Հովհաննես բազավորի (1018-1041) օրոք, Մատթ., էջ 10-11=9, **Դունացին**, որը կնության էր առել Դավիթ Անհողիի քրոջը, 492 ք.=1043/4, Արիւ. Լաստ. 42, 8, հմմտ. Մատթ. 93-96=76-78: **՝Առլիսփորի** *ὁ ἄρχων τοῦ Τιβίου καὶ τῆς περὶ τὸν Ἄραξην ποταμὸν Περσασμενίας* Kedren. II 558, 10-559, 3: 9-560, 17=Ապու-Սվար, Դվին քաղաքի տերը, Արիւ. 42, 36-43, 5 *κατεπάνω Μιχαὴ βέστης ὁ Ἰασίτης* օրոք 494=1045/6, Մատթ. 98=80, գորավար Կոնստանտինոս *ὁ τῆς μεγάλης, ἑταιρείας ἄρχων, εὐνοῦχος ἄνθρωπος, ἐκ Σαρακηῶν ἔλκων τὸ γένος καὶ τῷ βασιλεὶ ὑπηρετήσας πρὸ τῆς βασιλείας* օրոք Kedren. II 560, 20-561, 14, 6-16, Մատթ. 100=81 **Տելիարն** Teliar-n=հուն. *δέλεαρ* «խաչծ», 495-1046/47, *ὁ τοῦ Τιβίου τοπάρχης ὁ ἐχθρὸς τῆς Ῥωμανίας* Kekaumenos, Strategikon p. 26, 21, 29 . edd. Wasilevsky und Jernstedt. Petropoli 1896, Անիի եւ Իբերիայի *κατεπάνω-ի* օրոք *κατακαλῶν* *βέστης ὁ Κεκαυμένος* Kedren. II 560, 20, 574, 3-4, Արիւ. 43, 6, Մատթ. 104, 107 = 84, 87, 495, 498=1046/7-1049/50. **՝Առլիսփորի** *ὁ τοῦ Τιβίου ἄρχων* խախտում է Կոստանդին Ներքինու հետ կնքած պայմանագիրը: Նրա ղեմ ուղարկվեց նախկին քուրմ Նիկեփոր Ներքինին, որը ետ շարսելով նրան մինչեւ Երկաթյա կամուրջ եւ մինչեւ Գանձակ (Կանչճակուն) ստիպում է **՝Առլիսփորի**-ին պայմանագիրը նորացնել եւ եղբոր սղային **՝Արասթրան** *τὸν υἱὸν Φατλουμ τοῦ οἰκείου ἀδελφοῦ τοῦ τῆς Καντζακηῶν κατάρχοντος γῆς* պատանդ սալ, Kedren. II 593, 6 - 594, 3 1049 ք.: Գանձակի տեր Աբու Ուսվարը (ղեմնիկական Aspar-ի «հեծյալ» արաբական ձեռն է), հիջրի 446 (12 ապրիլի 1054 - 1 ապրիլի 1055) հպատակվում է սուլթան Տուղրի բեգին Ibn al Athir IX ε II, 2 Դվինի եւ Գանձակի տեր Ապու-Սվար հյգ. 504ք.= 1055/6, Արիւ. Լաստ. 73: **ابو اسوار شاور** Աբու Ուսվար Շավուր արձանագրություն հիջրի 455=1063:

12 Տե՛ս հեղինակի Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919, Tempelverlag, էջ 35 եւ 71-74, ծնթ. 23 եւ 24:

